
ԿՈՍԻՏԱՍ

1





ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՕՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСКУССТВ

КОМИТАС

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

том первый

СОЛЬНЫЕ ПЕСНИ

Редакция
Р. А. Атаяна



АрмгосиЗдат

Ереван 1960

ԿՈՄԻՏԱՍ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

առաջին հատոր

ՄԵՆԵՐԳԵՐ

Խմբագրությունն
Ռ.Ա. Աթայանի



Հայպետհրատ

Երևան *1960*



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ
1949 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի
ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ


ПЕЧАТАЕТСЯ
НА ОСНОВАНИИ ПОСТАНОВЛЕНИЯ
СОВЕТА МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР
ОТ 26 СЕНТЯБРЯ 1949 Г.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

ԱԹԱՅԱՆ Ռ. Ա.
ԱՂԱՅԱՆ Մ. Ղ.
ԹԱՍՊԱՐՅԱՆ Ս. Գ.
ԿՈՒՇՆԱՐՅԱՆ Ք. Ս.
ՄՈՒՐԱԴՅԱՆ Մ. Հ.

АТАЯН Р. А.
АГАЯН М. Л.
ГАСПАРЯН С. Г.
КУШНАРЯН Х. С.
МУРАДЯН М. О.

Ձևավորումը Ռ. ԲԵԴՐՈՍՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Կոմիտասի երաժշտական ստեղծագործության և երաժշտագիտական ժառանգության համահավաք տեքստի հրատարակությունը ձեռնարկվում է առաջին անգամ: Մինչև այժմ եղել են բավմաթիվ առանձին հրատարակություններ, որոնք ընդգրկել են մեծանուն կոմպոզիտորի ժառանգության այս կամ այն արժեքավոր հատվածը միայն:

Կոմիտասի երկերի ակադեմիական առաջին բավմահատորյակի հաջող իրագործումը կապված է մեծ դժվարությունների հետ: Կոմիտասի կյանքի եղերական վախճանը մեզ վրկել է նրա ժառանգության շատ արժեքներից, որոնց մի մասն անհետ կորել է, իսկ մի մասն էլ դեռ գըտնըվում է տարբեր անհատների մոտ՝ ցրված աշխարհի վանական կողմերում:

Սովետական Հայաստանի կառավարության և Գիտությունների ակադեմիայի կողմից ձեռք առնված միջոցների շնորհիվ վերջին տարիներս հնարավոր դարձավ Երևանում կենտրոնացնել Կոմիտասի ժառանգության զգալի մասը: Այդ գործում առանձնակի նշանակություն ունեցավ Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի և անձամբ՝ Կոմիտասի աշակերտուհի օրիորդ Մարգարիտ Բաբայանի, Կիլիկիայի կաթողիկոս, հանգուցյալ Գ. Հովսեփյանի և այլոց աջակցությունը, որոնց շնորհիվ Երևան փոխադրվեցին շատ արժեքավոր ձեռագիր ու տպագիր նյութեր: Անշուշտ, Կոմիտասի ժառանգության հավաքումը դեռևս ավարտված չէ և մեծ ջանքեր են պահանջվելու առաջիկայում, որպեսզի որքան կարելի է շատ նյութեր փրկվեն կորստից ու կենտրոնացվեն Երևանի Կոմիտասյան արխիվում, որը խնամքով պահվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում: Սակայն արդեն այժմ նոր ու արժեքավոր այնքան նյութ է հավաքված, որ Սովետական Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ համարեց հանձնարարել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային՝ նախապատրաստել և հրատարակել Կոմիտասի երկերի այս բավմահատորյակը, հնարավորին չափ լրիվ ընդգրկելով հեղինակի գեղարվեստական ստեղծագործությունը, երաժըշտական-ազգագրական ու երաժշտագիտական ժառանգությունը, ինչպես և նրա նամակները, անավարտ սևագիր ստեղծագործություններն ու հետազոտական բնույթի նշումները:

Ձեռնարկելով ներկա հրատարակության նախապատրաստմանն ու իրագործմանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը լիահույս է, որ կհանդիպի հայ երաժշտական կուլտուրայի վարգացմանը նախանձախնդիր բայրենասեր բոլոր անձանց բավմակողմանի աջակցությանը, գիտակցելով, որ այս գործը բացառիկ իրադարձություն է հայ ժողովրդի կուլտուրական կյանքում:

ОТ ИНСТИТУТА ИСКУССТВ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Издание собрания сочинений Комитаса осуществляется впервые. До настоящего времени произведения и музыковедческие работы Комитаса публиковались в виде отдельных выпусков, охватывающих лишь ту или другую часть богатого наследия крупнейшего армянского композитора.

Успешное осуществление данного многотомного академического издания связано со значительными трудностями. Трагические обстоятельства, оборвавшие творческую жизнь Комитаса, лишили нас многих ценностей его наследия, часть которого безвозвратно потеряна, другая же все еще рассеяна по разным странам и находится у частных лиц.

Благодаря мероприятиям, предпринятым Правительством Советской Армении и АН Арм. ССР за последние годы, стало возможным сконцентрировать в Ереване значительное количество рукописей Комитаса. В этом деле большое содействие оказали Парижский Комитасовский комитет, в частности, активная деятельница Комитета, ученица Комитаса Маргарит Бабаян, Киликийский католикос ныне покойный Гарегин Овсепян и ряд других лиц, стараниями которых было перевезено в Ереван много ценнейших рукописных и печатных материалов.

Собирание всего сохранившегося наследия Комитаса, несомненно, еще далеко не завершено и в будущем потребует немалых усилий, чтобы спасти по возможности больше материалов и сконцентрировать их в Ереванском комитасовском архиве, который бережно хранится в Музее литературы и искусств АН Арм. ССР. Однако, учитывая наличие уже накопленного материала, Правительство Советской Армении сочло необходимым поручить АН Арм. ССР подготовить выпуск первого собрания сочинений, которое должно по возможности шире охватить музыкальное творчество композитора, его этнографические и музыковедческие труды, письма, а также незавершенные творческие и исследовательские работы.

Взявшись за подготовку и осуществление настоящего издания, Институт искусств АН Арм. ССР надеется, что встретит всестороннюю поддержку всех лиц, заинтересованных в развитии армянского музыкального искусства и могущих помочь этому делу, которое является исключительно важным событием в культурной жизни армянского народа.

Կոմիտասի ինքնագիրը

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Կոմիտասի երկերի ժողովածուի առաջին հատորն ընդգրկում է կոմպոզիտորի մեներգերը։

Ինչպես հայտնի է, Կոմիտասի վոկալ ստեղծագործությունների նյութը գերազանցապես վերցված է ժողովրդական սկզբնաղբյուրից։ Իրենց մեծ մասով դրանք միաստորեն բուն ժողովրդական երգերի մշակումներ են, կատարված ժողովրդի ստեղծագործության կենսական ուժի վառ զգացումով և ազգային երաժշտության հատկանիշների խոր իմացությամբ։ Այդ մշակումները նաև աչքի են ընկնում ժողովրդական հորինվածքի վրա կոմպոզիտորի ստեղծագործական զորեղ ներգործությամբ և միաժամանակ իրենց դասական պարզությամբ ու կատարելությամբ։

Այս հատորում ամփոփված նյութի հիմնական մասը Կոմիտասի այն մեներգերն են, որ կապված են հայկական գյուղական ֆոլկլորի հետ, գեղարվեստորեն ընդհանրացնում և մեծարում են հայ գյուղի մարդկանց ու բնության ջինջ և անարատ, կոմպոզիտորի համար հավերժ գրավիչ կերպարները։ Այդ մեներգերն իրենց ժանրի և թեմատիկայի տեսակետից բազմազան են։

Նշանակալի տեղ են գրավում լիրիկական երգերն ու պարերգերը, որոնց մեջ առանձնապես լայնորեն ներկայացված է սիրային լիրիկան իր անվերջ բազմապիսի, նրբին երանգներով («Քելե, քելե», «Քելեր, ցոլեր», «Դարուն ա», «Ջինար ես», «Հաբրբան», «Հոյ, Նազան իմ» և այլն)։ Սիրային թեմայով երգերի կողքին քիչ չեն նաև հայ աշխատավոր գյուղացիության մինչսովետական ժամանակաշրջանի ծանր կյանքը պատկերող, սոցիալական թեմայով երգերը («Հոյ արեք», «Միրանի ծառ», «Անտունի» և այլն), որոնցից մի քանիսը հայ պանդխտի խռովահույզ վիճակն արտահայտող ստեղծագործություններ են («Անտունի»-ից բացի նաև «Կանչե, կռունկ», «Ալագյազ բարձր սարին», «Կռունկ» և այլն)։ Այդ բոլորից բացի հատորում կան նաև պատմա-էպիկական բովանդակության («Մոկաց Միրզա»), կենցաղային («Օրօր») և այլ երգեր ևս։ Ընդհանուր առմամբ հայ գեղջուկի ստեղծագործությունից քաղված Կոմիտասի այս մեներգերն ունկնդրին են ներկայացնում ռեալիստական արվեստի մեծ ուժով և խորաթափանցությամբ գծագրված կերպարների ստվար մի շարք, որտեղ անկեղծ և անմիջական կերպով երևան են բերված մարդկային բազմահարուստ հույզեր և ապրումներ։

Կոմիտասի մեներգերը տարբեր ժամանակ և տարբեր վայրերում են հրատարակվել։ Մի մասը տպագրվել է դեռևս կոմպոզիտորի գործունեության տարիներին «Հայ քնար» և «Հայ գեղջուկ երգեր» ժողովածուներում կամ պարբերական մամուլում։ Որոշ մեներգեր հեղինակի հիվանդության ընթացքում կամ մահից հետո առանձին տետրերով լույս են տեսել Փարիզում, երկու երգ առաջին անգամ տպագրվել են Մոսկվայում։ Մեներգերի նոր հրատարակությանը ձեռնարկելիս հատորը հնարավորին չափ լրիվ կազմելու նպատակով նախ և առաջ հավաքված ու համեմատված են եղած բոլոր տպագրությունները։ Որպես հիմք ընդունվել են հետևյալ հրատարակությունները.

1. «Հայ ինաւ». Հավաքածու գեղջուկ երգերի. գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Փարիզ. 1907։
2. «Կաճավի երգը». Ժողովրդական բանաստեղծություն. մշակեց Հովհ. Թումանյան, ձայնագրեց Կոմիտաս վարդապետ։ Հրատարակություն «Հասկեր» ամսագրի, Թիֆլիս, 1908։
3. «Ձեմ կրնա». Հայ ժողովրդական պարերգ. գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ «Գեղարվեստ» ամսագիր, № 1, էջ 101. Թիֆլիս, 1908։
4. «Շողեր». Հայ գեղջուկ երգ. գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ «Մուզիկա» ամսագիր (Հունարեն լեզվով), № 5, էջ 147. Կ. Պոլիս, 1912։
5. «Հայ գեղջուկ երգեր» №№ 13—22. գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Լայպցիգ, 1912*։
6. «Հայ ժողովրդական երաժշտություն». Նոր շարք. գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Փարիզ. Տետր Բ—1925
   Տետր Դ.—1928
   Տետր Ե.—1930
   Տետր է.—1937

---

* Ինչպես «Հայ քնար»-ի, այնպես էլ «Հայ գեղջուկ երգեր»-ի առաջին տպագրությունները անթվակիր են, դրանց լույս ընծայման ժամանակը որոշվում է կողմնակի տվյալներով։ Մասնավորապես «Հայ գեղջուկ երգեր»-ի երկու տետրի մասին Մարգարիտ Բաբայանին ուղղված Կոմիտասի նամակում գրված է. «Երգերն տպագրվում են Breitkopf und Härtel-ի մոտ և մեկ կամ երկու ամսից կելնեն մաս-մաս» (1911 թ. Կ. Պոլիս։ Տե՛ս «Մշակույթ» պարբերական, № 3—4, էջ 163, Փարիզ, 1935), և «...Դեռ երգարահները Leipzig-ից չեմ ստացել, քանի տպված ու պատրաստ են միանգամայն» (1912, 15/ԺԲ. Կ. Պոլիս։ Տե՛ս Կոմիտասի նամակի ընդօրինակումը Մ. Բաբայանի կողմից, ձեռագիր Հայկ. ՍՍՌ ԳԱ Արվեստի ինստիտուտում)։

7. «Հայ ժողովրդական երգեր». գրի առավ և դաշնակեց Կոմիտաս։
Երևան. Առաջին սերիա, տետրակ Ա—1932
Երկրորդ սերիա, տետրակ Ա—1953

8. Կոմիտաս. «Ժողովրդական երգեր».
Առաջին սերիա (առանձնատիպ). Կ. Պոլիս. 1935—1936։

9. Կոմիտաս. «Մեներգեր դաշնամուրի ևվագակցությամբ» (խմբագրությամբ Խ. Վ. Քոջոյանի)։
Մոսկվա—Լենինգրադ. 1939։

Մեներգերի քանակի տեսակետից բերված հրատարակությունները հետևյալ պատկերն են ներկայացնում.
«Հայ քնար»-ը ընդգրկում է . . . 5 մեներգ,
«Հայ գեղչուկ երգեր»-ը՝ 10,
Պարբերական մամուլում տպագրված է . . 3,
«Հայ ժողովրդական երաժշտության» 4 տետրում՝ 18,
Երևանի 1932—35 թթ. հրատարակությամբ տպագրվել է 25,
Կ. Պոլսի 1935—36 թթ. հրատարակությամբ՝ . 5,
Մոսկվա—Լենինգրադի հրատարակությամբ՝ .27։

Համեմատությունից պարզվեց, որ այդ բոլոր հրատարակություններում ընդգրկված են ձայնի և դաշնամուրի համար գրված՝ Կոմիտասի 38 տարբեր երգեր, որոնք և զետեղված են այս հատորում (36-ը մեներգ են, 2-ը գրված են տենորի և սոպրանոյի փոխեփոխ կատարման համար)։

Տպագրված երգերի համեմատությունից բացի, մանրամասն կերպով վերանայված և ուսումնասիրված են Երևանի Կոմիտասյան արխիվում պահվող մեներգերի ձեռագրերը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարան)։ Դրա հետևանքով հնարավոր է գտնվել եղած անտիպ մեներգերից ևս երկու երգ մտցնել ներկա հրատարակության մեջ։ Այսպիսով տպագրվող երգերի թիվը ստացվել է 40, ուստի սույն հատորը հանդիսանում է Կոմիտասի մեներգերի մինչև այժմ հրատարակված ժողովածուներից առավել լիակատարը*։

Հատորի գլխավոր մասը կազմում են այն երգերը, որոնց գեղարվեստական մշակումն ու հարդարումը հեղինակի կողմից լիովին ավարտված են եղել։ Դրանք են «Հայ քնար» և «Հայ գեղչուկ երգեր» ժողովածուների մեներգերը և մի քանի ուրիշներ։

Դրանց հետ մեկտեղ կան մի շարք մեներգեր, որոնք լիովին ավարտված գործեր չեն, որոշ չափով ուրվագծի բնույթ են կրում։ Օրինակ, այդպիսի երգեր են՝ «Տուն արի», «Գութանը հաց եմ բերում», «Լուսնակը սարի տակինն», «Էս գիշեր լուսնակ գիշեր», «Մոկաց Միրզա», «Օրոր» և այլն։ Սրանցից վերջին երկուսը հատկապես աչքի են ընկնում իրենց թերի մշակվածությամբ, քանի որ նրանցում միայն ներդաշնակման նախնական նշումներ են կատարված։ Ամբողջացված ստեղծագործություն չի կարող համարվել նաև Կոմիտասի ձայնագրած՝ երաժշտությամբ բարձրարժեք «Ողբերգ»-ի մշակումը, որի գրական տեքստում կերպարի գեղարվեստական ընդհանրացում չկա։

Այդ մշակումները Կոմիտասն ինքը չի հրատարակել։ Նկատի ունենալով իր ստեղծագործության նկատմամբ կոմպոզիտորի չափազանց խստապահանջ ու բծախնդիր վերաբերմունքը, պետք է ենթադրել, որ նա մեկից ավելի անգամ դեռևս կանդրադառնար դրանց, որպեսզի նախքան հրապարակ հանելը վերջնական տեսքի բերեր։ Սակայն իրենց ուրվագծային վիճակով հանդերձ, այդ կարգի մշակումներն ևս մեծ մասամբ ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեն, դրանցում դրսևորված են կոմպոզիտորի նուրբ ճաշակը, նրա մշտապես հետաքրքիր ու արժեքավոր մտահղացումները, ստեղծագործական անհատականության այս կամ այն գծերը. ուստի դրանք ևս մտցված են Կոմիտասի երկերի ժողովածուի այս հատորի մեջ։

Հատորում ընդգրկված մեներգերի մեջ առանձնանում են նաև «Ախ, մարալ ջան»-ը, որն ամբողջացած գեղարվեստական ստեղծագործություն է, բայց ներդաշնակության ոճով զգալի տարբերվում է կոմպոզիտորի մյուս մեներգերից, և հանրածանոթ «Սիթեռնակ»-ը, որ քաղաքային երգ է։ Այս երգերի մշակումը Կոմիտասի ուսումնառության տարիներին է կատարված, ուստի նրա ստեղծագործական ուղին պարզաբանելու տեսակետից ևս որոշակի հետաքրքրություն ունի։ Դրանց համեմատությունն ավելի ուշ գրված ստեղծագործությունների հետ ցույց է տալիս, որ Կոմիտասի կոմպոզիտորական ոճը, նրա հասուն ստեղծագործական դեմքը վերջնականապես ձևավորվել է 1900 թվին Հայաստան վերադառնալուց հետո, երբ նա ստեղծում էր «Հայ քնար» ժողովածուն։

Ներկա հրատարակության համար ստուգված, իսկ որոշ դեպքերում նաև ճշտված և ուղղված է մեներգերի երաժշտական տեքստը։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մինչև այժմ կատարված հրատարակությունների մեծ մասում կան մանր կամ խոշոր թերություններ՝ ակնհայտ սխալներ, անճշտություններ, երբեմն խմբագրողի կողմից կատարված աղավաղումներ, վրիպակներ (տարբեր հրատարակություններում եղած թերությունները առանձին, կարևոր դեպքերում նշված են երգերի ծանոթագրություններում)։

Հրատարակության պատրաստված հատորում այդ թերություններն ու աղավաղումները հնարավոր չափով

---

* Այդ թվով չի սպառվում Կոմիտասի մշակած մեներգերի քանակը։ Ժամանակին տեղի ունեցած նրա համերգների նկարագրություններից և պահպանված ծրագրերից դատելով գեղչկական ֆոլկլորի հետ կապված որոշ մեներգեր դեռևս չեն հայտնաբերված։ Այդպիսիները հայտնաբերվելու դեպքում լրացուցիչ կերպով կմտցվեն նրկերի ժողովածուի հետագա հատորներից մեկի մեջ։

ուղղելու համար հիմք են ծառայել նախ՝ Կոմիտասի նղած ձեռագրերը, ապա՝ նրա գործունեության տարինեերին կատարված տպագրությունները։ Այդ հարցում որոշ նշանակություն են ունեցել նաև Կոմիտասի երգերի մյուս հրատարակությունները։

Երևանի Կոմիտասյան արխիվում կան այս հատորի մեջ ընդգրկված մեներգերի մեծագույն մասի ձեռագիր օրինակները, որոշ երգերի բնագրեր պահպանվել են մի քանի տարբերակով*։ Ճիշտ է, եղած բնագրերի մեջ ավարտված և մաքուր գրված մեներգերը համեմատաբար սակավ են։ Տպագրվող երգերի ձեռագիր օրինակների մեծ մասը սևագրություններ են, որոնք հեղինակի ձեռքով կատարված հաճախ բազմաթիվ ուղղումներ և փոփոխություններ են կրում։ Չնայած դրան, հիշյալ ձեռագրերը Կոմիտասի որոշ մեներգերի երաժշտական տեքստն ուղղելու, ինչպես նաև մշակման նոր տարբերակներ կամ դեռևս անտիպ մնացած երգեր հայտնաբերելու գործում մեծ օժանդակություն են ցույց տվել։

Ձեռագրերից առանձնապես պետք է նշել «Միրանի ծառ» մեներգի օրինակները, ապա 1911 թվի հուլիս-օգոստոսին գրված տետրը (ձեռ. № 399)։ Այս վերջինը «Հայ քնար»-ից հետո Կոմիտասի մեներգերի երկրորդ խոշոր ժողովածուն է եղել և իր մեջ ամփոփում է 26 մեներգ**։ Ինչ-ինչ պատճառներով նպատակահարմար չգտնելով ստվար ժողովածուն միանգամից տպագրության ներկայացնելը, Կոմիտասն ընտրել է այդտեղից 8 երգ, միացրել 2 այլ մեներգեր և «Հայ գեղջուկ երգեր» անվան տակ հրատարակել է 10 երգերի հայտնի տետրը։ 1911 թվի ձեռագիր ժողովածուի մեջ պահպանված մնացած երգերը (բացի «Էս գիշեր, լուսնակ գիշեր» և «Անձրևն եկավ» մեներգերից) հետագայում «Հայ ժողովրդական երաժշտություն» շարքով լույս է ընծայել Կոմիտասյան հանձնաժողովը։

Կոմիտասի մեներգերի վերը նշված աղբյուրների թվում ոչ պակաս կարևոր են «Հայ քնար» և «Հայ գեղջուկ երգեր» ժողովածուները։ Տպագրված լինելով կոմպոզիտորի անմիջական հսկողության տակ, այդ ժողովածուները իսկական հեղինակային տեքստի արժեք ունեն, դրանց մեջ ընդգրկված երգերը (եթե չհաշվենք տպագրական մի քանի մանր թերություններ) խմբագրական տեսակետից Կոմիտասի կողմից մշակված են ամենայն մանրամասնությամբ։ Դա առանձնապես վերաբերում է «Հայ քնար»-ին, որի մեներգերի ձեռագրերը (բացի «Անտունի»-ի մի նախնական ուրվագծից), ի դեպ, արխիվում չկան։ Ինչ վերաբերում է «Հայ գեղջուկ երգեր»-ին, որոնց ձեռագիր նմուշները, ինչպես ասացինք, գրեթե լրիվ առկա են արխիվում, ապա այս երգերի տպագրված և ձեռագիր օրինակների մեջ որոշ տարբերություն կա, որը սակայն տպագրության պրոցեսի հետ չի կապված, այլ երգերի մշակման վերջնական համարված վարիանտներն ունենալուց հետո, տպագրության ներկայացնելու ընթացքում իսկ, Կոմիտասը դարձյալ աշխատել, բարեփոխել է դրանք*։ Այդպիսի դեպքում «Հայ գեղջուկ երգեր»-ի որպես իսկական հեղինակային տեքստի արժեքն ավելի ակնառու է դառնում։

1925—1937 թվականներին Փարիզում հրատարակված «Հայ ժողովրդական երաժշտություն» ժողովածուի մեներգեր պարունակող տետրերը մեզ մոտ երկար ժամանակի ընթացքում Կոմիտասի մի քանի երգերի (ինչպես, օրինակ, «Միրանի ծառ», «Չինար ես», «Էս առուն», «Ալագյազ բարձր սարին» և այլն) միակ աղբյուրն են հանդիսացել և այդպիսով գործնականում խոշոր դեր են կատարել։ Այժմ ձեռքի տակ ունենալով այդ տետրերում ընդգրկված գրեթե բոլոր (բացի «Մոկաց Միրզա» և «Օրոր») երգերի հեղինակային ձեռագրերը, մենք հնարավորություն ենք ստացել ուղղել և ճշտել դրանցից մի քանիսի երաժշտական տեքստում արդեն նշված կարևոր սխալներն ու թերությունները։ Սակայն այդ երգերի բնագրերն իրենք պակասություններ ունեն, օրինակ, շատ դեպքերում տեմպի ցուցիչն ու երանգանիշերն իսպառ բացակայում են։ Ուստի «Հայ ժողովրդական երաժշտության» խմբագիր կոմպոզիտոր Վ. Սարգսյանը դրանց մեջ որոշ մանր հավելումներ է կատարել, որոնք ներկա հրատարակության մեջ հիմնականում պահպանված են։

Տարբեր աղբյուրները համեմատելիս, բուն կոմիտասյան տեքստը ճշտորեն վերարտադրելու նպատակով, անհրաժեշտ համարվեց նախորդ որոշ հրատարակությունների համեմատությամբ վերականգնել և նոր հրատարակության մեջ պահպանել երգերի այնպիսի շարադրանքը, որպիսին կատարված է կոմպոզիտորի ձեռքով մի քանի ձեռագրերում և հատկապես «Հայ քնար» ու «Հայ գեղջուկ երգեր» ժողովածուներում։

Հիշյալ ժողովածուներում և ձեռագրերում Կոմիտասի շարադրանքը մի շարք առանձնահատկություններ ունի։ Այդ առանձնահատկությունները հանդես են եկել երաժշտական մետրի գրանցման, բանալիի նշանների, լիգաների, կատարումը բնորոշող տերմինների և նվագակցության պեդալի նշման մեջ։ Հենց այս կետե-

---

* Երևանի Կոմիտասյան արխիվի ձեռագրային ֆոնդը նշանակալից չափով հարստացվեց 1955 թվականին։

** Այդ երգերն են՝ 1. Շողեր ջան, 2. Ամպել ա կամար-կամար, 3. Ես աղջիկ եմ, 4. Երվում եմ, 5. Ամպել ա, ձյուն չի գալիս (Տուն արի), 6. Հոյ Նազան իմ, 7. Կանչե կռունկ, 8. Ալ այլուղս, 9. Ալագյազ բարձր սարին, 10. (չի պահպանվել), 11. Ես սարեն կուգայի (պահպանվել են վերջին տակտերը միայն), 12. Չինար ես, 13. Չինչ ու չինչ, 14. Քելե, քելե, 15. Սար, սար, 16. Դուքանը հաց եմ բերում, 17. Էս առուն, 18. Ողբերգ (Վարդևանն ելավ դաշը), 19. Ալագյազ սարն ամպել է, 20. Մեր դռանը խնկի ծառ, 21. Անձրևն եկավ, 22. Լուսնակը սարի տակին, 23. Էս գիշեր լուսնակ գիշեր, 24. Ջեմ, չեմ, 25. Նլ, նլ, նլի պարենք և Ջեմ ու չեմ, չեմ կրնա խաղալ, 26, Արորն ու տատրակը (24, 25 և 26-րդ երգերից կան միայն վերնագրերը)։

րում էլ վերը թված որոշ հրատարակություններում անհիմն փոփոխություններ են կատարվել, որի հետևանքով հեղինակային տեքստն այս կամ այն չափով աղավաղվել է։

Որո՞նք են այդ առանձնահատկությունները.

ա. Երաժշտական մետրի զրանցումը։ *Մի շարք երգերի մեջ Կոմիտասը գործ է ածել երկար և կարճ տակտագծեր։ Այդ մասին «Հայ քնար»-ի առաջաբանում նա գրում է. «Տրոհակները ցույց են տալիս միայն տաղաչափական միություն և ոտք»։*

Հատկացնելով Կոմիտասի դիտողությունը բանաստեղծական տեքստին, տեսնում ենք, որ երկար տակտագծերը մեծ մասամբ սահմանազատում են համեմատական խոշոր տաղաչափական միությունները (բանաստեղծական տողերը), իսկ կարճ գծերը ցույց են տալիս տաղաչափական ոտքեր։ Սակայն, բնականաբար, բանաստեղծական տեքստի տրոհությանը զուգահեռ, երկար և կարճ տակտագծերը համարյա միշտ ցույց են տալիս նաև երաժշտական տեքստի տրոհումը, իսկ մի քանի դեպքում, ինչպես, օրինակ՝ «Կանչէ, կռունկ», «Անտունի» և այլ երգերում, դրանք վերաբերում են բացառապես երաժշտական տեքստին։


Երաժշտական տեքստի տրոհության տեսակետից ևս երկար տակտագծերում ամփոփված են մետրական համեմատաբար խոշոր միավորումներ, այն է՝ բարդ տակտեր կամ երաժշտական ֆրազի հետ համընկնող համեմատական չափով ավարտված կառուցումներ, իսկ կարճ գծերով ցույց են տրված դրանց մասերը։

Անհրաժեշտ է նշել, որ երկար տակտագծերը միաժամանակ համընկնում են ուժեղ տակտերի, իսկ կարճ գծերը՝ թույլ տակտերի սկզբի հետ։ Հետևաբար տեքստում այդ տակտագծերը ցույց են տալիս նաև ուժեղ և թույլ տակտերի հաջորդականությունը, իսկ հայտնի է, որ այդ ուժեղ և թույլ տակտերը յուրաքանչյուր ժողովրդական երգի մեջ մի առանձնահատուկ դասավորություն են ունենում։

Այս բոլորից պարզ է դառնում, որ ժողովրդական մելոդիաների կառուցվածքը, նրանց մետրական առանձնահատկությունները ճիշտ պատկերացնելու համար Կոմիտասի կատարած առանձնահատուկ տակտաբաժանումը կարևոր նշանակություն ունի։ Բացի դրանից, հիշյալ երկար և կարճ տակտագծերը որոշակի նշանակություն ունեն նաև երգի կատարման, հատկապես ֆրազավորման համար։

բ. Բանալիի նշանները։ Շատ դեպքերում Կոմիտասը յուրովի ձևով է դրել բանալիի նշանները։ Այսպես, օրինակ՝ «Քելեր, ցոլեր» երգում բանալիի մոտ դրված է դիեզ և բեմոլ, «Դարուն ա» երգը, չնայած ներդաշնակված է դո մինորում, բայց բանալիի մոտ ունի ոչ թե 3, այլ 2 բեմոլ և այլն։

Բանալիի նշանները դնելիս Կոմիտասը մեծ մասամբ ելնում է ժողովրդական երգի լադային կառուցվածքից։ Տվյալ դեպքում «Քելեր, ցոլեր»-ի լադի հընչյունաշարը հետևյալն է.



Այստեղ տոնիկան լա-ն է։ Քանի որ լադը բնորոշ է I աստիճանի վրա կառուցված «հարմոնիկ» քառալարով, ուստի սի-բեմոլ և դո-դիեզ հնչյունները այդ լադի հնչյունաշարի ոչ թե ձևափոխված, այլ բնական աստիճաններ են։ Պարզ է, որ հենց այդ պատճառով Կոմիտասը բանալիի մոտ դրել է թե՛ սի-բեմոլ և թե՛ դո-դիեզ։ Նույն սկզբունքով բանալիի սի-բեմոլ և դո-դիեզը դրված է նաև «Կռունկ» երգում։

Ժողովրդական երաժշտության լադային հատկանիշներն ընդգծելու ձգտումով պետք է բացատրել նաև լա տոնայնության մեջ գտնվող «Հաբրբան» և «Քելե, քելե» մինոր երգերի բանալիում Կոմիտասի նշած ֆա-դիեզները, «Կանչէ, կռունկ»-ի սի-դիեզը (տոնայնությունը ռե-դիեզ է), «Ալ այլուղ»-ի դո-դիեզը և այլն։ Վերջապես, «Դարուն ա» երգում նույնպես Կոմիտասը ոչ թե լա-բեմոլը, այլ լան է ընդունում որպես հնչյունաշարի բնական աստիճան և այդ ձևով ընդգծում է «աստորին մեդիանտային» դեպի վեր ուղղված ձգտող ֆունկցիան, որ հայկական ժողովրդական երաժշտության լադերի բնորոշ հատկություններից մեկն է։

Բանալիի նշանների այդպիսի գործածությունը սովորական չէ, ուստի, հավանաբար, հնարավոր թյուրիմացությունից խուսափելու նպատակով է, որ «Հայ քնար»-ի առաջաբանում Կոմիտասը գրում է, թե «բանալիի մոտ դրված կիսավար և կիսվեր նիշերը ամբողջ եղանակին են պատկանում»։

Անհրաժեշտ է նկատել, որ բանալիի նշանները դնելու Կոմիտասի կիրառած այդ ձևը կատարողի համար բարդություն չի ստեղծում, ընդհակառակը, օգնում է ավելի հեշտությամբ պատկերացնելու ստեղծագործության լադատոնայնությունը։

գ. Ֆրազավորման լիգաների գործածությունը։ Կոմիտասի երգերում ֆրազավորման լիգաները առանձնապես առատ են կիրառված։ Աչքի են ընկնում հատկապես այն դեպքերը, երբ լիգաներով միաժամանակ ցույց են տրված և՛ ամբողջական ֆրազները, և՛ նրանց մեջ ամփոփված առանձին մոտիվները։ Այսպիսի դեպքերում հաճախ մեկ ձայնանիշից դուրս են գալիս կամ նրան մոտենում են միանգամից երեք լիգա (տե՛ս «Հայ քնար»-ում՝ «Երկինքն ամպել է» 6-րդ տակտը, «Հայ գեղջուկ երգեր»-ում՝ «Քելեր, ցոլեր»-ի սկիզբը և այլն)։

Անշուշտ այդպիսի լիգաները ծանրաբեռնում են ֆակտուրան և երաժշտական տեքստը կարդալիս որոշակի անհարմարություն են ստեղծում։ Լիգաները նշանակելու հարցում Կոմիտասի համար բնորոշ է և այն, որ երբեմն շնչառության նշանով (՛) միմյանցից անջատված երկու ֆրազ միավորված են մեկ լիգայի տակ (տե՛ս «Հաբրբան»-ի 8—11 տակտերը)։

Կոմիտասի կողմից նշված ֆրազավորման կարևորությունը նկատի առնելով լիգաները նշանակելու նրա

սկզբունքն այստեղ պահպանված է։ Տեղ-տեղ միայն, դրության ձևը փոխելու միջոցով, թեթևացված է ֆակտուրայի ավելորդ բեռնվածությունը, բայց այդպիսի փոփոխություններն հետևանքով երաժշտական տեքստի ֆրազավորումը չի տուժել։

դ. Կատարումը բնորոշող տերմիններ։ Մի քանի երգերում առատորեն նշանակված այս տերմինները խոշոր չափով օգնում են ստեղծագործության ճշգրիտ և արտահայտիչ վերարտադրությանը։ Հեղինակն ինքը մեծ կարևորություն է տվել դրանց և երբեմն սովորականն, օտարազգի տերմիններին կից նշանակել է նաև հայերեն տերմիններ։

Առանձնահատկությունն այստեղ այն է, որ ոչ բոլոր դեպքերում օտար տերմիններին կից գրված հայերեն նշումները առաջինների բառացի թարգմանություններն են։ Որոշ դեպքերում դրանք ճշգրտում, կոնկրետացնում են օտարազգի տերմինների իմաստը, մի շարք այլ դեպքերում հայերեն նշումները կատարման ցույց տրված բնույթը լրացնող նոր իմաստ են պարունակում։ Մի քանի տեղ էլ միայն հայերեն տերմիններ են դրված։

Այդ բոլորը հաշվի առնելով, Կոմիտասի հայերեն նշումները, չնայած դրանք այս հատորի երգերի մի մասի մեջ կան միայն, նույնպես պահպանված են։ Դուրս են հանված այն նշումները միայն, որոնք վերաբերում են սոսկ դինամիկային, համարժեք են ընդունված սովորական նշումներին (օր. ուժ.=f, մ.=p և այլն) և դրված են դրանց զուգահեռ։

ե. Պեդալի գործածությունը։ Կոմիտասի հրատարակած ոչ բոլոր երգերում է պեդալ նշանակված։ Պեդալը ցույց է տրված այն դեպքերում միայն, երբ դա յուրահատուկ ձևով է գործածվում։

Յուրահատկությունն այն է, որ Կոմիտասի երգերում պեդալի միջոցով ստացվող հարմոնիան հաճախ դուրս է գտնվում տերցիային համահնչյունների և նրանց սովորական հարմոնիկ կապերի սահմաններից։ Բացի դրանից, Կոմիտասի կողմից նշանակված պեդալը երբեմն բավական երկարատև է և, դրա հետևանքով, այդ երաժշտությանն անծանոթ մարդու համար «անմաքուր» կարող է թվալ։

Երկու խոսք Կոմիտասի մեներգերի հարմոնիայի մասին։

Ժողովրդական երգի ներդաշնակությունը պետք է րխի այդ երգի լադահնտոնացիոն հատկություններից, հարազատ լինի ժողովրդական երաժշտության ոճին ու ոգուն։ Կոմիտասի մշակումներում դա նրա ստեղծագործական կարևոր սկզբունքներից մեկն է։ Մասնավորապես հարմոնիայի ասպարեզում Կոմիտասն այդ սկզբունքը իրագործել է հայկական ժողովրդական երաժշտության լադային բնույթը կրող մի ամբողջ շարք համահնչյունների՝ սպեցիֆիկ կոմիտասյան ակորդների և նրանց լադային հարմոնիկ կապերի կիրառության միջոցով։ Կոմիտասի մեներգերի ժողովրդական-լադային հարմոնիան՝ նրա ներդաշնակության ոճը բնորոշ և առանձին վերցրած ամեն մի ստեղծագործության ազգային բնույթը որոշող կարևոր միջոցներից մեկն է։

Ժողովրդական-լադային լինելու հետ մեկտեղ կոմիտասյան համահնչյուններն ունեն նաև յուրահատուկ գունագեղություն։ Գունագեղությանը մեծ չափով նպաստում է այն, որ այդ համահնչյունները հաճախ լայն են դասավորված, դրանց առանձին հնչյունները ստեղնաշարի զանազան մասերում հաջորդաբար հանդես գալով, երբեմն մեկը մյուսի վրա «կիտվելով», յուրօրինակ էֆեկտ են առաջացնում։

Կոմիտասի երգերում առանձնահատուկ ձևով կիրառված պեդալը նախ և առաջ ապահովում է այդպիսի լադային համահնչյունների ստանալը և նրանց գունեղությունը։ Դրանով է բացատրվում այն, որ որոշ երգերում առաջին հայացքից կարծես միմյանցից անկախ և տարբեր թվացող հարմոնիաները հնչում են միաժամանակ, կատարվում են մեկ պեդալի վրա (տե՛ս, օրինակ, «Հով արեք», «Երկինքն ամպել է», «Ալագյազ» երգերը)։

Այնուհետև՝ «Կանչե կռունկ», «Անտունի», «Կուժն առա» և մի քանի այլ երգերում Կոմիտասը երկարատև պեդալ է նշանակել։ Դրա շնորհիվ նվագակցության մեջ ստեղծվում է մի անընդհատ, նուրբ հնչյունային ֆոն, որի վրա հանդարտ ծավալվում են լայնաշունչ մեղեդիները։

Ինչպես համահնչյունների ժողովրդական-լադային բնույթը, այնպես էլ Կոմիտասի նվագակցությունն ամբողջապես, սերտ կերպով կապված են երգի բովանդակության հետ, լրացնում, կատարյալ են դարձնում ժողովրդական երգի մեջ դրված կերպարը։ Մասնավորապես նվագակցության մեջ ստեղծվող անընդհատ հընչյունային ֆոնը նպաստում է երգի տրամադրության խորացմանը, ամբողջացնում է այն։ Երբեմն, ինչպես «Հով արեք»-ում, այդ ֆոնը կարծես փոխարինում է ժողովրդական գործիքային երաժշտության ծանր եղանակների պահվող ձայնին՝ ձայնառությանը։ Սակայն, որպես կանոն, դա ունի լադային ակորդների բազմազան հարմոնիա և ըստ այդմ՝ արտահայտչական ավելի մեծ հնարավորություններ։ Ներկա հրատարակության մեջ պեդալի վերաբերյալ հեղինակի բոլոր նշումները պահպանված են, ուղղված են ակնհայտ վրիպակները միայն։

Կոմիտասի շարադրանքի այս առանձնահատկությունները վերաբերում են գլխավորապես այն երգերին, որոնք նրա կողմից լիակատար կերպով ավարտված, խմբագրված են եղել։ Այն բնագրերը, որոնք հեղինակն ինքը չի հասցրել տպագրության պատրաստել, ոչ միայն զուրկ են կոմիտասյան շարադրության հիշյալ առանձնահատկություններից, այլև, ինչպես ասվեց, կատարողական նշումներում պակասություններ ունեն։ Այդ պակասությունների, նախկին խմբագրի կատարած հավելումների, ինչպես և ներկա հրատարակության մեջ առավել անհրաժեշտ դեպքում կատարված լրացումների և խմբագրական փոփոխություն-

ների մասին հատուկ նշումներ են արված համապատասխան ծանոթագրություններում։

Կոմիտասի մեներգերի ստեղծման ճշգրիտ և լիակատար ժամանակագրությունը հաստատել առայժմ հնարավոր չէ։ Արխիվի նյութերի մեջ հատորի մեներգերից շատերի վերաբերյալ գտնվել են ժամանակագրական զանազան տվյալներ (բերված են ծանոթագրություններում)։ Սակայն առայժմ այդ տվյալները հնարավորություն են տալիս ո՛չ այնքան կոմպոզիտորի ստեղծագործական մտքի զարգացման ընթացքին հետևելու, որքան՝ պարզելու նրա կոմպոզիտորական աշխատանքի հանգամանքները (այսպես, երևում է, որ համեմատաբար ուշ շրջանում Կոմիտասը հնարավորություն չի ունեցել իր մտահղացումները՝ մասնավորապես 1911 թվին կազմած ժողովածուի երգերի ղգալի մասի մշակումը, վերջնական ավարտի հասցնել)։

Այս հատորում երգերը դասավորված են նրանց լույս ընծայման կարգով, որ ընդհանուր առմամբ չի հակասում նաև ստեղծման հերթականությանը (այդպիսի դասավորությունը միաժամանակ մոտավոր պատկերացում է տալիս այն մասին, թե ինչ աստիճանի ավարտվածության է հասցված այս կամ այն ստեղծագործությունը)։ Սկզբից դրված են Կոմիտասի գործունեության տարիներին հրատարակված երկու հիմնական ժողովածուների մեներգերը, որոնց մեջ պահպանված է հեղինակի կողմից կիրառված հաջորդականությունը։ Դրանից հետո զետեղված են 1911 թվի ձեռագիր ժողովածուի այն մեներգերը, որոնք չեն մտել «Հայ գեղջուկ երգեր»-ի մեջ և առանձին տետրերով հրատարակվել են Կոմիտասյան հանձնաժողովի կողմից 1925—37 թվականներին, ապա մյուս հրատարակությունները և առաջին անգամ տպագրվող երգերը (որպես բացառություն «Միրանի ծառ» մեներգը, որ բավական ուշ է տպագրվել, բայց 1906 թվին իր վերջնական տեսքով արդեն գոյություն է ունեցել, զետեղված է «Հայ քնար»-ի մեներգերից անմիջապես հետո)։ Այս կամ այն չափով թերավարտ մնացած մեներգերը, ինչպես նաև Կոմիտասի գործունեության վաղ շրջանին վերաբերող «Ախ, մարալ ջան» և «Միծեռնակ» երգերը զետեղված են հատորի վերջում։

Մեներգերի մեծ մասի բանաստեղծական տեքստը տպագրված է հեղինակի և Մանուկ Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» կոչվող երգարանի երկու գրքույկում (1903—1905 թթ. Վաղարշապատ)։

Երկու հիսնյակից բաղկացած «Հազար ու մի խաղ» ժողովածուն իր մեջ ամփոփում է ժողովրդական ոտանավորներ, «որոնք բոլորն ունեն իրենց հատուկ եղանակները և որոշված են երգելու և ոչ թե կարդալու համար*»։ Այդ ոտանավորները Կոմիտասի և Մ. Աբեղյանի կողմից, մեղեդիներին համապատասխան, նախապես մշակված ու խմբագրված են և մեներգերի հետ տպագրվելիս այլևս փոփոխության չեն ենթարկվել, բացի հատուկենտ դեպքերից։

Այս հրատարակության մեջ մեներգերի բանաստեղծական տեքստում «Հազար ու մի խաղ»-ի համեմատությամբ եղած տարբերությունները, ինչպես և նախորդ հրատարակությունների տեքստերում եղած անճշտությունների ուղղումը նույնպես ցույց են տրված ծանոթագրություններում։ Ձեռագիր մեներգերի պակասող կամ թերի բանաստեղծական տեքստերը հնարավոր չափով լրացված են համապատասխան խմբակային երգերից կամ այլ վստահելի աղբյուրներից։

Հատորին կցված է հավելված, որտեղ զետեղված են Կոմիտասի մշակած երգերից մի քանիսի տարբերակները և մի շարք այլ օժանդակ նյութեր։

Հայտնի է, որ իր բազմակողմանի գործունեության բոլոր բնագավառներում Կոմիտասը վերին աստիճանի խստապահանջ է եղել։ Նրա՝ իր կողմից ավարտված ճանաչված ամեն մի գործը երկարատև և մեծ խնամքով կատարված ստեղծագործական աշխատանքի արդյունք է, ամեն մի փոքրիկ երգն անգամ ստեղծագործական մշակման բազմաթիվ փորձերի միջից է ծնվել։ Հավելված տարբերակները ինչքան էլ որ փոքրաքանակ են, այնուամենայնիվ Կոմիտասի կատարած աշխատանքի ընթացքի մասին որոշ գաղափար են տալիս։ Բացի դրանից, տարբերակներից մի քանիսը իրենց այդ նախնական վիճակում էլ ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեն։

Հավելվածի օժանդակ նյութերի մեջ կան.

ա. «Հայ քնար»-ի առաջաբանից մի հատված, որը Կոմիտասի երգերի ձայնագրության, ներդաշնակման և հատկապես կատարման վերաբերյալ հեղինակի կողմից տրված արժեքավոր տեղեկություններ և գործնական ցուցումներ է պարունակում։

բ. «Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի» Ա. տասնյակի նախաբանը, որից երևում է, թե ինչ նշանակություն էր տալիս Կոմիտասը իր մշակած՝ միաձայն և ներդաշնակված ժողովրդական երգերի հրատարակությանը։

գ. Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» Ա. և Բ. հիսնյակի ծանոթագրությունները, որոնց մեջ ցույց է տրված, թե ժողովրդական երգերի տեքստը այդ հեղինակների կողմից ինչպիսի խմբագրման է ենթարկված։

Հատորի մեջ մտնող մեներգերի ազգագրական սկզբնաղբյուրների, մշակման ընթացքում Կոմիտասի կատարած ստեղծագործական աշխատանքի և մի շարք այլ հարցերի մասին մանրամասն տեղեկություններ են տրված նաև համապատասխան ծանոթագրություններում։

Ռ. ԱՊԱՅԱՆ

* «Հազար ու մի խաղ»-ի «Ծանոթություն»։



ՄԵՆԵՐԳԵՐ







Կոմիտասի երգերի առաջին
ժողովածուի տիտղոսաթերթը

ՀՈՎ ԱՐԵՔ ОВ АРЕК



ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՈՎՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԱԺՇՏԱՐԱՆ
ԴԱՇՆԱԿԱՐԱՆ


Più mosso ♩=72
Սա - րե - րը հով չե՛ց ա - ցում,
սա - րե - րը հով չե՛ց ա - ցում,
իմ դար - դից դար - մաց ա - ցում,
decresc.
իմ դար - դից դար - մաց ա - ցում:
decresc.


Ամ - պե՜ր, ամ - պե՜ր, մի հիչ զո՛վ ա - րեւ,
վա - րար ամն - րեվ բա - վեբ, ծո՛վ ա - րեբ.
զեբ ւմար - դու or - ա - րե - վը
սեվ հո - ղի տա - կով ա - րեբ:
diminuendo


Հով արեք, սարեր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք:—
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:


Ամպեր, ամպեր, մի քիչ կով արեք,
Վարար անձրև թափեք, ծով արեք.
Գեջ մարդու օր-արևը
Սև հողի տակով արեք:


Հով արեք, ամպեր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք:—
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրներ,
Մի վեր կացեք, իմացեք,
Տեսեք իմ սրտի ցավեր:

ՀԱԲՐԲԱՆ АБРБАН




mf
ով իմ սի - րած ն իճն չի տա, աս - տը - ծու կերն ե - րե - սին,
cresc.
ով իմ սի - րած ն իճն չի տա, աս-տը - ծու կերն ե - րե - սին:
cresc.
decresc.
pp dolce
Հա - բըր - բա՞ն:
con fuoco
Սա - րի բըր - բըն - ջուկ քա - զա,
Ջա - ներ, ջա՞ն:
ppp
mf
f
p
pp
dolce
mp
pp


p
մեղր ու շա - խար ես մա - զա.
ինձ պես նա - զա - նի աղ - ջիկ
pp
mp
p
più dolce
ես պես տը - ղին ո՞նց սա - զա.
pp
ինձ պես նա - զա - նի աղ - ջիկ
pp
decresc.
1.2.3.
ես պես տը - ղին ո՞նց սա-զա:
1.
Իմ մոր գո - վա - կան փե - սա:
1.2.3.
ppp
1.
ppp

ՏՂԱ. *Հաբըրբան:*
ԱՂՋԻԿ *Ջանե, ջան:*

ՏՂԱ. Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տա,
Աստրծու կերն երեսին:

ԱՂՋԻԿ. *Հաբըրբան:*
ՏՂԱ. *Ջանե, ջան:*

ԱՂՋԻԿ Սարի թըփընջուկ թապա,
Մեղր ու շաքար քեզ մապա.
Ինձ պես նապանի աղջիկ
Քեզ պես տըղին ո՞նց սապա:

ՏՂԱ. Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Զորեքդիմաց ծամ ունիս,
Խունջիկ-մունջիկ մի անի,
Ինձ առնելու կամ ունիս:

ԱՂՋԻԿ. Գութանըդ հոլա, հոլա,
Գութանիդ տակը քոլ ա.
Քանի գըժություն անես,
Քեզի առնողը տու ա:

ՏՂԱ. Ձեր տան տակին վար կանես
Ձար ագռավին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գըժությունդու թարև անեմ:

ԱՂՋԻԿ. Ջուրը իր ճամփով կերթա,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տըղեն
Հավարի մեջ մի բերդ ա:

ՏՂԱ. Բուսել ես բաղր սրջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միալար
Դու ես իմ խաղի միջին:

ԱՂՋԻԿ. Աչուղի պես խմղ ասա,
Բըլբուլի պես տմղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մոր գովական փեսա:

ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է ЕРКИНКН АМПЕЛ Э



Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ թոն է.
Գամ դըռնեն անցնեմ՝
Հոգյակըս հոն է:

Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է.
Ցարըս քնել է,
Երեսը բաց է:

Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ երակ.
Սըրտիս մեջ լըցավ
Մի բուռը կըրակ:

Երկինքըն ամպել է,
Գետին շաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով:

Երկինքըն ամպել է,
Գետինը մութ է.
Ես քեզ ուզել եմ,
Ծռղ ասեն՝ սուտ է:

Շորր դու, շեկլիկ յար,
Տեսնեմ՝ դու ումն ես.
Իրավ եմ ասում՝
Դու իմ սըրտումն ես:

ԱՆՏՈՒՆԻ АНТУНИ






stretto
a tempo
mf
f
pp
կոս-րեր զե - ռաճ-ճեր, խախ-տեր է սր - ճեր.
decresc.
p
pp
mf
ff
բուճ պի-տի ղը - ճեճ
մեջ վայ-րի հավ - ֆեր.
mf
p
ff cresc.
fff
p
accelerando
rallentando
espirando
եր - թամ' ձի թա - լեմ էճ ել - մաճ զե - տեր.
pp
pp
ppp


p a tempo
rallentando
espirando
ppp
pp
f cresc.
più f
decrescendo
pp
f rinforzato
ff
p espirando
diminuendo
ppp


mf
p
pp
Սեվ ծով մ'եմ տե - սե,
pp
ppp
pp
ppp
p
pp
p
pp
mf
Ped.
p
f
mf
mp
սիպ-տակն էր բո - լոր,
cresc.
stretto
a tempo
mf
f
pp
ա - լին կը զար-ճեր, չէր խաղ - ցի ին - որ.
decresc.
p
pp
Ped.


mf
ff
Էն ո՞րն է տե - սե մեկ ծովն երկ-թա - վոր, —
mf
p
ff cresc.
sff
Ped.
accelerando
rallentando
espirando
p
ան - տու - նի սիրտն է պլուղ-տար ու մո - լոր:
pp
ppp
Ped.
a tempo
rallentando
espirando
Ախ, իս - կի մի՛ - նիմ սըր - տիկ սե - վա - վոր:
pp
ppp
Ped.



f cresc.
più f
decresc.
pp
U.-j.
f rinforzato
ff
Ped.
* Ped.


espirando
p
diminuendo
ppp

Սիրտըս նման է էն փըլած տըներ,—
Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ.
Բուն պիտի դընեն մեջ վայրի հավքեր.
Երթամ՝ ’ծի թալեմ էն ելման գետեր.
Ըլնիմ ձկներու ձագերացըն կեր:
Ա՛յ, տո լաճ տընավեր:

Սեվ ծով մ’եմ տեսե, սիպտակն էր բոլոր,
Ալին կըվարներ, չէր խառնի հիրոր.
Էն հրն է տեսե մեկ ծովն երկթավոր,—
Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր:
Ա՛խ, իսկի մի՛ լնիք սըրտիկ սեվավոր:
Ա՛յ, տո լաճ տընավեր:

ԳԱՐՈՒՆ Ա. ГАРУН А




mf
f
p
pp
վա՜յ, լե, լե, լե, լե՜:
չար մար - դու լե - զուն:
p
morendo
pp
Ped.
mf
f
p
վա՜յ, լե, լե, վա՜յ, լե, լե,
ա՜խ, չոր - ցաւ, վա՜խ, ա՜յ, յար,
pp
cresc.
decresc.
cresc.
decresc.
p
mf
pp
վայ, լե, լե, լե, լե:
չար մար - դու լե - զուն:
pp
morendo
ppp

Գարուն ա, ծուն ա արել,
Վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,
Վա՛յ, լե, լե, լե, լե՛.


Ով յարն ինձնից ա սառել:
Ա՛խ, չորնա՛, վա՛խ, մ՛յ յար,
Չար մարդու լեզուն:

Քամին փչում ա պաղ-պաղ,
Լերդ ու թոքս անում ա դաղ:

Ցա՛ր, ինձ բեմուրադ արիր,—
Սերըդ ինձնե վատ արիր:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ ЦИРАНИ ЦАР




Meno lento ♩=46
Ս. - մեն մե - ջըդ ման գա - լիս
ff
Ped.
*
Ped.
*
1.
ցա - վե - ռըս ի - ռար մի՛ տա:
f
mf
p
Ped.
*
Ped.
*
Ped.
*



Moderato ♩=88
Lamento ma tranquillo ♩= 92
2.
տա:
Հա՛, տը - վե՛f,
Գը - նա, Հ
8
p
pp
dolce
Ped.
*
Ped.





Più lento, con dolore ♩=72





Ծիրանի ծառ, բար մի տա,
վա՛յ.
Ճրղներըդ իրար մի տա,
վա՛յ.
Ամեն մեջըդ ման գալիս
Ցավերըս իրար մի տա:

Հա՛, տըվեք, ետ տըվեք, սա՛րեր,— հովն ընկավ,
Սըրտիս խընդում ծովն ընկավ.
Գընա, էլ ետ չըգա էս տարվա տարին,—
Սև դարդն իմ վըզովն ընկավ:

Հո՛վ, հո՛վ, հովն ընկավ,—
Սըրտիս խընդում ծովն ընկավ:


Մեռա բաղում բանելեն,
Մի կողմեն ջուր անելեն.
Ծառերին թուփ չըմընաց
Դարդիս դարման տանելեն:


Սև ամպը գըցել ա հով,
Մութը տըվել ա իմ քով.
Տեսնում եք՝ ինձ պատել ա
Էս անիրավ արյուն ծով:

Նըստած տեղիս քար չունիմ,
Էրված սըրտիս ճար չունիմ.
Ա՛յ անօրեն, փուչ աշխարհ,—
Բաղ ունիմ ու բար չունիմ:

ՔԵԼԵՐ, ՅՈԼԵՐ KEΛEP, ЦOΛEP




con calore
ջերմ
Ա - րի սո - վոր, մեծ մե - ծա - վոր, ե՛կ տը - ղա,
con desiderio
pp փափագով
f
ո՞ւր ա - րե - գակ, ք՛որ ա - րե - գակ, ե՛կ, տը - ղա:
come eco
արձագանք
Ա - րի սո - վոր, մեծ մե - ծա - վոր, ե՛կ տը - ղա,
8
come eco
արձագանք


f
ըս՞ղ ա - ռե - գակ, թո՛ղ ա - ռե - գակ, ե՛կ, տը - ղա:
8
1.2.3.
pp
4.
pp
pp perdendo
հեռացայով
ppp

Քելեր, ցոլեր՝ իմ յարը,
Արևի տակին
Քելեր, ցոլեր՝ իմ յարը:
Սարի սովոր,
Մեն մենավոր,
Շեկ տըղա,
Շրղ արեգակ,
Թրղ արեգակ,
Ե՛կ, տըղա:

Քելեր, ցոլեր՝ իմ յարը,
Աղբյուրի ակին
Քելեր, ցոլեր՝ իմ յարը:
Կանաչ առվով,
Ծանաչ առվով
Ե՛կ, տըղա,
Բաղովն արի,
Շաղովն արի,
Շեկ տըղա:


Քելեր, ցոլեր՝ իմ յարը,
Գերանդին ուսին
Քելեր, ցոլեր՝ իմ յարը:
Հով ծառի տակ,
Ջով ծառի տակ
Ե՛կ, տըղա,
Հունձ ես արել,
Քրտինք դառել,
Շեկ տըղա:

Քելեր, ցոլեր՝ իմ յարը,
Ջան աչքի լուսին,
Քելեր, ցոլեր՝ իմ յարը:
Հով է, քը՛նիր,
Ջով է, քը՛նիր,—
Ե՛կ, տըղա,
Հունձ ես արել
Շատ բեվարել,
Շեկ տըղա:

ՔԵԼԵ, ՔԵԼԵ КЕЛЕ, КЕЛЕ

Անույշ
Andante amabile ♩= 69




Սի - րա - մոր լո - րիկ, մի - րա - մոր լո - րիկ,
dolce
քաղցրաձայն
լո - րիկ, սե - վա - մոր
mormorando
կարկաչուն
սիրուն
1.
2.
լո - րիկ, լո - րիկ ջա՜ց: Լո - րիկ ջա՜ց:
1.
2.
mf
mf

Քե՛լե, քե՛լե, քելքիդ մեռնեմ.
Քո գովական խելքիդ մեռնեմ:
Սիրավոր լորիկ,
Վիրավոր լորիկ,
Լորիկ,
Սեվավոր լորիկ,
Լռրիկ ջան:

Քե՛լե, քե՛լե, սոլիդ մեռնեմ.
Քո չինարի բոյիդ մեռնեմ:


Քե՛լե, քե՛լե, քողիդ մեռնեմ.
Քո լուսընկա շողիդ մեռնեմ:

Քե՛լե, քե՛լե, բերնիդ մեռնեմ.
Քո սիրունիկ ծենիդ մեռնեմ:

Քե՛լե, քե՛լե, ձեռիդ մեռնեմ.
Քո հուր կրրակ սերիդ մեռնեմ:

Քե՛լե, քե՛լե, աչիդ մեռնեմ.
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ:

ՍԱՐ, ՍԱՐ CAP, CAP



Սմր, սմր,
Ես սարերի ծաղիկն եմ.
Ջմն, ջմն,
Ես Լևոնի քուրիկն եմ:

Ժամի դըռնեն դուս ելա,
Արևի պես լուս ելա:


Էն սարին սմր չեմ ասի,
Փիս գյադին յար չեմ ասի:

Ինձ չէր առնում՝ թող չառներ.
Խոսք ու վըրիցն էլ ի՞նչ էր:


Հաց եմ թըխել փըրփըռի,
Վատ խոսողը քըրքըրի:


Ես սարերի ծաղիկն եմ.
Ես Լևոնի քուրիկն եմ:

ԿԱՆՉԵ ԿՐՈՒՆԿ КАНЧЕ КРУНК



poco mosso փղձկուն





կը - ուռ՜ւցկ ջաց. կը - ուռ՜ւցկ ջաց, գա - ռուն է.
Ped. * Ped. * Ped. *
կը - ուռ՜ւցկ ջաց, կը - ուռ՜ւցկ, ջաց, գա - ռուն է,
Ped. * Ped. * Ped. *
f ppp
ա՜խ, սիր - տըս ա - ռուն է:
pp
pp pp eco արձագանք p ppp ppp morendo մարելով
Ped. * Ped. *


Կանչե՛, կըռունկ, կանչե՛, քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը գունդ-գունդ արուն է:
Կըռունկ ջան, կըռունկ ջան, գարուն է,
Կըռունկ ջան, կըռունկ ջան, գարուն է.
Ա՛խ, սիրտըս արուն է:


Կանչե՛, կըռունկ, կանչե՛, քանի արոտ է.
Աշխարհն է արեգակ, սիրտըս կարոտ է:
Կըռունկ ջան, կըռունկ ջան, արոտ է,
Կըռունկ ջան, կըռունկ ջան, արոտ է.
Ա՛խ, սիրտըս կարոտ է:

Կանչե՛, կըռունկ, կանչե՛, քանի արեվ է.
Աշնան կերթաս երկիր, յարիս բարեվե:
Կըռունկ ջան, կըռունկ ջան, արեվ է,
Կըռունկ ջան, կըռունկ ջան, արեվ է.
Ա՛խ, յարիս բարեվե:

ԵՍ ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՅԻ
ЕС САРЕН КУГАИ




p
դուն դու - ռը քա - ցիր.
f
p
commoso
հուզուն
mf
ձե- ռըդ ծո - ցըդ տա - ռար, ա՜խ ա - րիր, լա - ցիր:
mf
dim.
f
Ped.
piu mosso
f շարժուն
վա՜յ, վա՜յ, վա՜յ, վաո - վում եմ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, հալ - վում եմ.
f
piu mosso
շարժուն
f
Ped.
* Ped.
* Ped.
*


a tempo
հափով
հալ - վում, վառ - վում եմ:
a tempo
հափով
f
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վառ - վում եմ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, հալ - վում եմ,
f
f
Ped.
* Ped.
* Ped.
*
հալ - վում, վառ - վում եմ:

Ես սարեն կուգալի,
Դուն դուռը բացիր.
Ձեռըդ ծոցըդ տարար,
Ա՜խ արիր, լացիր:
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառվում եմ,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալվում եմ,
Հալվում, վառվում եմ:


Ես մի պինդ պաղ էի,
Դու մըրմուռ լացիր.
Քո հրեղեն արցունքով
Ինձի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի,
Դու գարնան արև.
Քո սիրով ծաղկեցավ
Իմ ճյուղն ու տերև:

Թե ինձ չէիր առնի,
Ինչո՞ւ սիրեցիր.
Մի բուռ կըրակ եղար,
Սիրտըս էրեցիր:

ՋԻՆՋ ՈՒ ՋԻՆՋ ЗИНЧ У ЗИНЧ

Ազատությամբ
Allegretto ♩.=54




Ջինչ ու վինչ տամ լողվորչուն:—
Ջոմա վոմա էր:
Ջիմ լաչակ տամ լողվորչուն:
Ջոմա քոմա էր:
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Ջոմա վոմա էր.
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:
Ջոմա քոմա էր:

Ջինչ ու վինչ տամ լողվորչուն:—
Ջիմ մեջկապ տամ լողվորչուն:
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:

Ջի՞նչ ու վի՞նչ տամ լողվորչուն:—
Ջիմ շապիկ տամ լողվորչուն:
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:

Ջինչ ու վինչ տամ լողվորչուն:—
Լուսնակ գիշեր պագ մի տըվի:
Հետ էառ, հետ հավնեցավ,
Հետ եհան ծամկալ ծովեն:

ԱԼԱԳՅԱԶ АЛАГЯЗ



Ալագյավ սարն ամպել ա,
Վա՛յ, լե՛, լե, լե՛, լե, լե՛, լե, լե՛.
Աղբեր իր ծին թամբել ա:
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբեր իր ծին թամբել ա:
Յարոջ դրռնեն անցել ա:


Յարոջ դրռնեն անցել ա,
Ելե դաշտը՝ խաղցել ա:

Ելե դաշտը՝ խաղցել ա,
Անձրեվ եկե, թըրջել ա:

Անձրեվ եկե, թըրջել ա,
Արեվ վարկե՝ չորցել ա:

Արեվ վարկե՝ չորցել ա,
Քան կարմիր վարդ բացել ա:

ԽՆԿԻ ԾԱՌ ХНКИ ЦАР




Մեր դըռանը խընկի ծառ,
Գյուլհում ջան,
Ջեր դըռանը խընկի ծառ.
Գյուլհում ջան,
Խընկենին ա բերել բար,
Գյուլհում ջան.
Իմ խորոտիկ, պըկտիկ յար:
Գյուլհում ջան:


Մեր դըռանը խընկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրեն թառ.
Երթար ու գար, շորոր տար,
Սիրուն յարին օրոր տար:


Մեր դըռանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրեն թառ.
Գընար ու գար, շըվին տար,
Անուշ յարի թևին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրեն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Ալվան ծաղիկ տանել տար:


Ա՛Լ ԱՅԼՈՒՂՍ АЛ АЙЛУХС




mf
p
mf
p
mf
բաղ - տը ըն - ձի
գը - ցեց էս կուռ. ջա՛-ևո ջաճ.
con delicatezza
նազուկ
amabile
սիրարժան
սի - ռուն տը - ղա
տո՛ւր այ - լու - ղիս:
pp


mf
p
սի - րուն տը - ղա,
տո՛ւր այ - լու - ղըս:
pp
p
p
con tenerezza
Tenor. անուշ
Ա՛լ այ - լու - ղըդ
ես չը - ղը - տա.
pp
p
p
f
p
եր - ղը-ւում եմ
աս - ված վը - կա.
p
mf
p
p

espansivo
ապրածուն



ԱՂՋԻԿ. Ալ այլուղըս կորավ ձեր դուռ՝
Փոթոթել է սիրտըս մըրմուռ.
Բախտը ինձի գցեց էս կուռ.
Ջա՛նո ջա՛ն.
Սիրուն տըղա, տո՛ւր այլուղըս:

ՏՂԱ. Ալ այլուղըդ ես չըգըտա.
Երդըվում եմ՝ աստված վըկա.
Ով գըտել է՝ թող բերի տա,
Ջա՛նո ջա՛ն.
Սիրուն աղջիկ, քո այլուղըդ:


ԱՂՋԻԿ. Ալ այլուղըս յարս էր բաշխել.
Ալ աբըրշում շուրջը նախշել,
Պատկերըս վըրեն էր քաշել.
Սիրուն տըղա, տո՛ւր այլուղըս:


ՏՂԱ. Ջահիլ ջիվանի սարերն ընկա,
Ցավոտ սըրտիս ճար չըգըտա,
Քո սերն ինձի հոգի կուտա.
Թող ինձ մընա ալ այլուղըդ:

ԱՂՋԻԿ. Ա՛խ, ինչ ասեմ իմ խորթ մորըս,
Կամ ինչ պատմեմ ավիկ հորըս.
Խաբար կուտան շեկ աղբորըս.
Տը՛ղա, տը՛ղա, տո՛ւր այլուղըս:

ՏՂԱ. Սեվուկ աղջիկ, սիպտակ հագիր.
Առ այլուղըդ, վերքըս կապիր.
Սիրուդ գերի՝ ինձ մի տանջիր.
Էրված աղջիկ, մառ այլուղըդ:

ԿՈՒԺՆ ԱՌԱ КУЖН АРА




Չը - գը - տա Ֆի - դաո յա ը,
p
pp
con calore
ջերմագին
Ֆի - դաո յա - ը ինձ տը - վեէ, չը -
con calore
ջերմագին
Ped.
հա - շեմ աչ ու զա - ը:
pp
eco
արձագանք
Ped.

Կուժն առա, ելա սարը,
Չըգըտա ֆիդան յարը.
Ֆիդան յարը ինձ տըվեք,
Չըքաշեմ աճ ու վարը:

Մեծ սարի ճովին մեռնեմ,
Շեկ տըղի բոլին մեռնեմ,
Մի տարի ա չեմ տեսել,—
Տեսնողի աչքին մեռնեմ:

Բըլբուլը դարի վըրա,
Խընձորը սարի վըրա.
Սիրած սիրածի տալին,
Չոր գետնին՝ քարի վըրա:

ԿԱՓԱՎԻ ԵՐԳԸ КАГАВИ ЕРГ

Խոսք՝ Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

Քնքուշ և զվարթ
Tendre et alerte ♩=126

Ա - րեվ բաց - վեց թուխ ամ - պե - րեն, կա - ւավ իր - ուավ

col canto

Պա. *Պա. *Պա. *Պա.

կա - ՃաՀ սա - րեն, կա - ՃաՀ սա - րեն՝ սա - րի ծե - րեն,

*Պա. *Պա. *Պա. *Պա.


simile


un poco meno mosso

բա - րեվ բե - րավ ծա - ղիկ - նե - րեն: Սի - րու - նի՛կ,

*Պա. *Պա. *Պա. *Պա. *Պա.


սի - րու - ցի՛կ, սի-րու-ցիկ, ցախ - ուց կա - ղա - վիկ,
Պա. * Պա. * Պա. Պա. * Պա. * Պա. *


սի - րու - ցի՛կ, սի - րու - ցիկ,
Պա. * Պա. * Պա. * Պա.


սի - րու - ցիկ, ցախ - ուց կա - ղա - վիկ:
* Պա. * Պա. * Պա. *

Արեվ բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:
Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով—
Շուշան, նարգիլ, նունուֆարով:
Քո տեղ լըցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով:

Քո թեվ փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով
Կըշորորաս ճուտիկներով:

Երբ կըկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,—
Սարեր-ձորեր վըվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտ կըհանես:

ՉԵՄ ԿՐՆԱ ԽԱՂԱ ЧЕМ КРНА ХАГА

Քնքուշ նազանոմ
Delicato

♩.=50

pp

Չե՛մ, չե՛մ, չեմ՛, կըr - նա խա - ղա, չե՛մ, չե՛մ,

p

pp

քնքուշ

չե՛մ կըr - նա խա ղա, մաս փա-փու-ջըս կը նըռ - նը - ռա,

pp

mp

աննկատելի

ա - նո - թի փո - ւըս կը գրռ - գը - ռա:

p

աննկատելի


pp


Չեմ, չեմ, չեմ կըրնա խաղա,
Չեմ, չեմ, չեմ կըրնա խաղա,
Մաս փափուջըս կըճըռճըռա,
Անոթի փորըս կըգըռգըռա:

Չեմ, չեմ, չեմ կըրնա խաղա,
Չեմ, չեմ, չեմ կըրնա խաղա,
Վարդ կոշիկըս կըճըռճըռա,
Կեսուրըս կըգա կըվըռվըռա:

ՇՈՂԵՐ ՋԱՆ ШОГЕР ДЖАН

Նազելի
Moderato grazioso




ամ - պի տա - կին ձուն կե - ռե - վա, շո - ղե՜ր ջաս:
pp
Դու. շո - ռո - ռա՛, դուն օ - ռո - ռա՛, շո - ղե՜ր ջաս.
ամ - պի տա - կին ձուն կե - ռե - վա, շո - ղե՜ր ջաս:

Ամպել ա, ծուն չի գալի,
Շողեր ջան,
Սարիցը տուն չի գալի.
Շողեր ջան.
Դու շորորա, դուն օրորա,
Շողեր ջան,
Ամպի տակին ծուն կերևա,
Շողեր ջան.


Սիրտըս կըրակով լըցված,
Շողեր ջան,
Աչքերիս քուն չի գալի:
Շողեր ջան.
Դու շորորա, դուն օրորա,
Շողեր ջան,
Ամպի տակին ծուն կերևա,
Շողեր ջան:


Հուրք ա թափում վերիցը,
Ես վառա քո սերիցը.
Վարդավառին ինձ համար
Ջուն բեր դու սարերիցը:

Սարի գըլխին ծուն եկավ,
Շողեր ջան,
Շեկլիկ յարըս տուն եկավ,
Շողեր ջան·
Ուն կերեվա, ծուն կերեվա,
Շողեր ջան,
Բերդի տակին տուն կերեվա,
Շողեր ջան.
Դեռ մուրապիս չըհասած,
Շողեր ջան,
Վըրես խորունկ քուն եկավ:
Շողեր ջան.
Ուն կերեվա, ծուն կերեվա,
Շողեր ջան,
Բերդի տակին տուն կերեվա,
Շողեր ջան:

Աչունն եկավ սարիցը,
Տերև թափեց ծառիցը.
Շողոն դարդով լըցվել ա,—
Հեռացել ա յարիցը:

ՉԻՆԱՐ ԵՍ ՉԻՆԱՐ ԵՍ




pp
յա՜ր.
յա՜ր ա՛ա ա՛յ, ա՛յ ա՛յ,
ա՛յ,
ա՛յ,
pp
pp
ա՛յ ա՛յ, ա՛յ ա՛յ,
ա՛յ:
ձա՜ր ա՛ա ա՛յ, ա՛յ ա՛յ.
pp
ա՛յ,
ա՛յ,
ա՛յ ա՛յ, ա՛յ ա՛յ.
ա՛յ:

Չինար ես, կեռանալ մի,
Ցմր, յմր, յմր.
Մեր դըռնեն հեռանալ մի,
Ցմր, յմր, յմր.
Ցմր, նա նմ, նայ նմ, նմ, նմ:
Նայ նմ, նայ նմ, նմ:
Ցմր, քո աստված կըսիրես,
Ցմր, յմր, յմր:
Հեռու ես, մոռանալ մի:
Ցմր, յմր, յմր:
Ցմր, նա նմ, նայ նմ, նմ, նմ:
Նայ նմ, նայ նմ, նմ:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներըս շաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես՝
Աչքերըս լիքը լաց ա:

Էս գիշեր երավ տեսա,
Հերկերըս վարած տեսա,
Ամոթ քեզի, մյ տըղա,
Ջու յարը տարած տեսա:

ԷՍ ԱՌՈՒՆ ԵՍ ԱՐՅՈՒՆ

Grazioso ♩.=88




Էս առուն ջուր է գալի,
Մի տեսեք—ին է գալի.
Գալիս է, գալիս է սեր անե:
Քենին մահանա արել,
Իր յարին ին է գալի.
Գալիս է, գալիս է սեր անե:


Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դըրել շաղերով.
Արի, իմ սիրեկան յար,
Առաջ գամ քեզ տաղերով:

Տանըս տակին կա նըռնի,
Ես բարձ բերեմ դու կըռնի,
Ես դու մի բաղում պիտենք,
Դու չինարի, ես նըռնի:

ԱԼԱԳՅԱԶ АЛАГЯЗ

ՆոտաՐ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ




վա՜խ, սիպ-տակ սա - րեր, կա-նաչ ա - րոտ սա - րեր,
Ped. * Ped. * Ped. * Ped. *
a tempo
օ՜, յար, օ՜, յար,
Ped. * Ped. * Ped. * Ped. *
Variante
3
օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ:
Ped. * Ped. * Ped. *


Ալագյակ բարձըր սարին
Ջուն ա կիտվել կատարին.
Օ՛, յար, օ, յար,
Ա՛յ սարեր, մայ սարեր,
Վա՛յ, արնոտ սարեր,
Վա՛խ, սիպտակ սարեր,
Կանաչ արոտ սարեր,
Օ՛, յար, օ, յար,
Օ՛յ, օյ, օյ, օյ, օյ, օյ:
Սարի՝ ճամփեք, բաց ելեք,
Էրբամ հասնեմ իմ յարին:
Օ՛, յար, օ, յար,
Ա՛յ սարեր, մայ սարեր,
Վա՛յ, արնոտ սարեր,
Վա՛խ, սիպտակ սարեր,
Կանաչ արոտ սարեր,
Օ՛, յար, օ, յար,
Օ՛յ, օյ, օյ, օյ, օյ, օյ:

Ա՛խ, իմ ճամփեն քարոտ ա,
Սիրտըս էրված, յարոտ ա.
Ղարիբի օրն ըլնի սև,—
Ապիվ յարի կարոտ ա:

Ցարիս տեսա՝ լալիս էր,
Լալիս, գըլխին տալիս էր.
Ճամփա տըվեք, մայ սարեր,
Ջեռով արի՝ գալիս էր:

Էն ինչ ղուշ ա էն քարին.—
Սիրտըս կաթում ա արին,
Ա՛յ իմ թառլան, թև տուր ինձ,
Թըռչեմ, հասնեմ իմ յարին:


ՀՈՒ, ՆԱԶԱՆ ՕЙ, НАЗАН





mf
Նա՛-զան. դու բա - րով ե-կար, կա-ցաչ . սա - րե - րով ե-կար,
mf


խոր - հուր ձո - րե-րով ե-կար: Նա՛-զան, դու քա - րով ե-կար.
p
p


կա-ցաչ . սա - րե - րով ե-կար, խոր - հուր ձո - րե-րով ե-կար:


p
mf
Գար - նան սի - րուն ծա - ղիկ ես, հո՜յ, Նա՛-զան իմ, Նա՛-զան իմ,
8
p
mf
ինձ հա-մար ա - ղու - ցիկ ես, ջա՜ն, Նա՛-զան իմ, Նա՛-զան իմ,
8
p
mf
կըլ - խիս վը - րով պր - տիս տուր, հո՜յ, Նա՛-զան իմ, Նա՛-զան իմ,
8
p
mf


p
mf
ճախ - ուճ-թեվ թի - թեռ-ճիկ ես, ջա՜ճ, Նա՛-զաճ իմ, Նա՛զաճ իմ:
8
p
mf
mf
ցար ջաճ, դու բա - ռով ե-կար, կա-ճաչ սա - րե - ռով ե-կար,
8
mf
խոր-խոր ձո - րե - ռով ե - կար: ցար ջաճ, դու բա - ռով ե-կար,
p
8
p
կա-ճաչ սա - րե - ռով ե-կար, խոր-խոր ձո - րե - ռով ե - կար:
8

Հոյ, Նռպան իմ, Նռպան իմ,
Ջան, Նռպան իմ, Նռպան իմ,
Նռպան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր-խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հոյ, Նռպան իմ, Նռպան իմ,
Ինձ համար աղունիկ ես,
Ջան, Նռպան իմ, Նռպան իմ,
Գլխիս վրով պըտիտ տուր,
Հոյ, Նռպան իմ, Նռպան իմ,
Նախշուն-թև թիթեռնիկ ես,
Ջան, Նռպան իմ, Նռպան իմ:
Ցար ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր-խոր ձորերով եկար:

Ճամփա տըվեք՝ առաջ գամ,
Սիրած յարիս բարև տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ:


Սարեր, ձորեր, ետ կացեք,
Իմ յարի ճամփեն բացեք.
Ցար յարի հետ խոսելիս
Ականջ արեք, իմացեք:

Նըշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի.
Երանեկ էն աղջկան՝
Սիրած յարին թուշ կըլնի:


ԳԱՐՈՒՆ ГАРУН


ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿ






Un poco più mosso
Տաս-ռակն ա - սաց ա - ռոր հավ - ֆուն.
pp
Փր-նաց գա - ռուն, ե - կավ ա - ռուն,
Animato ♩.=88
կրս - ռավ ջր - ւիկ աղ - բյուր- նե - ռուն, կրս - ռավ խո - տիկ
leggiero
ծա - ղիկ-նե - ռուն, կրս - ռավ ձե - նիկ կա - ռավ -նե - ռուն.


Tempo I.


էճ-ման պի - տի լամ ե - րի - տուճ,
mf
Ped. * Ped. *
ա-յուճ կա - քե իմ աչ - քե - րուճ,
Ped. * Ped. * Ped. *
— ես ի՞նչ ա-ճեմ իմ ձա - գե - րուճս:
Ped. * Ped. * Ped. *
mf
Ա-սաց. «Դու մի՛ լա էս ա - ղուճ,
mf
Ped. * Ped. * Ped. *


չէ՞, վաղ կու - գա բա - րի գա - րուն,
լույս կը - բաց-վի վեր աչ - խար - հուն,
դուռ կը - բաց - վի խեղ - ճիկ - ներ - ուն.
Animato ♩.=88
ես ձեզ կաո ևեմ իմ քե - վե-րուն, թըռ-ցեմ բաճ-ձրիկ վեր սա - րե - րուն,
pp dolce


բուն կը ղը - ճեմ մեջ հա - րե - ռուն, տուն կը - ձի - ճեմ մեջ զա - կե - ռուն.
Tempo I.
երբիկ բա - ղամ ղեմ հով հա - մուն, բո - ւիր բա - ղեմ
մեջ ալ - րե - ռուն, ծուխ կը - հա - ճեմ հես ամ - պե - ռուն.
mf
մեր ցավ կը տաճիֆ հա - ռավ հա - մուն: Գր - նաց ա - ռուն.
mf


ե - կավ գա-ռուն, կա-բեր ջր-հիկ աղ - բյուր-ևի-ռուն. եր-թար լըց-վեր
Animato ♩=88 crescendo
բա - ռակ ա-ռուն. այ-րուց-ա ռուն մեջ խո - հե-ռուն, դե - ղին սու - սուն
dolce
crescendo
Ped.
pp
վեր սա - րե - ռուն, փուշջ ման-ուշ - շակ ուեջ ծո - ռե - ռուն.
Tempo I.
կա - ցայ կար - միր գույն - գույն ծաղ-կունիվ,


դաշ - տերն ա - մեն
Ped. * Ped. * Ped. *
է - րուճ, քըն - չուճ. անճ - նիկ կու - գա
Ped. *
զան - նիկ մա - ֆուճ,
Ped. * Ped. *
più largo e carezzando
մեր· ապ - րե - լիք վեր եր - կըն ֆուճ:
col canto
ppp eco
Ped. * Ped.

Արորն ասաց տատրակ հավքուն.
«Ինչու կուլաս կուց-կուց արյուն,
Երթա լըցվի բարակ առուն»:

Տատրակն ասաց արոր հավքուն.
«Գընաց գարուն, եկավ աշուն,
Կըտրավ ջըրիկ աղբյուրներուն,
Կըտրավ խոտիկ ծաղիկներուն,
Կըտրավ ձենիկ կաքավներուն:
Ենքան պիտի լամ երերուն,
Արյուն կաթե իմ աչքերուն,—
Ես ինչ անեմ իմ ձագերուն»:

Ասաց. «Դու մի՛ լա էս աշուն,
Չէ, վաղ կուգա բարի գարուն,
Լույս կըբացվի վեր աշխարհուն,
Դուռ կըբացվի խեղճիկներուն:
Ես քեզ կառնեմ իմ թևերուն,
Թըռնեմ բանձրիկ վեր սարերուն,
Բուն կըդընեմ մեջ քարերուն,
Տուն կըշինեմ մեջ գավերուն,
Երթիկ բանամ դեմ հով քամուն,
Թռնիր թաղեմ մեջ այրերուն,
Ծուխ կըհանեմ հետ ամպերուն,
Մեր ցավ կըտանք հարավ քամուն»:

Գնաց աշուն, եկավ գարուն,
Կաթեր ջըրիկ աղբյուրներուն,
Երթար լըցվեր բարակ առուն:
Աղբրանց-արյուն մեջ քարերուն,
Դեղին սուսուն վեր սարերուն,
Փունջ մանուշակ մեջ ծորերուն.
Կանաչ կարմիր գույն-գույն ծաղկունք,
Դաշտերն ամեն էրունք, թըռչունք.
Չենիկ կուգա գառնիկ մաքուն,—
Մեր ապրելիք վեր երկընքուն:

ԿՌՈՒՆԿ КРУНК




ծա - ոա եմ ձայ -
poco stringendo
a tempo
[*]
[Ped.]
[*]
ցիր.
[Ped.]
[*]
[Ped.]
[*]
dolce
կո՛ւրկ,
մեր աշ-խար-հեն
[Ped.]
[*]


խաղ - ւիկ մը յու - նի՛ս,
[Ped.]
[*] [Ped.]
կո՛ւնկ, մեր աշ-խար-հեն
[Ped.]
[*]
խաղ - ւիկ մը յու - նի՛ս:
eco
[Ped.]


Կռունկ, ուստի կուգաս, ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունիս:
Մի վապեր, երամիդ շուտով կըհասնիս,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունիս:

Թողել եմ ու եկել մըլքերս ու այգիս,
Քանի որ մխ կանիմ, կըքաղվի հոգիս:
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունիս:

Աշուն է մոտեցել, գնալու ես թեպտիր,
Երամ ես ժողովել հապարներ ու բյուր,
Ինձ պատասխան չըտվիր, ելար գնացիր,
Կռունկ, մեր աշխարհեն գնա, հեռացիր:

ԱՄՊԵԼ Ա ԿԱՄԱՐ-ԿԱՄԱՐ
АМПЕЛ А КАМАР-КАМАР


Հիացմունքով և կարոտով Largo legato, con desiderio ♩= 84




Ամպել ա կամար-կամար,
Մեջքինըդ ոսկե քամար,
Յոթը տարի պաս պահի,
Յար ջան,
Քո ջիվան ջանի համար:

Յար ջան, քո բոյիդ մեռնեմ,
Սիրունիկ սոյիդ մեռնեմ,
Յար ջան,
Աշուն եկավ՝ քե կառնեմ:

ԵՍ ԱՂՋԻԿ ԵՄ ЕС АХЧИК ЕМ





Ո՛ւռ - ւից, ւմռ - ւից զըւ - կը - ված, վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե՛,
լե, լե, լե՛, լե՛. աշ - խա - տող աղ - բեր չու - նիմ, վա՛յ,
լո, լո, լո, լո, լո, լո՛, լո, լո, լո՛:

Ես աղջիկ եմ, հեր չունիմ,
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե՛,
Լե, լե, լե՛, լե, լե՛.
Մի սըրտացավ տեր չունիմ,
Վա՛յ, լո, լո, լո՛, լո լո, լո՛,
Լո, լո, լո՛.
Հորից, մորից կըրկըված՝
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե՛,
Լե, լե, լե՛, լե, լե՛.
Աշխատող աղբեր չունիմ:
Վա՛յ, լո, լո, լո՛, լո, լո, լո՛,
Լո, լո, լո՛:

Դարիբ հավքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի.
Ինձ նըման սեվաբախտը
Աշխարհքումըս ի՞նչ ունի:


Ծագեց արեվը սարեն,
Կանչեց կաքավը քարեն,
Սիրածս էլ ա ինձ տըվեք,
Լավանա սըրտիս յարեն:


ԷՐՎՈՒՄ ԵՄ ЭРВУМ ЕМ



Էրվում եմ, էրվում,
Կարմիր քարը տաշած ա,
Էրվում եմ, էրվում,
Բոյըս վըրեն քաշած ա:
Էրվում եմ, էրվում,
Ի՞նչ անեմ, որ քաշած ա.
Էրվում եմ, էրվում,
Սիրտըս հալած, մաշած ա:

ՏՈՒՆ ԱՐԻ ТУН АРИ




աչ - քե - րիս մուշ չի գա - լի:
poco animato
lento dolente
կաց - չում եմ, կաց - չում եմ, յա՜ր, ա - րի՛, յա՜ր,
a tempo
rit. tenero
մութն ըն - կավ, տո՛ւն ա - րի, ա՜յ աղ - ջիկs յար:


Ամպել ա, ձյուն չի՛ գալի,
Մթնել ա, տուն չի՛ գալի.—
Հեռու ճանապարհի ես,
Աչքերիս քուն չի գալի:
Կանչում եմ, կանչում եմ, յար, արի, յար,
Մութն ընկավ, տունն արի, ա՛յ անսիրտ յար:

Էս գիշեր կանցնի դըժվար,
Կերթա բարակ ու երկար.
Իմըս որ ախ ու վախով,
Քոնըդ ինչպես կանցնի, յար:

Ձորերն ի վեր հանդեր ա,
Ջուրը տունըս քանդեր ա,
Շուտ արա, ետ դարձիր, եկ,—
Սիրածըդ տանն անտեր ա:

ԳՈՒԹԱՆԸ ՀԱՑ ԵՄ ԲԵՐՈՒՄ
ГУТАН ХАЦ ЕМ БЕРУМ

Allegretto semplice ♩=96




Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տես, քեզ հրքան եմ սիրում,—
Ջուկը տապկած եմ բերում:

Էսօր գութանը մերն ա,
Մաճ բրռնողը իմ հերն ա.
Եվնարած շեկլիկ տըղեն՝
Աշխարհ գիտե՝ իմ տերն ա:

Վեր կացած հավախոսին՝
Գութանն ա վարում փոսին.
Բարկ արևը երկընքում՝
Շողն ա դիպել ակոսին:

Հավքեր, թևանի արեք,
Ցարիս հովանի արեք.
Թող բարակ քամին փըչի,
Հետն էլ դուք նանի արեք:

ՈՂԲԵՐԳ ВОХБЕРГ





Վարդեվանն ելավ ղաշը,
Հարութին դըրին նաշը.
Խաբար արեք բաբաշին՝
Թափել են դուռը բաշը,
Ա՛յ սարեր...
Սարեր, սարեր, ա՛յ սարեր,
Խեղճ բաբաշը լալիս է:

Թև առնեի թռնեի,
Երնակ տունըս մեռնեի.
Հենց որ նաչաղանալի,
Նանիս կուռը բռնեի:

Էդ Արապի ալեքը,
Նոր ա բացվել լալեքը.
Հարութին ղուրբան կանեմ
Վարդեվանի բալեքը:

ԼՈՒՍՆԱԿԸ ՍԱՐԻ ՏԱԿԻՆ
ЛУСНАК САРИ ТАКИН




pp
Ցա՛յ Ցա Ցա՜յ, Ցա՛յ Ցա՜յ, Ցա՜յ: Մա-մու-ռը
8
Պա. Պա. Պա.
էա-րի տա-կին. յա՜ր. յա՛ր Ցա Ցա՜յ, Ցա՛յ Ցա՜յ,
8
Պա. Պա.
Ցա՜յ, Ցա՛յ Ցա Ցա՜յ, Ցա՛յ Ցա՜յ, Ցա՜յ:
8
Պա. Պա. Պա.


Լուսնակը սարի տակին,
Ցմր, յմր.
Ցմր նա նմյ, նմյ նա նմյ, նմյ,
Նմ նա նմյ, նմյ նմյ, նմյ,
Մամուռը քարի տակին.
Ցմր.
Ցմր նա նմյ, նմյ նմյ, նմյ,
Նմյ նա նմյ, նմյ նմյ, նմյ:
Ես իմ յարին կարոտ եմ,
Ցմր, յմր.
Ցմր, նա նմյ, նմյ նա նմյ, նմյ,
Նմյ նա նմյ, նմյ նմյ, նմյ:
Քան վարդ ու մանուշակին:
Ցմր.
Ցմր նա նմյ, նմյ նմյ, նմյ,
Նմյ նա նմյ, նմյ նմյ, նմյ:

Աչքըս գըցել եմ սարին,
Ոտքըս տըվել լեռ քարին.
Երթա ու էլ ետ չըգա
Քեզ կինվոր գըրած տարին:

Կանգնեմ քարին ու սարին,
Գիր գըրեմ ղարիբ յարին.
Արցունքով գըրեմ, կանչեմ,—
Աղու կըտրի 'սենց 'տարին:

ԷՍ ԳԻՇԵՐ, ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ
ЭС ГИШЕР, ЛУСНАК ГИШЕР

[Nobile ♩=84]



Ո՞վ է տե - սել՝ սի - րած յա - րը
մո - ռա - ցա. Ով մո - ռա - ւա՝
եր - կու աչ - քով կու - րա - ցա:

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Վա՛յ, լե, լե, լե,
Լե, լե, լե, լե,
Լե, լե, լե.
Ձյունն եկեր, գետին նախշեր,
Ո՞վ է տեսել՝ սիրած յարը մոռանա.
Ով մոռանա՝ երկու աչքով կուրանա։
Աչքըդ դեմ արա՝ պաչեմ,
Վա՛յ, լե, լե, լե,
Լե, լե, լե, լե,
Լե, լե, լե.
Կեռ ունքեր, կարմիր թըշեր:
Ո՞վ է տեսել՝ սիրած յարը մոռանա.
Ով մոռանա՝ երկու աչքով կուրանա։

Ա՛յ գիշեր, դարձիր տարի,
Հացըս թող լինի գարի.
Մենակ յարըս ինձ համար
Սըրտով խոսքը կատարի:


Ա՛ղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կըսպանեմ.
Դու իմ խոսքին ականջ դիր,
Ես մորըդ հավան կանեմ:


ՋՈՒՐ ԿՈՒԳԱ ՎԵՐԻՆ ՍԱՐԵՆ
ДЖУР КУГА ВЕРИН САРЕН



Ջուր կուգա վերին սարեն,
Սարն ոլորելեն,
Կըթափի մարմար քարեն,
Կաթ-կաթ ծորելեն:

Լե, Լե, ՅԱՄԱՆ ԼԵ, ԼԵ, ЯМАН





յա - ման յար,
լե, լե, յա-ման, ճե -ւիւ
f delicato
ա - ճեմ
աչ - քով
ի - մաց,
pp
mf
pp
perdendo
ppp
յա - ման,
յա - ման
յար:
p
m-s.

Լե, լե, յաման:
Մեր տուն ձեր տուն դիմաց-դիմաց,
Լե, լե, յաման,
Հերիք անեմ աչքով իմաց,
Յաման, յաման յար:

Արև դիպավ Մասիս սարին,
Կարոտ մնացի ես իմ յարին:


ՇԱԽԿԸՐ ՇՈՒԽԿԸՐ ШАХКР, ШУХКР




Շախկըր-շուխկըր քամարըս,
Բոյով, սոյով իմ յարըս:
Արի, աղբեր, յար անենք,
Չար թըշնամուն քար անենք.
Շախկըր-շուխկըր քամարըս,
Բոյով, սոյով իմ յարըս:
Ծաղկել ա մեր կարմիր վարդ,—
Մեր ցավերին ճար անենք:
Շախկըր-շուխկըր քամարըս,
Բոյով, սոյով իմ յարըս:

Արի՛, արի՛, յար, արի՛,
Սարեն-ձորեն վար արի.
Սիրտըս կուլա արյուն ծով,—
Արի, մինուճար, արի։

ԾԻԾԵՌՆԱԿ ЦИЦЕРНАК




pp
più.
sf diminuendo
dolce
Ցակ, ծի - ծեռ - Ցա՛կ, ծի - ծեռ -
rit.
p
ppp
pp
Ped.
diminuendo
p diminuendo
– Ցակ, դու՝ գար - ՑաՑ սի - ռո՛ւՑ թըույ -
dim.
con fuoco
sfp diminuendo
appassionato
smor.
– Ցակ, գե - պի ո՞ւր, իՑձ ա - սա, թըո -
sf


- zando
p
mf
diminuendo
- չում ես այդ - պես ա - րագ. դե - պի
- zando
mf
pp
poco a poco calando
più f
ո ւր. ինձ ա - սա. ըրդ - չում ես , այդ -
sf
p
pp
poco a poco calando
sfp
diminuendo
pp
- պես ա - րագ:
8
sf
pp
pp
Ped.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու՝ գարնան սիրուն թըռչնակ,
Դեպի ո՞ւր, ինձ ասա,
Թըռչում ես այդպես արագ:

Ա՜խ, թըռիր ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սըգավոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրե օր:

Երբ տեսնես դու նըրան,
Ինձնից շատ բարև ա՛րա.
Ասա, թող նըստի լա
Իր անբախտ որդու վըրա:

Դու պատմիր, թե ինչպես
Աստ անտեր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կյանքս մաշվել, եղել է կես:


Ինձ համար ցերեկը
Մութ է շըրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս
Քունը մոտ չի գալիս:


Ասիր, որ չըբացված՝
Թառամեցա միայնացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից վըրկված:

Դեհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թըռիր արագ
Դեպի հայոց երկիրը՝
Ծընած տեղըս՝ Աշտարակ:

Ախ, մարալ ջան AX, MAPAЛ ДЖАН

Allegro ma non troppo ♩=88




- ցաց.
չա՞ց, գյա՛ - ռալ ջաց,
սիր - տըս կը - ռա -
- կած մը - - ցաց.
1.
2.
ցաց:

Ա՛խ, մմրալ ջան,
Կոկոնըս թոռմած մընաց,
Ջմն, գյմրալ ջան,
Սիրտըս կըրակած մընաց.
Ա՛խ, մմրալ ջան,
Ի՞նչ անեմ իմ ապրելը,
Ջմն, գյմրալ ջան,
Իմ աչքերը թաց մընաց:

Կամար ունքըդ գովեցիր,
Սիրել էիր՝ ատեցիր.
Ինձ պես ուժով կըտըրճին
Դու անդանակ մորթեցիր:

Ջաճել եմ, ընկեր չունեմ,
Ընկել եմ ես, տեր չունեմ.
Ոչ վատ ասեք, ոչ էլ լավ,—
Հարըստության սեր չունեմ:

ՕՐՈՐ OPOP



Ad libitum
p
Ա.ղ - վոր ես, յու - ղիս իա -
p
լաս, եր - թամ
pp
ո՞վ բե - ռիմ բե-խա - լաս. օ -
pp
p
ռո՞ր. եր - թամ լու - սըն - կաւն բե - ռիմ, լու - սուն
p
pp
աս - ղե - ռը բե - խա - լաս: Օ - ռո՞ր:
pp

Աղվոր ես, չունիս խալատ,
Երթամ ո՞վ բերիմ բեխալատ.
Օրհր.
Երթամ լուսընկան բերիմ,
Լուսուն աստղերը բեխալատ:
Օրհր.
Աղվոր ես, չունիս խալատ,
Քու ամեն տեղըդ է բեխալատ.
Օրհր.
Դուն ալ խալատ բան մ'ունիս,
Քուն չունիս՝ արթուն կուկենաս:
Օրհր:

ՄՈԿԱՑ ՄԻՐԶԱ МОКАЦ МИРЗА




3
ա - ռիւն, քե - ռիւն
Մա - լա - ֆյա - վեն,


տր - վին ի ձեռ
Մո - կաց Միր - զեն.



commoso
հուզուն
հա-պա՜ր ապ-սոս.
Մո - կաց Միր - զեն:

Օրն էր ուրբաթ
Լուս ի շաբաթ,
Գեաշտ էրիր ենք Մալաքյավեն.
Թղթիկ մ'եկավ Ջըվիրու քաղքեն,
Առին, բերին Մալաքյավեն,
Տվին ի ձեռ Մոկաց Միրվեն.
— Հավմր ափսոս, Մոկաց Միրվեն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


ԿՈՒԺՆ ԱՌԱ КУЖН АРА

(Ն. վարիացեs)



ԿՈՒԺՆ ԱՌԱ КУЖН АРА

(Բ վարիանտ)




ՉԵՄ ԿՐՆԱ ԽԱՂԱ ЧЕМ КРНА ХАГА

[Delicato ♩.=50]




ՇՈՂԵՐ ՋԱՆ ШОГЕР ДЖАН

[Moderato grazioso]



ՉԻՆԱՐ ԵՍ ЧИНАР ЕС

[Andante ♩=88]



ԷՍ ԱՌՈՒԻՆ ЭС АРУН

(Ա վարիանս)




ԷՍ ԱՌՈՒՆ ЭС АРУН

(Ֆ վարիացիս)




ԷՍ ԱՌՈՒՆ ЭС АРУЙ

(Գ վարիացիա)




ԷՍ ԱՌՈՒՆ ƏС АРУН

(Դ վարիացիս)



ԷՍ ԱՌՈՒՆ ЭС АРУН


(ե վարիանս)



ՏՈՒՆ ԱՐԻ ТУН АРИ

[Allegretto sostenuto ♩=72]




հե - ռու ճա - ճա - պար - հի ա,
աչ - ֆե - րիս ֆուն չի գա - լի:
կաց - չում եմ, կաց - չում եմ, յար, ա - րի՛, յա՛ր,
մութ ըն - կավ, տուն ա - րի, ա՞յ աց - սիրս յար:

ԳՈՒԹԱՆԸ ՀԱՁ ԵՄ ԲԵՐՈՒՄ

ГУТАН ХАЦ ЕМ БЕРУМ

Գեղջուկ
Rustico ♩=76



ՀԱՏՎԱԾ «ՀԱՅ ՔՆԱՐ»-Ի ԱՌԱՋԱԲԱՆԻՑ

... Մենք դրի ենք առել այս եղանակները հայ գեղջուկի բերանից անձամբ այնպես, ինչպես երգում են գյուղերում։

Դաշնակելու ժամանակ հոգ տարանք, որ պահենք ինքնուրույն բնավորություն ունեցող և զուտ ազգային դրոշմ կրող հայ գյուղական եղանակների ոճն ու ոգին։

*Շատով հրատարակելու ենք մի գիտական երկասիրություն մեր ժողովրդական երաժշտության մասին։**

Առայժմ տալիս ենք մի քանի նմուշ միայն մեր ժողովրդական եղանակներից։ Բայց, երգերը դյուրացնելու համար, կարևոր դատեցինք ինչ ինչ գործնական բաներ ասել։

ա) Հայ ժողովրդական երաժշտության մեջ շեշտն ու ամանակն իրարուց անկախ են. ուստի այս երգերն ասելու է հետևելով բառերին և խազերի վրա դրված նիշերին և ոչ թե արևմտյան երաժշտության շեշտական օրենքներին։

*բ) Բանալիքի մոտ դրված կիսավար և կիսվեր նիշերն** ամբողջ եղանակին են պատկանում։*

գ) Պետք է երգել սերտ կապով, քնքուշ, խաղաղ, ազդու և ձայնն առանց սահեցնելու։

դ) Տրոհակները  *և*  *գալիս են տալիս միայն տաղաչափական միտքն և ոտք։*

«Հայ քնար» հավաքածու գեղջուկ երգերի. Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ. էջ 3, Փարիզ, 1907։

«ՀԱՅ ՔՆԱՐ ՄԻԱՁԱՅՆ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԳԵՐԻ» Ա. ՏԱՄՆՑԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Այս տետրակով սկիզբն ենք դնում «Հայ քնար»-ի միաձայն հրատարակության։ Ցուրաքանչյուր տետրակ պարունակելու է մի տասնյակ երգ։

Ձեռքի տակ ունեցած մի քանի հազար հայ գեղջուկ երգերի համեմատական հրատարակությունը, միջոց չունենալով, թողնում ենք ապագային։

*Հույս ունինք, որ հայ գեղջուկ քնարի տասնյակները զարկ կտան ազգային, բնատուր, ինքնատիպ և նուրբ գեղարվեստի տարածման։****

«Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի». Ա տասնյակ. Գրի առավ Կոմիտաս վարդապետ. Էջմիածին, 20. 6. 1908։

---

* Խոսքը «Հայ գեղջուկ երաժշտության» աշխատության մասին է, որի մի մասը լույս է տեսել «Անահիտ» ամսագրում (էջ 70—73 և 127—130, Փարիզ, 1907), ինչպես նաև՝ Կոմիտաս, «Հոդվածներ և ուսումնասիրություններ» հրատ. (էջ 15—30, Երևան, 1941) Մ. Խ.

** Բանալի և դիեզ նշանները։ Մ. Խ.

*** «Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի» տասնյակների տպագրությունը չի իրականացվել նյութական միջոցների բացակայության պատճառով (տես՝ Մ. Աբեղյան. «Հիշողություններ Կոմիտասի մասին». «Կոմիտաս» ժողովածու. Նվիրված ծննդյան վաթսունամյակին, էջ 64—65. 1930 թ. Երևան)։ Երևանի կոմիտասյան արխիվում կան Կոմիտասի ձեռքով, թանաքով մաքուր գրված «Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի» և տասնյակի անվանաթերթը, նախաբանը և տեքստերի ու նոտաների մի մասը, և Ա. ու Բ տասնյակների ցանկը։ Մ. Խ.

ՀԱՏՎԱԾ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ»
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆԻ Ա. ՀԻՍՆԳԱԿԻ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՑ

Հազար ու մի խաղի այս առաջին հիսնյակը կազմված է ամբողջապես ժողովրդական երգերից, որոնք բոլորն ունին իրենց հատուկ եղանակները և որոշված են երգելու և ոչ թե կարդալու համար: Տների իմաստի կապակցութիւնն թերին լրացնում են եղանակն ու կրկնակները:

Ձեռքի տակ ունեցած լինելով մոտ 25 հազար քառատողերի ժողովածու, ինչպես և ուրիշ երգերի վարիանտներ, բաղդատել ենք նաև երգերի վարիանտները և վերցրել մեր կարծիքով ընտիր համարված ձևերը: Եթե թուրքերեն բառերի տեղ հայերենը գտել ենք, հայերենն ենք պահած. բայց և այնպես դեռ հաճախ մնում են թուրքերեն բառեր, մանավանդ հանգերի մեջ:

Համար 2, 4, 5, 43, 44, 45, 46, 47 և 50 երգերը ժողովրդի մեջ արդեն ամբողջ են. դրանցից համար 5, 46 և 47, որքան դիտենք, առաջին անգամ այստեղ են հրատարակվում:*

Համար 33, 37, 38, 48 և 49 երգերը ժողովրդի մեջ անկապ տներով, խառն ի խուռն երգվում են այս կամ այն անձի, կամ զանազան համանման դեպքերի և այլն մասին: Ալսպիսի բազմաթիվ տներից առել ենք միայն ընտիրները և աշխատել ենք այնպես դասավորել, որ որոշ իմաստ արտահայտի:

Մնացած 36 երգը մեր խմբագրութիւնամբ են կազմված: Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ եղանակով և ապա իրեն ծանոթ քառատողերից, առանց մտքին ուշադրութիւն դարձնելու, շարունակութիւնի մեջ երգում է անխտիր այս կամ այն քառատողը: Մենք աշխատել ենք հաջորդ տների ընտրութիւնն այնպես անել, որ բոլորը միասին, որքան կարելի է մի ամբողջութիւն կազմեն և հարմար լինին եղանակին և կրկնակների իմաստին:

«Հազար ու մի խաղ». Ժողովրդական երգարան. Առաջին հիսնյակ (երկրորդ տպագրություն): Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան. էջ 67. Վաղարշապատ, 1904:

ՀԱՏՎԱԾ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ»
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆԻ Բ ՀԻՍՆԳԱԿԻ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՑ

Հազար ու մի խաղի այս երկրորդ հիսնյակն ևս կազմված է ամբողջապես ժողովրդական երգերից, որոնք բոլորն ունին իրենց հատուկ եղանակները և որոշված են երգելու և ո՛չ կարդալու համար:

Ամբագրութիւնը կատարված է ինչպես առաջին հիսնյակում:

Համար 7 և 14 երգերը ժողովրդի մեջ արդեն ամբողջ են:


Համար 3—5, 7, 20—22, 24, 28—50 երգերի վարիանտները բաղդատված են, ամբողջացրած և տները որոշ դասավորութիւնամբ են առնված:

Մնացած 18 երգը մեր խմբագրութիւնամբ են կազմված, իրարուց անկախ խաղերից:

«Հազար ու մի խաղ». Ժողովրդական երգարան. երկրորդ հիսնյակ: Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան. էջ 99. Վաղարշապատ, 1905:

---

* Ծանոթագրութիւններում երևում է, թե այդ համարները որ՛ երգերին են վերաբերում: Ծ. խ.



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՏԵՔՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՐՃԱՏ ՆՇՈՒՄՆԵՐԸ

ԱԺ I=Կոմիտաս. Ժողովրդական երգեր։ Ազգագրական ժողովածու, հավերին նոտագրությունից փոխադրեց եվրոպականի, առաջաբանով և դիտողություններով, Սպիրիդոն Մելիքյանի։ Հրատարակություն ՀՍԽՀ Գիտության և Արվեստի ինստիտուտի, Պետհրատի երաժշտական սեկտոր, Երևան, 1931։

ԱԺ II=Կոմիտաս. Ազգագրական ժողովածու։ Հայ ժողովրդական երգեր և պարերգեր, հատոր 2-րդ. կազմող Մ. Ղ. Աղայան, խմբագիր Ռ. Ս. Կուշնարյան։ Հրատարակություն ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի, Հայպետհրատ, Երևան, 1950։

ԺԽ=Ժողովրդական խաղիկներ։ Գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով, խմբագրեց պրոֆ. դ-ր. Մանուկ Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի։ Հայպետհրատ, Երևան, 1940։

ՀԳԲ I=Հայ գեղջուկ երգեր (I տետրակ), № 13—22 (մեներգեր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Լայպցիգ, 1912։

ՀԳԲ II=Հայ գեղջուկ երգեր (նույն երգերի երկրորդ տետրակը), № 23—32 (խմբերգեր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Լայպցիգ, 1912։

ՀԺԵ=Հայ ժողովրդական երաժշտություն, նոր շարք։ Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Փարիզ.

Տետր Բ.—1925,
Տետր Դ.—1928,
Տետր Ե.—1930,
Տետր Զ.—1933,
Տետր Է.—1937,
Տետր Ը.—1951։

ՀՄԽ I=Հազար ու մի խաղ։ Ժողովրդական երգարան, առաջին հիանալակ (երկրորդ տպագրություն), խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան։ Վաղարշապատ, 1904։

ՀՄԽ II=Հազար ու մի խաղ։ Նույն երգարանի երկրորդ հիանալակը։ Վաղարշապատ, 1905։

ՀՓ=Հայ քնար։ Հավաքածու գեղջուկ երգերի, գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ։ Փարիզ, 1907։

Ծանոթագրություններում բերված երգերի ձեռագրերի համարները Երևանի Կոմիտասյան արխիվի (ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի Գրականության և Արվեստի թանգարան) քարտագրության մեջ ընդունված համարներն են։

1. «Հով արեք». ՀՖ առաջին երգն է։ Ըստ Մ. Աբեղյանի «Հով արեք»-ի համար Կոմիտասը երկու տարբեր երգերի եղանակներ է միացրել*։ Դրանցից մեկը, հավանաբար, № 314 ձեռագրի 3-րդ էջում գրված երգն է, որ իրենից ներկայացնում է մեներգի առաջին ֆրազի աղգագրական մի պարզ վարիանտը։

Ժողովրդական մելոդիան մշակման մի քանի փուլ է անցել։ 22. 9. 1900 թվական կրող մի ձեռագրում, որպես խմբերգ մշակված «Հով արեք»-ում (անտիպ) մելոդիան արդեն ընդարձակված և բարեփոխված է, սակայն մեներգի դո-մաժոր հատվածի երկրորդ կեսն ալդտեղ դեռևս չկա. առկա են ալլ տարբերություններ ևս։ Միաժամանակ, նույն կեսն ալդտեղ դեռևս չկա. առկա են ալլ տարբերություններ ևս։ Միաժամանակ, նույն ձեռագրում մատիտով կատարված Կոմիտասի ուղղումները երգի մելոդիան նմանեցնում են մեներգալին մշակման վարիանտին։ Ջնալած դրան, 1903 թվին «Հազար ու մի խաղ»-ի համար որպես երաժշտական հավելված գրված նոտաններում «Հով արեք»-ի մելոդիան վերջնական վարիանտից դեռևս որոշ (ճիշտ է՝ աննշան) տարբերություններ ունի (ալս վերջին վարիանտը Մ. Աբեղյանից վերցնելով Սպ. Մելիքյանը զետեղել է ԱԺ I, էջ 71, ալդ մասին տես նաև ԱԺ I Առաջաբանը, էջ IX)։

«Հով արեք»-ը Կոմիտասի կատարմամբ գրված է ձալնապնակի վրա (Դ.Ա. Դրակոնութլան և արվեստի թանգարան)։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 5, որտեղ եղած 5-րդ տունը, որ 1-ին տան կրկնութլունն է, ՀՖ մեներգի մեջ ավելորդ է բերված, քանի որ երաժշտութլանը չի համապատասխանում։ (Ալդ 5-րդ տունը երգի կեսն է կազմում միալն, երգը կիսատ է մնում)։ Մոսկվալի 1939 թ. հրատարակութլան մեջ անհամապատասխանութլունը վերացնելու նպատակով ավելացված է ևս մեկ տուն (2-րդ տան կրկնութլունը), որի հետևանքով «Հով արեք»-ի ոտանավորը դարձել է 6 տուն, առաջին երկու տունը գրված երկու անգամ։

Հիմք ունենալով «Հալ քնար»-ում եղած երաժշտական տեքստը և Կոմիտասի կատարման ձալնագրութլունը, ալս հրատարակութլան մեջ երգի խոսքերից կրկնվող 5-րդ տունը հանված է։

Մեներգը արտատպվում է «Հալ քնար»-ից։

Նվագակցութլան մեջ, բացի նախավերջին դո-մաժոր հատվածից, տարբեր մելոդիկ գծերն իրենց առանձին դինամիկական նշաններն ունեն։ Ալսպես, օրինակ, 8-րդ տակտում եղած f նշանը վերաբերում է միալն վերևի ձալնին, իսկ ներքևի պահված ձալնը ալդ տեղում շարունակվում է ppp, ինչպես ցույց է տրված երգի սկզբում։ «Հալ քնար»-ում ալդ f նշանը սխալմամբ դրված է երկու տողերի միջտեղում, պետք է վերևի ձալնի մոտ լինի, ինչպես ուղղված է սույն հատորում։

1939 թվի հրատարակութլան մեջ երգի կրկնութլունը ցույց է տրված 5-րդ տակտից, առանց դաշնամուրալին նախանվագի. դա անհիմն է, 2-րդ անգամ երգը կատարվում է նախանվագով (տե՛ս ՀՖ, № 1)։

2. «Հաբրբան». ՀՖ, էջ, 10, № 2։ Սոպրանոլի և տենորի փոխերգ է։ Ալս երգի մասին Մ. Աբեղյանը իր և Կոմիտասի համատեղ կատարած խմբագրական աշխատանքի կապակցութլամբ հետևլալն է գրում. «...Որովհետև «Հաբրբան ջանե-ջան» կրկնակը նա (Կոմիտասը) երկու փոքր ինչ տարբեր եղանակներով ուներ, ալդ ինձ թելադրեց մի ալնպիսի երգ խմբագրել, որ փոխեփոխ երգեն իրար դիմելով սիրո խոսքերով, տղա և աղջիկ։ Կոմիտասն սկզբում չէր ընդունում ալդ, առարկելով, թե մեր գլուղերում ալդպես չեն երգում, բալց երբ ես ցույց տվի, որ ժողովրդական երգերի բանաստեղծութլան մեջ կա փոխը, նա համաձալնվեց սրան։ Ալս մանրամասնութլունների մեջ մտնում եմ, որպեսզի պարզ լինի, որ Կոմիտասը ժողովրդական երգերը մշակելով հանդերձ՝ գնում էր ըստ ամենալնի չհեռանալ բնիկ ժողովրդականից»**։

«Հաբրբան»-ի աղգագրական վարիանտները կան № 725 ձեռագիր ժողովածուում, էջ 51, 112, 114, 115, 148։ Դրանք թե՛ միմլանցից և թե՛ մշակված վարիանտից զգալի տարբերութլուն ունեն։ Կոմիտասի մշակումը ներկալացնում է ալդ բոլոր երգերի լուրահատուկ ստեղծագործական սինթեզը։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 49, № 41

---

* Մ. Աբեղյան. «Հիշողութլուններ Կոմիտասի մասին» («Կոմիտաս» ժողովածու, նվիրված Տ.Նդալան 60-ամլակին, էջ 63, Երևան, 1930)։

** Նույն տեղում։

երգն արտատպվում է «Հայ քնար»-ից։

Կոմիտասի երաժշտական տեքստում կատարված է հետևյալ փոփոխությունը. 8-րդ տակտից սկսած, նվագակցության ձախ ձեռքի պարտիայում փոքր լիգաններով միացված էին երկու առանձին ձայնի (տարբեր մելոդիկ գծերի) պատկանող ձայնանիշեր (ՀՖ, էջ 11—12)։ Այդ լիգաները հանված են։

1939 թվի հրատարակության մեջ «Հաբրբռան»-ի նրբերանգավորումը փոփոխության է ենթարկված։ Այս երգում ևս, ինչպես «Հով արեք»-ում, շատ տեղեր նվագակցության ոչ և ձախ ձեռքի պարտիանները իրենց առանձին երանգանիշներն ունեն։

3. «Երկինքը ամպել է». *ՀՖ, էջ 15, № 3։ Ազգագրական վարիանտները գետեղված են ԱԺ I, էջ 70 և ԱԺ II, էջ 33։ Մշակման մեջ մելոդիան փոքր փոփոխություններ է կրել, մասնավորապես, ավելացվել են կրկնությունները, որոնք ազգագրական վարիանտներում չկան։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 13, № 10։*

Արտատպվում է «Հայ քնար»-ից, ակնհայտ վրիպակների ուղղումով։

4. «Անտունի». *ՀՖ, էջ 17, № 4։ № 725 ձեռագիր ժողովածուում գետեղված արդեն մշակված մելոդիան վերջնական վարիանտից մետրոռիթմին վերաբերող փոքր տարբերություն ունի։ Այդ ժողովածուում մելոդիայի գրառման մոտ հայկական և եվրոպական տառային նոտագրությամբ Կոմիտասի կողմից մատիտով կատարված մի քանի նշումներ կան, որ վերաբերում են երգի ներդաշնակությանը։ Ծուլց տրված հարմոնիան հիմնականում նման է մենաերգի վերջնական վարիանտի հարմոնիային։*

Արխիվում կա նաև երգի մշակման մի սևագրություն (ձեռագիր № 566), որտեղ մելոդիան գրեթե նույնն է, սակայն նվագակցությունը դեռևս հեռու է իր վերջնական կատարելությունից (նվագակցության մեջ գերակշռում են մեղեդիական շարժման «ընդհանուր ձևերը»՝ արպեջիո, գամմայական ընթացք)։ Դա Կոմիտասի սկզբնական փորձերից մեկն է, և ցույց է տալիս «Անտունի»-ի նվագակցության ֆակտուրային, ռիթմի, հարմոնիայի և ընդհանրապես այդ երգի խոր անհատական երաժշտական կերպարի կազմակերպման ընթացքը։ Այդ փորձ-սևագրությունը մի ավելորդ անգամ հաստատում է երգի ըստեղծման վրա Կոմիտասի դրած աշխատանքի ստեղծագործական ողջ խորությունն ու նշանակալիությունը։

«Անտունի»-ի բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 6, № 2։ ՀՄԺ I երկու տպագրություններում և մշակման մեջ այդ տեքստը տարբերություն ունի։

Առաջին տպագրության մեջ երգի 2-րդ տան 4-րդ տողը գրված է՝

Ղարիբի սիրտն է պղտոր ու մոլոր։

Երկրորդ տպագրության մեջ «ժողովրդական մի վարիանտից առնելով» փոխված է՝

Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր։

Այստեղից էլ Կոմիտասը վերցրել է երգի վերնագիրը։ Առկա են այլ փոքր տարբերություններ ևս, օրինակ.*

Ասված սիրեք՝ մի ըլնիք սըրտիկ սևավոր։

Երկրորդ տպագրության մեջ փոխված է՝

Ախ, իսկի մի ՚լնիք սըրտիկ սևավոր։

ՀՄԺ երկու տպագրություններում՝

էրթամ ՚ձի թալեմ էն գարնան գետեր։

Կոմիտասի մշակման մեջ՝

էրթամ ՚ձի թալեմ էն ելման գետեր։

1939 թ. հրատարակության մեջ «Անտունի»-ի նվագակցության 2-րդ տակտի երկրորդ մի ձայնանիշները միացնող գիծը հանված է, որի հետևանքով այդ տեղում ընդունվում է I և IV օկտավալի մի, մինչդեռ պետք է լինի II և IV օկտավալի մի (այդպես է նաև բոլոր համանման տակտերում, մինչև 14-րդ տակտը ներառյալ), կան մի շարք վրիպակներ ևս։ Երգն արտատպվում է «Հայ քնար»-ից առանց փոփոխության։

5. «Գարուն ա». *ՀՖ, էջ 24, № 6։ Ազգագրական վարիանտը կա ԱԺ I, էջ 5, ԱԺ II, էջ 29 (1891 թվին գրված Կոմիտասի ձեռքից) և № 325 ձեռագիր ժողովածուում,*

---


* *Տես այդ մասին Մ. Աբեղյանի Հայ հին գրականության պատմություն, հատոր 2-րդ, էջ 566, Երևան, 1946։*

էջ 89։ Առաջին երկուսը, որ բերված են տողին, միմյանցից և մշակվածից տարբեր են։



№ 325 ձևագրի վարիանտը մշակվածից տարբերվում է նրանով, որ երկնսակը 1-4 նախատակտով է սկսվում։ Բանաստեղծական տեքստը գետեղված է ՀՄՖ I, էջ 38, № 32։

«Գարուն ա» երգը Կոմիտասը, մշակել է նաև որպես խմբերգ, դաշնամուրով (անտիպ) և առանց նվագակցության (ՀԲ, էջ 26, № 6բ)։ Առանց նվագակցության խմբերգի և մեներգի մելոդիան նույնն է, ներդաշնակության մեջ մեծ զանազանություն կա։ Դաշնամուրով խմբերգի սեռագիրը ձեռագրերից մեկում (ձեռ. № 555) կա նախանվագ, որը մեներգի նախանվագի մի նախնական վարիանտն է։



Արտատպվում է «Հալ քնար»-ից առանց վոկալության։ «Գարուն ա» երգով ավարտվում են «Հալ քնար»-ում եղած մեներգերը։

6. «Միրաճի ծառ». Այս երգի համար հիմք են ծառայել Կոմիտասի Աղգագրական ժողովածուում գետեղված հետևյալ երգերը.

ա) «Միրաճի ծառ, բար մի տա», բ) Հա տվեք, հետ տվեք» և գ) «Հով, հով, հովն ընկավ» (Աժ I, էջ 3, № 8, 9, 10)*։ Այդ երգերը մշակման մեջ մտնելով իրենց ամբողջականությունը պահպանել են, սակայն թե՛ խոսքի և թե՛ երաժշտության, և հետևարար նաև ընդհանուր բնույթի տեսակետից միմյանց հետ մոտիկ լինելով և միմյանց լրացնելով, Կոմիտասի ստեղծագործության մեջ դրանք օրգանապես միաձուլվել, մեկը մյուսի բնական շարունակությունն են դարձել։ Այդպիսով ստացվել է մեծ ֆորմալի, լայնաշունչ ստեղծագործություն։

Հետաքրքիր է, որ Կոմիտասի ժողովրդական երգերի տետրում (ձեռ. № 302) այդ երեք երգն արդեն գրված են հենց այն հաջորդականությամբ, ինչպես գրվել են մշակման մեջ։ Բանի որ Կոմիտասի այդ տետրը (Աժ I-ի բնագիրը) Սպ. Մելիքյանի կողմից արտագրվել է 1904 թվին, որտեղ մինչև այդ «Միրաճի ծառ»-ի ամբողջությունը՝ նվրդաշնակությամբ թե առանց նվրդաշնակության գոյություն է ունեցել (տես Աժ I, Առաջաբանը, էջ VIII)։ Ի դեպ, հիշյալ երեք երգի խոսքերն էլ նույն հաջորդականությամբ միացված են որպես մեկ երգ ՀՄՖ II հիմնակում (էջ 5, № 1), որն, ինչպես հայտնի է, լույս է ընծայվել 1905 թվին։

---

* «Հով, հով, հովն ընկավ» երգը Ազգագրական ժողովածուում երեք տարբեր վարիանտ ունի՝ № 7, 10, 37։ «Միրաճի ծառ» մեներգում Կոմիտասն օգտագործել է միայն № 10-ը։

Երեք երգերի առանձին դարձվածքները № 302 ձեռագրում և մշակումներում վարիանտներ ունեն։ Կարևոր է նշել առաջին երգի («Միրանի ծառ») 2-րդ նախադասության վարիանտը, որտեղ երգի հնչյունածավալը տերցիա ավելանում է.



և երկրորդ պարբերության սկզբի վարիանտները, որոնք լադային տարբեր երանգներ ունեն.



Բերված վարիանտներից վերջինը Կոմիտասն օգտագործել է «Միրանի ծառ»-ի խմբական մշակումներում (ձեռ. № 405, էջ 10 շրջ. և 7 շրջ.)։

«Միրանի ծառ» մեներգը առաջին անգամ հրատարակվել է 1928 թվին (Հմծ տետր Դ)։ Այդ հրատարակության նախաբանում ասված է, որ «Միրանի ծառ»-ը, ինչպես նաև նույն տետրի մեջ ընդգրկված «Կռունկ», «Էրվում եմ», «Նազանքա և «Ինկի ծառ» մեներգերը քաղված են մի ձեռագիր հավաքածուից, որը պահպանվել է օր. Մարգարիտ Բաբայանի խնամքով, օրինակված 1911 թվին, և որի մեջ «Միրանի ծառ»-ը, «Կռունկը»-ը և «Նազանքա»-ը գրված են եղել հենց իր՝ Կոմիտասի ձեռքով։

Կոմիտասի արխիվում 1955 թվի նյութերի մեջ ստացվել է Մ. Բաբայանի ձեռագիր մի տետր, ընդօրինակված 1911 թվին Սպիտակ կղզում (Շենքլին, Անգլիա), որի մեջ «Միրանի ծառ» երգը չկա, իսկ «Կռունկ»-ն ու «Նազանքա»-ն էլ գրված են ոչ թե Կոմիտասի, այլ Մ. Բաբայանի ձեռքով։ Ըստ երևույթին Հմծ նախաբանում խոսքը մի այլ հավաքածուի մասին է։ Նույն 1955 թվի նյութերում կան «Միրանի ծառ» մեներգի մշակման 4 օրինակ, առանձին նոտաթղթերի վրա, որոնք բոլորն էլ համարակալված են № 554։

Դրանք են.

ա) Մատիտով, սևագիր օրինակ։ Երգի 1-ին հատվածի տոնայնությունը ֆա-մինոր է (բանալիում գրված է 3 բեմոլ), գրվածը թերի է, մինչև «Հա ավկա»-ը։

բ) Նույնը, որոշ փոփոխություններով, թանաքով արտագրված, նույնպես սևագիր։ Լրիվ է, բայց արտահայտչականիշները և տեմպի ցուցիչները գրված չեն։

գ) Թանաքով մաքուր գրված օրինակ։ Առաջին հատվածի տոնայնությունը լյա-բեմոլ-մինոր (բանալիում գրված է 6 բեմոլ), լրիվ է։

Այս երեքը գրված են Կոմիտասի ձեռքով։

դ) Թանաքով մաքուր գրված օրինակ։ Նախորդի արտագրությունն է, կատարված Մ. Բաբայանի ձեռքով։

Այս վերջինը մի մասնավոր հետաքրքրություն ունի, այն է, որ երգի վերջում, նոտային թերթի աջ անկյունում հավանաբար Մ. Բաբայանի ձեռքով, մատիտով գրված է «1906, Փարիզ», ըստ երևույթին երգի մշակման կամ արտագրության ժամանակն ու տեղը։ Նույն ձեռագրի սկզբում, վերևի ձախ անկյունում դարձյալ Մ. Բաբայանի ձեռքով*

* *Ընդունելով, որ մեներգը առեղծվել է ամենաուշը 1906 թվականին (տե՛ս նաև Սալ. Մելիքյանի դիտողությունն այդ մասին ԱԺ I, էջ VIII-ում), չի պարզվում սակայն, թե ինչպես է, որ «Միրանի ծառ»-ը՝ Կոմիտասի լավագույն գործերից մեկը, տեղ չի գտել ո՛չ նրա «Հայ գնար» ժողովածուում (հրատարակված 1907 թվին), ո՛չ էլ, հետագայում, «Հայ գեղջուկ երգեր» ժողովածուում։*

գրված է՝ „Sol mineur, avec un bémol այսինքն նշված է երգի վերջնական տոնայնությունը։ Ամենայն հավանականությամբ դա Կոմիտասի ցուցմունքն է։

Թեև հիշված ձեռագրերում եղած տարբերությունները մեծ չեն տպագրվածից և տպագրվածից ընդհանուր առմամբ շատ չեն (դրանք հիմնականում վերաբերում են երգի առաջին պարբերությանը), այնուամենայնիվ այդ ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս երգի վերջնական վարիանտի գոյացման ընթացքը։ Տոնայնական փոփոխությունից բացի, անհրաժեշտ է նշել նաև երգի սկզբնական ֆրազի տակտում ունեցած դիրքի փոփոխումը («ա» ձեռագրում այդ սկիզբը երկու վարիանտով է գրված)։ Սառն բերում են «ա» և «գ» ձեռագրերում եղած երգի սկզբի վարիանտները։



Ինչպես տեսնում ենք, ոչ մեկն էլ նման չէ տպագրվածին, ինչպես նաև Աղգագրական ժողովածուում եղած միաձայն մելոդիային, որտեղ երգն սկսվում է 1-ին տակտում և առաջին երկու ձայնանիշը նախատակտ են կազմում։

«Գ» և «դ» ձեռագրերը տպագրվածից այլ տարբերություն չունեն, եթե նկատի չառնենք, որ այս ձեռագրերում երգի դինամիկայի և պեդալի նշանները ավելի մանրամասնորեն են գրված և տեմպի նշումները գրված են ոչ թե իտալերեն, այլ հայերեն։

Հարց է ծագում. Մ. Բաբայանի կողմից ընդօրինակված այդ «դ» ձեռագիրն է արդյոք հիմք հանդիսացել 1928 թվի տպագրության համար։ Եթե այո, ուրեմն պետք է ենթադրել, որ վերոհիշյալ փոփոխությունները կատարել է այդ հրատարակության խմբագիր կոմպոզիտոր Վ. Սարգսյանը. այն է՝ նա երգի տոնայնությունը փոխել է Մ. Բա-

բալանի ընդօրինակութեան մեջ եղած Կոմիտասի ցուցմունքի հիման վրա, իսկ սկզբնական ֆրազի տակտալին տեղը՝ Ազգագրական ժողովածուի հիման վրա։ Դժբախտաբար այդ մասին Հին Դ տետրում որևէ դիտողութեյուն չկա։ Իսկ եթե ոչ, ապա մնում է կարծել, որ դոլութեյուն ունի «Միրանի ծառ» մեներգի մշակման մի այլ, թերևս վերջնական բնագիր-վարիանտ, որը դեռևս մեզ հասնելի չէ։ Քանի որ այդ հարցը լիովին պարզել առայժմ հնարաւոր չէ, նպատակահարմար գտնվեց երգի առնայնութեյունը և սկզբնական ֆրազի տեղը պահպանել այնպես, ինչպես 1928 թվի տպագրված օրինակում է։

Ներկա հրատարակութեյան մեջ պահպանված են նաև տպագրվածում եղած տեմպի և կատարման բնույթի իտալերեն նշումները, որոնք ձեռագրերում չկան։ Տպագրվածի մեջ դինամիկայի և պեդալի պակասող նշանները այս հրատարակութեյան մեջ առնված են Կոմիտասի ձեռագրից («գ»)։ Տեմպի հայերեն նշումները չեն բերված, որովհետև դրանք եղածին գրեթե նոր բան չեն ավելացնում։ Այդ նշումներն են.

Lento. Con affetto	*հատվածի համար՝ ծանր,*
Meno lento	*հատվածի համար՝ քիչ աշխույժ,*
Moderato	*հատվածի համար՝ չափավոր-հանդարտ,*
Lamento, ma tranquillo	*հատվածի համար՝ չափավոր և հանդարտ,*
Più lento, con dolore	*հատվածի համար՝ քիչ ծանր։*

Չափահարի ցուցիչները նույնն են երկու տեղում։

Ձեռագրում երգի վերջից հաշված 6—7 տակտերի մոտ կա՝ «Չափավոր և հանդարտ. 1/4=92» նշումը, որը 1925-ի և ներկա հրատարակութեյան մեջ դուրս է թողնված։ 1928 և 1939 թ. թ. հրատարակութեյան մեջ բանաստեղծական տեքստում եղած մանր վրիպումները ներկա տպագրութեյան մեջ «Հազար ու մի խաղ»-ի հիման վրա ուղղված են, կատարված են նաև այլ մանր ուղղումներ։

«Միրանի ծառ» մեներգը ձոնված է երգիչ Արմենակ Շահ-Մուրադյանին (Հին, տետր Դ)։

7. «Ջելեր, ցոլեր». *Հին 1-ին տետրի առաջին երգն է, № 13*։ Բանաստեղծական տեքստը Համ հիանալիներում չկա։*

«Ջելեր, ցոլեր»-ը իրենից ներկայացնում է ժողովրդական երկու երգի միացում։ Այդ երկու երգը («Ջելեր, ցոլեր» և «Սարի սովոր») առանձին-առանձին, բայց մեկը մյուսից անմիջապես հետո, զետեղված են Կոմիտասի Ազգագրական ժողովածուի (Ա-ժ I) բնագրում (ձեռ. № 302, էջ 63, № 310 և 311)։ Ինչպես Կոմիտասի մի շարք այլ ստեղծագործութեյուններում, այս դեպքում ևս ժողովրդական առանձին երգերը մեկ ամբողջութեյան մեջ միացված են նուրբ կատարված ընտրութեյամբ։

Կոմիտասի արխիվում պահվում են այս երգի մշակման մի քանի ձեռագիր, որոնք տպագրվածի նախնական վարիանտներն են և նրանից փոքր տարբերութեյուն ունեն։ Ձե-



ռագրերից մեկում երգի նախանվագը և վերջնանվագը չկան, №№ 424 և 554-ում նախանվագը երկու տակտ է (կրկնվում է 1-ին տակտի ֆիգուրը), իսկ տների կրկնութեյանն անցնելու եռատակտ ֆրազը բացակայում է։ № 401 ձեռագրում երգի վերջին տան հա-

---

* *«Հայ գեղջուկ երգերը» բաղկացած են երկու տետրակից. տետրակ Ա՝ մեներգեր (№ 13—22), տետրակ Բ՝ խմբերգեր (№ 23—32)։ Այդ ժողովածուն Կոմիտասը դիտում էր որպես «Հայ քնար»-ի շարունակութեյուն, ուստի առաջին տետրակում երգերի համարակալումը սկսել է № 13-ից։*

մար մի քանի վերջավորութիւն կ՚ունենայ, որոնցից մեկը (վերը բերվածը) տպագրվածից դժուար տարբերվում է։

№ 568 մեծադիր տետրում, որը գրված է հավանաբար 1911 թ. առաջին կեսին, «Քելեր, ցոլեր» երգն ունի խմբագրական շատ փոփոխություններ, որոնց շնորհիվ նա ստանում է իր գրեթե վերջնական տեսքը, պահպանելով տպագրվածից աննշան տարբերություններ։

Տպագրված երգում (ՀԴԵ I), կրկնակի վերջին տակտում («Ե՛կ, տղա») նվագակցության երկրորդ դո-դիեզը որոշ կասկածի տեղիք է տալիս։ Վերոհիշյալ ձեռագրերից ոչ մեկում այդ նոտան չկա, այլ դրա փոխարեն կա է։

«Քելեր, ցոլեր»-ը Կոմիտասը մշակել է նաև որպես խմբերգ (ՀԺԵ, տետր Դ)։ Խմբերգի և մեներգի մելոդիանները լադային երանգի տեսակետից փոքր, բայց կարևոր տարբերություն ունեն միմյանցից, երկու մշակումների ներդաշնակման մեջ մեծ զանազանություն կա։

Արտատպվում է «Հալ գեղջուկ երգեր»-ից առանց փոփոխության։

8. «Քելե, բելե»· ՀԴԵ I, էջ 5, № 14։ Բանաստեղծական տեքստը ՀՄԽ հրատարակություններում չկա։

Հետաքրքրական է այս երգի եղանակի խիստ մոտիկությունը Կոմիտասի գրի առած մի այլ՝ «Ազիզ բալիս սպանեցին» սրտառուչ ողբերգի եղանակին (գրի է առել Կողբ գյուղում, 1913 թ. տես՝ ԱԺ II, էջ 74, № 68)։ Նույն երգի մի ուրիշ վարիանտ, իր եղանակով ավելի ևս մոտիկ «Քելե, քելե» երգին, գրի է առել Կոմիտասի աշակերտ Հակոբ Հարությունյանը «Ավտրաշին սպանեցին» խոսքերով (տե՛ս նրա «Մանյակ» ժողովածուի բնագիրը ԴԱ Արվեստի ինստիտուտում)։

Մշակումը սևագիր վիճակում գտնվում է Կոմիտասի 1911 թվականի տետրում (ձեռ. № 399, էջ 19—20), կա նաև մոմաթղթի վրա տպագրությունն ներկայացնելու համար սև թանաքով մաքուր արտագրված (ձեռ. № 401)։ Տպագրվածի համեմատությամբ այս երկուսն էլ նախնական վարիանտներ կարող են համարվել։ Մելոդիան նույնն է, եթե չհաշվենք կրկնակում եղած զարդարանքի փոքր զանազանությունը։ Լեզվանը նվագակցության սկզբնական տակտերի ռիթմի և ֆակտուրալի տարբերությունն է։ Ձեռագրի մեջ շարժումը հաճախակի է, շարունակ ութերորդականներով, այդ տակտերում պահպանվում է նախանվագի ֆակտուրան։ Մոմաթղթի վրա գրված օրինակում մատիտով կատարված փոփոխությունները երգը բերում են գրեթե իր վերջնական տեսքին։

Այս երգում հետաքրքիր և Կոմիտասի համար բնորոշ է պեդալի առանձնահատուկ գործածությունը։

«Քելե, քելե»-ն արտատպվում է «Հալ գեղջուկ երգեր»-ից։ Պեդալի նշանակման մեջ 11-րդ և 15-րդ տակտերում եղած ակնհայտ վրիպակներն ուղղված են վերոհիշյալ ձեռագրերի հիման վրա։

9. «Սար, սար». ՀԴԵ I, էջ 8, № 15։ № 725 ձեռագիր տետրում մելոդիայի մելիսմը ավելի առատ է, մշակման մեջ Կոմիտասն այն չափավորել է։ Տեքստը զետեղված է ՀՄԽ I, էջ 21, № 17։

Կոմիտասի արխիվում կան այս փոքրիկ մեներգի մշակման մի շարք սևագիր էսքիզներ, մի մասը թերի գրված։ Հիշենք դրանցից № 399 ձեռագիր տետրում եղածը, որ «1911. 8/բ. Շենքլին» նշումն է կրում և հայկական ձայնանիշներով կատարված բազմաթիվ ուղղումներ ունի, և № 401 ձեռագրում եղածը, որ արտագրված է տպագրությունն ներկայացնելու համար և նման է երգի մշակման վերջնական վարիանտին։

Երգը մշակված է նաև քառաձայն խառը խմբի համար (անտիպ)։

Արտատպվում է «ՀԴ երգերից» առանց փոփոխության։

10· «Կանչե կռունկ». ՀԴԵ I, էջ 10, № 16։ Ազգագրական ժողովածուում այս երգը կա այլ խոսքերով, «Դե քելե, դե քելե Ցուղաբեր» վերնագրով (հատոր I, էջ 25)։ Մշակման մեջ մելոդիան փոքր փոփոխություններ է կրել։ Տեքստի առանձին հատվածների վարիանտներ կան ԺՆ, էջ 227—232։

Մեներգի մշակման օրինակները, չհաշված մի շարք անավարտ էսքիզներ, կան № 568, 441 և 399 ձեռագրերում։ Դրանցից երկրորդում կա՝ «Ալեքսանդրիա, 1911, 19/Նբ» (Կոմիտասի նշումներից դատելով առաջինն ավելի վաղ է գրված), վերջինն ինչպես ասվել է, գրված է 1911 թվի օգոստոսին, Սպիտակ կղզում (Շենքլին, Անգլիա)։

№ 399 ձեռագրում եղած տարբերությունը տպագրվածից թեև շատ չէ, բայց երևում է երգի վերջնական խմբագրման ընթացքը։ Վերջին ձեռագրում երգը գրեթե լիովին նմանվել է տպագրված վարիանտին, սլատեղ պակասում են կատարողական նշումները։

№ 568 և 441 ձեռագրերում եղածը տպագրվածից հետևյալ տարբերությունն ունի. 10 – 12-րդ տակտերում (կրկնակ) բասի ձգվող հնչյունը սոլ-դիեզն է, իսկ 16—17-րդ տակտերում՝ բե-դիեզը։ Մինչդեռ վերջնական վարիանտում կոմիտասը բասն ավելի շարժուն է դարձրել (սեկունդալին կարճ մոտիվները հաջորդաբար կանգ են առնում լյա-դիեզ, սոլ-դիեզ, ֆա-դիեզ, մի-դիեզ հնչյունների վրա) և այդ միջոցով բասում թաքնված պոլիֆոնիկ ընթացք է ստեղծել։

ՀԴԵ ժողովածուում այս երգի մեջ վրիպակներ կան. 18-րդ տակտի սի-դիեզը պետք է լինի ռե-դիեզ, ինչպես վերը հիշված ձեռագրերում է։ Վերջից 5-րդ տակտում դրված ավարտման նշանը պետք է լինի կրկնութեյան նշան, դրանից հետո եկող քառատակտը պետք է կատարվի միայն մեկ անգամ, երգի վերջում, որպես վերջնվադ (ի դեպ ձեռագրերում այդ քառատակտը չկա, հավանաբար դա ավելացված է տպագրութեյան ներկայացված վերջնական վարիանտում)։ ՀԴԵ այս վրիպակները նույնութեյամբ կրկնված են հետագա բոլոր հրատարակութեյուններում։

«Կանչն, կռունկ»-ը արտատպվում է «ՀԴ երգերը»-ից վերոհիշյալ վրիպակների ուղղումով, պիզալի նշումը լրացված է։

11. «Ես սարեն կուգայի». ՀԴԵ I, էջ 14, № 17։ Սպ. Մելիքյանը գտնում է, որ սա Աղդագրական ժողովածուում եղած «Ես ելա գնացի» երգի մշակումն է (տես ԱԺ I, էջ 18 և 90), մինչդեռ դրանք միմյանցից տարբեր, ինքնուրույն երգեր են։ «Ես սարեն (կամ՝ «Ես վերեն) կուգալի» երգի միաձայն վարիանտը կա № 725 ձեռագրում, որտեղից բերվում է մելոդիայի առաջին կեսը, որն զգալի տարբերութեյուն ունի մշակվածից։




Նման մելոդիա, բայց մետրոռիթմական այլ ձևակերպում ունի № 325 ձեռագիր ժողովածուի 25-րդ էջում եղած աղգագրական վարիանտը (նույնը կա նաև № 317 ձեռագրի 17-րդ էջում)։



Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 38, № 33։ Երգն արտատպվում է «ՀԴ երգերը»-ից, տեխնիկական կարգի փոփոխութեյուններով։

Կոմիտասի արխիվում կան մեներգի մշակման մի շարք ավարտված և թերավարտ ձեռագիր օրինակներ, որոնք տպագրվածից քիչ բանով են տարբերվում (ձեռ. № 403, 568 և այլն)։ Այդ ձեռագրերում կան երգի նախանվագի հետևյալ վարիանտները.






12. «Ջինչ ու գինչ». *ՀԴԵ I, էջ 17, № 18։ Ազգագրական վարիանտները գտնվում են № 325 ձեռագիր ժողովածուում, էջ 137—139։ Դրանցից երկրորդը Կոմիտասի մշակումից քիչ է տարբերվում, իսկ առաջինը, որ ստորև բերվում է, այլ եղանակ ունի։*

Շամիրամի առասպելի հետ կապված ժողովրդական երգերից (որոնցից մեկն էլ «Ջինչ ու գինչ» երգն է) Կոմիտասի ձայնագրություններում կան նաև «Ջիմ գլխու ֆաթեն կիտամ»-ը (ԱԺ II, էջ 27) և մի քանի այլ երգերի խոսքեր։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ II, էջ 43, № 24։

Այս մեներգում բնորոշ է դաշնամուրի պարտիայի շարադրությունը, որ կատարված է երկու տարբեր՝ մանր և խոշոր շարված քով։ Մանր շարված քով գրվածը կազմում է մի թափանցիկ հարմոնիական ֆոն, որի վրա շեշտվում, ցուցադրվում են ալդ֊ֆոնի առանձին հնչյունները (խոշոր շարված քով գրվածը), որոնք, ի դեպ երգի մելոդիայից են վերցված և հարմոնիկ նվագակցության մեջ թաքնված պոլիֆոնիկ դիծ են ստեղծում (նվագակցության մեջ այդպիսի թաքնված ենթաձայնային պոլիֆոնիկ դիծ Կոմիտասն



ստեղծել է իր այլ երգերում ևս)։ 1939 թվի հրատարակության մեջ՝ այդ տարբեր շարված քներն անհիմն կերպով տպվել են միևնույն շրիֆտով, որի հետևանքով նվագակցության արտահայտչությունը զգալի կերպով տուժել է։

Հետաքրքրական է նշել, որ երգի նվագակցության մեջ իր ուզած արտահայտչականությունը ստեղծելու համար Կոմիտասը որոնել և փորձել է շարադրման տարբեր եղանակներ։ Պահպանված ձեռագրերը ցույց են տալիս այդ որոնումների ընթացքը։ Այսպես, № 568 ձեռագրում, որն ինչպես ասվել է, վերաբերում է 1911 թվականին, նվագակցությունը գրված է մի շրիֆտով, բայց ամեն մի նոտան իր առանձին երանգանիշն ունի, և վերջնական վարիանտի «խոշոր» նոտաները այստեղ խիստ շեշտված են (p-pp-ppp ֆոնի վրա՝ f և portamento)։ № 401-ում, որ հատկացված է եղել տպագրության ներկայացնելու, երկու թերավարտ գրված օրինակ կա. մեկը դեռևս հին նման, մյուսն արդեն երկու տեսակի՝ մանր և խոշոր նոտաներով։ Սրանից երևում է, որ Կոմիտասը արտահայտչական այդ պրոմին «Ջինչ ու գինչ» երգում մեծ կարևորություն էր տալիս, երգը կատարելիս դա անպայման հաշվի պետք է առնվի։

Մեներգի առաջին տակտում գտնվող glissando *տերմինը ցույց է տալիս սահուն, լավ կապակցված,* molto legato *կատարումն։ 4-րդ տան երկրորդ տողը բնագրում հա-*


վելլալ վանկ ունի, այդ տողը պետք է կատարել ալտպես (տե՛ս նոտալին օրինակը). ապա՝ ինչպես տեքստում է։



Նուշտութլամբ արտատպվում է «ՀԴ երգերից»։

13. «Ալագյազ (սարն ամպել ա)». ՀԴԵ I, էջ 19, № 19։ Ամ բնագրում (ձեռ. № 302) երգը գտեղված է որպես № 115, «Բերդի բոլոր ավազ ա» խոսքերով (կրկնակի խոսքերը նույնն են) և ունի երկու վարիանտ, որոնցից 2-րդը Կոմիտասի խմբագրած վերջնական վարիանտն է։ Ժամանակին Սպ. Մելիքյանը այդ երգը չի արտագրել, հետո վերցրել է Մ. Աբեղյանից (տե՛ս Ամ I էջ IX և 70)։ Կա նաև № 325 ձեռ. ժողովածուում, էջ 157։ Բանասաեղծական տեքստը կա ՀՄԽ I, էջ 15, № 11։

Կոմիտասի արխիվում այս մեներգի մշակման էսքիզներ կան։ № 403 ձեռագրում (ծոցատետր) երգը մի քանի անգամ գրված է սի-մաժոր-ում, 6-րդ էջում գրվածն արդեն վերջնական տոնայնութլան մեջ է (լյա-մաժոր), բայց նվագակցութլունը դեռևս տարբերութլուն ունի վերջնականից։ № 447 ձեռագրում երգը նախանվագ չունի, նվագակցութլան շարադրումն այստեղ մի փոքր այլ է (բերվում է նվագակցութլան սկզբի երկու տակտը)։



Որոշ տարբերութլուն կա նաև ներդաշնակման մեջ, վերջնական վարիանտն անհամեմատ կատարյալ է։

№ 399 ձեռագրում «Ալագյազ»-ը գրում է «1911 թ. 8/ը, Շենքլինց» նշումը։ Կոմիտասը «Ալագյազ»-ը մշակել է նաև խմբի համար (ՀԴԵ, տետր Դ)։ Մեներգը արտատպվում է «ՀԴ երգերից»-ից տեխնիկական կարգի մանր փոփոխութլուններով։

14. «Խնկի ծառ». Կատարման ժամանակ այս երգը կցվում է նախորդին, «ՀԴ երգերում» այդպես էլ դետեղված է «Ալագյազ»-ից հետո (I. էջ 32, № 20)։ «Խնկի ծառ»-ը ևս խմբական վարիանտ ունի (ՀԴԵ, տետր Դ), որ կատարվում է խմբական «Ալագյազ»-ին կից։

Ուշադրութլան արժանի է այն, որ Կոմիտասն այդ երկու երգի համար չափահարի համանման ցուցիչ է նշանակել (մի դեպքում 1/4-ը, մյուս դեպքում 3/8 = 63-ի), մինչդեռ այժմ անհիմն կերպով սովորութլուն է դարձել «Խնկի ծառ»-ը (մանավանդ խմբական վարիանտը) գրվածից շատ ավելի արագ կատարելը։

Ազգագրական վարիանտները կան Ամ I, էջ 35, ձեռագիր № 325, էջ 159։ Դրանց և մշակվածի մեջ փոքր տարբերութլուններ կան։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԽ I, էջ 16, № 12 և նույնպես գրված է «Ալագյազ»-ից հետո։

№ 399 ձեռագիր տետրում այս երգը, ինչպես և «Ալագյազ»-ը, գրում է «1911 թ. 8/ը, Շենքլին» նշումը։ Վերջնական վարիանտի համեմատութլամբ այդ ձեռագրում եղած տարբերութլուններից նշենք portamento-ն (—), որ դրված է նվագակցութլան ամեն մի ֆիգուրի 2-րդ և 4-րդ ձայնանիշների վրա, բացի դրանից, 2-րդ, 4-րդ և 6-րդ տակտերում, դաշնամուրի պարտիայում կան այլ տարբերութլուններ ևս։ № 401 ձեռագրում, տպագրութլան նախապատրաստելու համար երգը մաքուր արտագրելուց հետո Կոմիտասը վերանայել է նվագակցութլունը։ Մատիտով կատարված ուղղումները հանգեցնում են մշակման վերջնական վարիանտին։ Այս ձեռագրում կա Կոմիտասի նշումը՝ «Ութնյակ բարձր փորձել Բ տունը. նույնը՝ 2 տողս։ Ալպիսով, նվագակցութլունը սկզբում նախատեսվել է ամբողջութլամբ միևնույն օկտավայում կատարելու, ապա հեղինակը փորձել է 2-րդ (և 4-րդ) տան նվագակցութլունը կատարել օկտավա բարձր, ապա ամեն մի տան 3-րդ և 4-րդ տողերի համար կատարել օկտավա բարձր։ Վերջնական վարիանտում նվագակցութլունը հաջորդական կարգով մեկ տողի համար ցածր, մեկ տողի համար բարձր է կատարվում։

«Խնկի ծառ»-ն արտատպվում է «ՀԴ երգերից» առանց փոփոխութլան։

15. «Ալ այլուղս». Տհնորի և սոպրանոյի փոխերգ է, ՀԴԵ I, էջ 24, № 21։ Բանաստեղծական տեքստը ՀՄԽ հիմնակներում չկա։

Այդ երգի մշակման էսքիզները գտնվում են № 402 ծոցատետրում, 1911 թվակա-

նի տեսրում (ձեռ. № 399) և № 401-ում։ Երեք տեղում էլ վերջնական վարիանտից փոքր տարբերություններ կան դյուրաշնակման մեջ. այսպես օրինակ՝ երգի 2-րդ նախադասության սկիզբը № 399-ում սոլ-մաժոր է, տպագրվածում՝ մի-մինոր։

Արտատպվում է «ՀԴ երգեր»-ից տեխնիկական կարգի մանր փոփոխություններով։

16. «Կուժն առա». «Հայ գեղջուկ երգերից» I տետրի վերջին երգն է (էջ 28, № 22), դրված է նաև խմբի համար (ՀԴԵ I, էջ 18)։ Ազգագրական ժողովածուում այս երգի մեջ տարբեր երկու վարիանտ կա (ԱԺ I, էջ 40, № 133, երկրորդը վերցված է Մ. Աբեղյանից)։



Մշակման համար կոմիտասը հարդարելով, պարզեցրել է նախապես դրի առնվածը։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 13, № 9։

1911 թվականի տետրում (ձեռ. № 399) այս երգը չկա։ Հնարավոր է, որ պա հանդիսացել է տետրի 10-րդ երգը, որը տետրում չի պահպանվել (ի դեպ հնարավոր է նաև, որ այդ պակասող 10-րդ երգը եղել է «Բելեր, ցոլերս»-ը, կամ «Կռունկ»-ը)։ «Կուժն առա»-ն բացակայում է նաև տպագրությանն ներկայացնելու համար մոմաթղթի վրա դրված թերթերում (ձեռ. № 401)։ Դրա փոխարեն № 568 տետրում կա մեներգի երկու վարիանտ, որոնք մշակման վերջնական վարիանտից թեև երաժշտական կերպարով հարե և նման, բայց շարադրությամբ տարբեր են նրանից և ինքնուրույն դեղարվեստական արժեք ունեն։ Այդ վարիանտները (երկուսն էլ սի-բեմոլ-մաժոր են) բերված են այս հատորի հավելվածում։

Կոմիտասի արխիվում կան «Կուժն առա»-ի խմբական մշակման օրինակներ, որոնցից մեկը (ձեռագիր № 413) դաշնամուրի նվագակցություն ունի, կատարված մի նոր, այլ շարադրությամբ։

Արտատպվում է ՀԴ երգերից լիգատուրայի փոքր թեթևացումով։

17. «Կաքավի երգը». Առաջին անգամ հրատարակվել է Թբիլիսիում, որպես հավելված մանկական «Հասկեր» ամսագրի (1908 թ. ապրիլ)։ Խոսքերը ժողովրդական են, մշակված բանաստեղծ Հովհ. Թումանյանի կողմից («Կաքավի գովքը», Հովհ. Թումանյան, Երկեր, հ. I, 1958, էջ 103)։ Երաժշտությունը կոմիտասինն է։

«Կաքավի երգը» դրված է մենակատարի և մանկական խմբի համար այսպես. երգի հիմնական մասում ամեն մի ֆրազը կատարվում է նախ մենակի, ապա խմբի կողմից նույնությամբ կրկնվում է։ Կրկնակը կատարվում է խմբով, բայց խումբը բաժանված է երեք մասի. 1-ին ֆրազն երգում է խմբի Ա մասը, երկրորդ ֆրազը՝ Ա և Բ մասը, վերջին ֆրազն երգում է ամբողջ խումբը։

Նկատի ունենալով, որ այժմ հաստատուն տրադիցիա է դարձել «Կաքավի երգը» կատարել նաև առանց խմբի մասնակցության՝ որպես մեներգ, խմբագրությունը հարմար գտավ այդպիսի վիճակում երգը զետեղել Կոմիտասի մենեղգերի հատորում։ Այդ կապակցությամբ խմբին վերաբերող կրկնվող հատվածները երգի տեքստից դուրս են թողնված*։

* «Կաքավի երգը» նախնական վիճակով՝ որպես խմբերգ կտպագրվի Կոմիտասի խմբերգերի հատորում։

Երգի վերահրատարակությունը կատարվում է արխիվում գտնվող Կոմիտասի ձեռագրից (ձեռ. № 561), որը 1908 թվի տպագրության բնագիրն է։ Թե՛ ձեռագրի և թե՛ առաջին տպագրության վերջին երեք տակտերի ակնհայտ վրիպակները Փարիզի 1930 թվականի հրատարակության մեջ և այս հատորում ուղղված են։ Զափհարի ցուցիչը և Tendre et alerte *նշումը բնագրում չկան, սույն հատորում դրանք դրված են 1930 թ. հրատարակության հիման վրա, դինամիկայի նշաններն նույնպես լրացված են այդտեղից։ Պեդալի նշումները բնագրինն են։*


18. «Չեմ կըրնա խաղա». *Ազդագրական վարիանտը կա Ա֊Ժ I, էջ 39, խոսքերը՝ Ժ֊Ա, էջ 159.*

(Չեմ, չեմ, չեմ կըրնա խաղա,
Մաս բարուցըս կըճըռճըռա։
Եվ երկրորդ տողի վարիանտը՝
Ասոթի փորըս կըզըռզըռա)։

Այս մեներգը առաջին անգամ տպագրվել է 1908 թվին, «Գեղարվեստ» ամսագրի № 1-ում, էջ 101 (Թիֆլիս)։ Այդ տպագրությունից բացի, խմբագրության արտադրության տակ եղել են նաև Կոմիտասի երեք ձեռագրերը (ձեռ. № 473, 424, 569) և Փարիզի 1928 թվի հրատարակությունը (Ա֊Ժ, տետր Դ)։ Կա նաև Մ. Բարսեղյանի ձեռքով օրինակվածը, որ № 473-ում եղածի մաքրագրությունն է։ Այդ հինգ օրինակի միմյանց հետ բաղդատությունը ցույց է տալիս, որ Կոմիտասը, իր այլ երգերի նման «Չեմ կըրնա»-ն ևս շարունակ մշակել, բարելավել է։

№ 473 ձեռագրում երգն ունի «1907 թ. 24/ը, Փարիզ» նշումը։ Սա մշակման առաջին վարիանտն է։ Նվագակցությունը վերջնական վարիանտից ավելի պարզ է, չկան նախանվագը և վերջնվագը, որոշ տարբերություն կա նաև նախդաշնակման մեջ։ Խոսքերը կիսատ են գրված, դինամիկայի նշաններ չկան, տեմպն ևս չի նշված։ Այդ նախնական վարիանտը բերված է այս հատորի հավելվածում։

№ 424 ձեռագրում եղածը նույնպես առանց նախանվագի և վերջնվագի, նվագակցության շարադրությամբ մոտենում է № 569-ին։ Այս վերջինը «Գեղարվեստ»-ում տպագրվածի բնագիրն է, գրված մոմաթղթի վրա, հատկապես տպագրության նպատակով։ Բայց այդ բնագրի և տպագրվածի միջև որոշ տարբերություն կա, որ հավանաբար վերջին սրբագրության ժամանակ է առաջացել։ Այդ տարբերությունը վերաբերում է նախանվագի առաջին տակտին։



Բացի դրանից, տպագրության մեջ մտցված են բնագրում Կոմիտասի կողմից մանրամասնորեն նշանակված կատարողական ցուցումները։

Փարիզի հրատարակության մեջ «Գեղարվեստ»-ում տպագրվածին որպես երգի երկրորդ տուն միացված է № 473 ձեռագրից կատարված Մ. Բարսեղյանի ընդօրինակությունը, որի հետևանքով այդ լրացուցիչ տան թե՛ մելոդիայի և թե՛ նվագակցության մեջ վերլուծելի փոփոխություններ են առաջացել. մի բան, որ Կոմիտասի վերոհիշյալ ձեռագրե-

րից ոչ մեկում չկա և ընդհանրապես բնորոշ չէ նրա երգերին։ Այդ հրատարակության մեջ այլ թերություններ էլ կան, այն է.

ա) ավելացված տան նախադասությունները կրկնված չեն, մասի այդ տունը 8 տակտի փոխարեն 4 տակտ ունի։

բ) երկրորդ տունն առանձին գրվելուց հետո ամբողջի կրկնության նշանն ավելորդ է դրված.


գ) խոսքերը պակաս են և չեն համապատասխանում եղանակին (այս թերությունը վերաբերում է նաև առաջին հրատարակությանը)։

դ) ճիշտ չէ դրված նաև չափահարի ցույցիչը։ Նա բնագրի ոչ թե 1/4-ը, այլ 3/8==50-ի։ Կատարողական նրբերանգները բացակայում են և այլն։

Ներկա հրատարակության համար հիմք է ընդունված «Դեղարվեստ»-ում տպագրվածի բնագիրը (ձեռ. № 569), որն եղած բոլոր վարիանտներից անհամեմատ ամբողջականն ու կատարյալն է։ Երկրորդ տան խոսքերը լրացված են։

19. «Շողեր ջան». *1907 թ. տպագրվել է որպես խմբերգ (ՀՖ, էջ 42, № 12), մինչդեռ առաջին և միակ անգամ հրատարակվել է 1912 թվին, Կ. Պոլսում, հունական «Μουσική» ամսագրի 5-րդ համարում։ (Տես՝ Կոմիտասի արխիվում կոմպոզիտորի անձնական դրադարանը, № 220)։ Խմբերգի և մենակրի ներդաշնակությունը տարբեր է։*

Հայտնի են այս երգի ազգագրական հետևյալ վարիանտները. ա) ԱԺ I էջ 5, բ) նույն տեղում՝ I էջ 15 («Ուն կերևա, ձուն կերևա»), գ) ձեռագիր № 325, էջ 23 («Ուն կերևար, ձուն կերևար») դ) նույն տեղում՝ էջ 153։ Սրանցից «բ» և «գ», որ բերված են ստորև, փաստորեն երգի երկրորդ կեսի վարիանտներն են և դրանք տարբերվում են մյուսներից։



Մյուս երկուսը միմյանց նման են և մշակված մենակրի մելոդիայից դրեթե տարբերություն չունեն։ Բանաստեղծական տեքստը դետեղված է ՀՄՎ I, էջ 45, № 39։

Կոմիտասի արխիվում կան այդ մենակրի մշակման մի շարք էսքիզներ (ձեռ. № 399, 403, 568 և այլն), որոնց մեջ կարելի է առանձնացնել երգի նվագակցության առնվազն 7 վարիանտ։ Դրանց միջև եղած փոքր տարբերությունը գլխավորապես վերաբերում է մենակրի առաջին կեսի նվագակցության ֆակտուրային, մասամբ նաև ներդաշնակմանը։ № 399 ձեռագրում երգը կրում է «1911, 20/է, Փարիզ» նշումը։

«Շողեր ջան» մենակրը արտատպվում է վերոհիշյալ ամսագրից։ Նվագակցության 3-րդ և 6-րդ տակտերում եղած վերջին ֆա նոտան ներկա հրատարակության մեջ փոխված է սի-բեմոլի, Կոմիտասի ձեռքով այդ ամսագրի օրինակում կատարված ուղղման հիման վրա։ Հատորի հավելվածում զետեղված է մշակման էսքիզներից մեկը (ձեռագիր № 403), որն իր երանգավորմամբ աչքի է ընկնում։

20. «Քիճար ես». *Ազգագրական ժողովածուում կա այս երգի երկու վարիանտ (ԱԺ I, էջ 4, երկրորդը Մ. Արեղյանի մոտ պահպանված վարիանտն է), որոնք միմյանց ցից և մշակվածից փոքր, բայց աչքի ընկնող տարբերություն ունեն։*



«Ա» վարիանտի ընագրում 9-րդ տակտի երկրորդ սի-բեմոլը Կոմիտասն հետագայում փոխարինել է լյա-ով (տե՛ս ձեռագիր № 302, էջ 8, № 13, ինչպես նաև էջ 43, № 207)։ «Բ» վարիանտի վերաբերյալ տե՛ս Սպ. Մելիքյանի ծանոթագրությունը Ա-ժ լ-ում, էջ 4։

Մելոդիան կա նաև ձեռ. № 725-ում, որտեղ երգի առաջին ճրագը կրկնության մեջ զարդարանքի փոփոխություն է կրում։



Այդ վարիացիոն փոփոխությունից նույնպես հետագայում Կոմիտասը հրաժարվել է։ Մշակված վարիանտին անհամեմատ ավելի մոտ է № 325 ձեռագրի 23-րդ էջում գտնվող տղագրական վարիանտը։ Տեքստը՝ ՀՄԺ I, էջ 12, № 8։

Կոմիտասի արխիվում եղած «Զինար ես»-ի մշակման օրինակները գրված են թե՛ մենակատարման, թե՛ երգչախմբի համար։ Մոնոդիական մշակումներում (անտիպ) մելոդիան նույնն է ինչ որ մեներգինը, ներդաշնակումը տարբեր է։ Մեներգի մշակման օրինակներում ևս հանդիպում ենք ներդաշնակման զանազան վարիանտների։ Այսպես օրինակ, № 479 ձեռագրում երգի երկրորդ կեսի ներդաշնակությունը ոչ թե սոլ մինոր է, այլ դոմինանտալին ֆա-մաժոր և վերջում միայն սոլ-մինոր։



Նույն հատվածը № 568 ձեռագրում մի այլ ներդաշնակություն ունի.




երգի ներդաշնակումը փոփոխելով, Կոմիտասը մշակման տարբեր վարիանտներում գրեթե միշտ պահպանել է նվագակցության շարադրման եղանակը։ Ֆակտուրալի մեջ նա միայն ռեգիստրային փոփոխություն փորձեր է արել։ Այսպես, № 399 ձեռագրում, որտեղ «Զինար ևս»-ի նվագակցությունը գրված է ցածր օկտավայում, նշում է արված՝ «վերջինը (վերջին տունը) մի ութնյակ ավելի բարձր» (այդ նշումը պահպանված է երգի առաջին հրատարակության մեջ ևս), իսկ № 407 ձեռագրում, որտեղ նաև երգի նվագակցությունը շարադրված է բարձր օկտավայում, նշված է՝ «վերջին տունը ութնյակ ցածրեն («էս գիշեր»)». «Զինար ևս»-ի ամբողջ նվագակցությունն այժմ կատարվում է առանց օկտավային տեղափոխության։

«Զինար ևս» մեներգի մշակման բոլոր ասպիր օրինակները թեև մեծ տարբերություն չունեն միմյանցից, բայց ինքնատիպություն հանդիսանում են։ Դրանցից № 407 ձեռագրում եղածը բերված է այս հատորի հավելվածում։

«Զինար ևս»-ը առաջին անգամ տպագրվել է 1925 թվին (հմմտ. ևս որ Բ)։ Այստեղ երգն ունի «Սիրո տրտունջ» ենթավերնագիրը, որը Կոմիտասի ձեռագրերում բացակայում է։ Տպագրությունը կատարված է Կոմիտասի 1911 թվին գրված տեքստից, հենց այդ թվականն էլ բերված է որպես երգի մշակման տարեթիվ, չնայած հայտնի է, որ «Զինար ևս» մեներգը դաշնամուրի նվագակցությամբ կատարվել է դեռևս 1905 թվին Թրիլիսիում տեղի ունեցած Կոմիտասի համերգներում (տե՛ս այդ համերգների ծրագրերը Կոմիտասի արխիվում)։

«Զինար ևս» երգի նոտային հրատարակությունը 1925 թվի հրատարակությունից էական տարբերություն չունի։

21. «Էս առուց». Ազգագրական ժողովածուում զետեղված այս երգի երկու մելոդիաներից (հատոր I, էջ 64) առաջինը, որ Սուրմալուի վարիանտն է, Սպ. Մելիքյանը վերցրել է 1935 թվին հրատարակված Կոմիտասի մշակումից, իսկ երկրորդը, որ կոչվում է «Ապարանի վարիանտ», գրի է առնված իր՝ Սպ. Մելիքյանի կողմից (տե՛ս նրա ծանոթագրությունը Ազգագրական ժողովածուում՝ հատոր I, էջ 93)։ Այժմ մեր տրամադրության տակ ունենալով Կոմիտասի Ազգագրական ժողովածուի բնագիրը (ձեռ. № 302), «Էս առուն» երգի Կոմիտասի գրի առած վարիանտների մասին ընդարձակ պատկերացում ենք ստանում։ Այդ վարիանտները սրանք են (ձեռ. № 302, էջ 45, № 234).



Ա և Բ—Սուրմալու, Գ և Դ—Ապարան, Ե—Շիրակ, Հոռոմ։

Մի քանի համանման վարիանտ էլ բերված է Կոմիտասի «Հայ դեղջուկ երաժշտություն» տեսական աշխատության մեջ («Անահիտ», Փարիզ, 1907 թ. էջ 70—73 և 127—130, տե՛ս նաև Կոմիտասի «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941 թ. էջ 39)։

Կոմիտասի արխիվում շատ օրինակներով պահպանվել են «Էս առուն» երգի մշակման էսքիզները, որոնց մի մասը մեներգի, մյուսը խմբական կատարման համար է գրված (մեներգը տե՛ս ձեռ. № 441, 403, 568, 399, 553 և այլն, խմբական մշակումը տպագրված չէ)։ Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում երգի այդ օրինակները, որ հաճախ մշակման լուրջ նմուշներ կարող են համարվել, միմյանցից զգալի տարբերություն ունեն։ Նման դեպքերը ցույց են տալիս, թե Կոմիտասը որքան խստապահանջ է եղել ժողովրդական երգի գեղարվեստական մշակման հարցում։

Մեներգի օրինակներում եղած տարբերությունը վերաբերում է գլխավորապես նվագակցության ֆակտուրային, մասամբ էլ ներդաշնակությանը։ Հենց այդ տեսակետից էլ այս հատորի հավելվածում բերված են «Էս առուն» երգի մշակման հինգ տարբերակները։

Տևքստը կա ՀՄՖ II, էջ 36, № 19, մշակվածից աննշան տարբերությունն ունի կրկնակը միայն։ («Հազար ու մի խաղ»-ում՝ «Հե՛յ, դալիս է, հե՛յ, սեր անեն», որ համապատասխան է Աղգադրական ժողովածուում եղած երգի առաջին վարիանտին)։

«Էս առուն» մեներգը առաջին անգամ տպագրվել է 1925 թվին (ՀԺԵ, տետր Բ), Կոմիտասի ձեռագրից Մ. Բաբայանի կատարած ընդօրինակումից։ Այդ հրատարակությունը մեջ եղած «Սիրերգ» ենթավերնագիրը բնագրերում բացակայում է, երգի տակ գրված է՝ օդոստոս, 1911 թ.։ Ջնայած վերը հիշված տրվագծերի մի մասն ավելի վաղ է արված, «Էս առուն» մեներգի մշակման վերջնական վարիանտը Կոմիտասի տետրում ևս նույն թվականն է կրում («1911. 8/ը, Շենքլինց. տե՛ս ձեռ. № 399, էջ 23)։ Ինչպես 1925 թվի տպագրությունը, այնպես էլ ներկա հրատարակությունը Կոմիտասի այդ բնագրից չեն տարբերվում։ Անհրաժեշտ է նշել հետևյալը միայն. ա) բնագրում 3-րդ տակտի նվագակցության 3-րդ ֆիգուրում լյա-ի փոխարեն սի է գրված, բայց դա պարզապես վրիպակ է (ուղղված է նաև Մ. Բաբայանի օրինակում, ձեռ. № 553, էջ 19)։ բ) Բնագրի 1-ին տակտի մոտ կա Կոմիտասի նշումը՝ «Նախաբան՝ խաղը», այսինքն՝ նվագակցության 1-ին տակտը մեկ կամ երկու անգամ կատարվելով, պետք է հանդիսանար երգի համար ներածություն։ գ) Պեդալի նշումներում թե՛ Մ. Բաբայանի ընդօրինակության, և թե՛ 1925 թ. տպագրության մեջ վրիպում կա։ Այստեղ պեդալն ուղղված է Կոմիտասի բնագրի համաձայն։ դ) Կոմիտասի բնագրում երգի երկրորդ նախադասությունը ևս կրկնության նշան ունի, ընդ որում այստեղ գրված է՝ «երկրորդը ությակ բարձրեն վորձել»։

22. «Ալագյազ (բարձր սարից)». *Այս երգի խոսքերը ժողովրդականի նմանողությամբ գրել է բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը։ Դա առիթ է տվել կարծելու, որ եղանակն էլ ստեղծել է ինքը Կոմիտասը (տե՛ս այդ մասին, օրինակ, Ա. Շահվերդյանի* Комитас и армянская музыкальная культура, *Երևան, 1956 թ. էջ 213)։ Այդ կարծիքն անհիմն է, Կոմիտասի ազգագրական նյութերի մեջ այժմ գտնվող ձայնագրությունը (ձեռագիր № 317, էջ 14) որևէ կասկած չի թողնում այն բանում, որ «Ալագյազ բարձր սարինն»-ը բուն ժողովրդական երգ է, բանաստեղծությանն ավելացված կրկնակի խոսքերն ևս ժողովրդի ստեղծագործությունն է։ Հիմնավորված չէ նաև Փարիզի հրատարակության նախաբանում հայտնված այն միտքը, թե «Ալագյազ բարձր սարինն» երգի եղանակը հորինել են աշուղները։ Այդ եղանակը հայկական աշուղական երգերին նման չէ, կառուցված է գեղջկական երգերի բնորոշ ինտոնացիաներից (համեմատիր, օրինակ, «Ալագյազ» երգի առաջին ֆրազը «Գարուն» երգի սկզբի հետ, «Ալագյազ»-ի կրկնակի առանձին դարձվածքները «Քելե, քելե» երգի կրկնակի հետ)։*

Երգը ձայնագրված է Կողբ գյուղում, գրի առնված մելոդիալի և մշակվածի մետրոռիթմի մանրամասնություններում աննշան տարբերություն կա։ Կոմիտասը բարձր է գնահատել այս երգի հարուստ արտահայտչականությունը, որ ցայտուն կերպով դրսևորված է խոսքի և եղանակի միասնության մեջ։ Այդ տեսակետից նա ձայնագրության մեջ երգը մանրամասնորեն մեկնաբանել է։ Այսպես օրինակ, ըստ Կոմիտասի, կրկնակի սկզբում («Օ, լար...») երգի եղանակն արտահայտում է «կարոտ», «վա՛յ, արնոտ սարեր»-ի ձայնագրության մոտ նա գրել է «աղաչանք», «վա՛խ, սիպտակ սարեր»-ի մոտ՝ «ախտսանք» երկրորդ «Օ, լար...»-ի մոտ՝ նորից «կարոտ» և այլն։

Երգի մշակումը զետեղված է Կոմիտասի 1911 թ. ձեռագիր տետրում (ձեռ. № 399, էջ 14—16), կա նաև Մ. Բաբայանի ընդօրինակությամբ (ձեռ. № 553, էջ 6)։ Կոմիտասի ձեռագրում երգն ավարտված է, երանգանիշներն ու տեմպերը միայն գրված չեն, մանրամասնորեն նշանակված է պեդալը։ Մ. Բաբայանի ընդօրինակության մեջ այդ բոլորը կան, բայց թերի են գրված։ Ներկա տպագրության համար հիմք է ընդունված Կոմիտասի ձեռագիրը, երանգանիշներն ու տեմպերը պահպանված են 1930 թ. տպագրության նման (այս տպագրության մեջ երգի 6-րդ և 9-րդ տակտերում վրիպակներ կան, որոնք նույնությամբ անցել են հաջորդ բոլոր տպագրությունների մեջ), պեդալի նշումները լրացված են ձեռագրից։ Երգի գրական տեքստում սակավ ուղղումներ են կատարված, բանաստեղծության բնագրի համեմատությամբ։

Կոմիտասի ձեռագրում «Ալագյազ բարձր սարինն» երգը մեկ տակտ նախաբան ունի,

որն իրենից ներկայացնում է նրա 1-ին տակտի նվագակցությունը նուագելիքում:

23. «Հոյ, Նազան իմ». Ազգագրական ժողովածուում կա այս երգի առաջին մասը, առանց կրկնակի (հատոր I, էջ 11, «Յալլի ծպիկ, գյալի ջան»), մշակված մելոդիան ամբողջությամբ գեռևս չէ: № 725 ձեռագիր ժողովածուում: Բանաստեղծական տեքստը կա ՀՄԻ I, էջ 36, № 31:

«Հոյ, Նազան»-ը 1908 թվին «Դեղարվեստ» ամսագրում (Թիֆլիս) տպագրվել է որպես խմբերգ: Մեներգն առաջին անգամ հրատարակված է 1930 թվին (ՀԺԵ, տետր Ե): Ամբակյան և մենակատարման վարիանտների նկատմամբ նկատելի տարբերություններ կան:

1930 թ. հրատարակության նախաբանում ասված է, որ «Հոյ, Նազան» մեներգը Կոմիտասը գրել է 1911 թ. Շենքին դանված միջոցին: Կոմիտասի 1911 թվի տետրում (ձեռ. № 399) այս մեներգը գեռևս չէ տրված № 6 (էջ 7): Տոնայնությունը մեկ տոնով բարձր է տպագրվածից (վերջինն ավելի մատչելի է, կատարման համար, տասը տող հատորում ևս պահպանված է): Ձեռագրում երանգանիշներ չկան, տեմպը ցույց տրված չէ, պեդալի մասին լուռ մի ընդհանուր նշում կա երգի սկզբում: Նույն տեղում կա Կոմիտասի նշումը՝ «նախերգան», որի համար նախատեսված է նվագակցության առաջին տակտի երաժշտությունը: Մեներգի ներկա տպագրությունը, ինչպես և 1930 թ. տպագրությունը կատարված են Կոմիտասի այդ բնագրից: Բնագրի կրկնակում, թե՛ մելոդիայի և թե՛ նվագակցության մեջ (էջ 8), հավելական նոտաներով բազմաթիվ նշումներ կան, որոնք սակայն մի ամբողջական պատկեր չեն առեղծում և այս հրատարակության մեջ ևս հաշվի չեն առնված: 1930 թվի հրատարակության համեմատությամբ նոր տպագրության մեջ Կոմիտասի ձեռագրի համաձայն որոշ փոփոխություն է մտցված կրկնակի առաջին տակտում միայն: Երանգավորումն ու տեմպը պահպանված են 1930 թվի տպագրվածի նման:

23. «Դարուն». (*Ժողովրդական տակ*). Ազգագրական ժողովածուում այս երգը դեռևս չէ «Արդեն ասաց տատրակ հավքան» վերնագրով (հատոր I, էջ 7): Դրա մելոդիան ամբողջապես, համարյա առանց փոփոխության մտել է մշակված վարիանտի մեջ, սակայն երեք նախադասություններից կազմված այդ փոքր երգն օգտագործելով, Կոմիտասն այն դարձրել է ծավալուն վոկալ առեղծագործություն:

Բանաստեղծական տեքստը կա ՀՄԻ II, էջ 24, № 8, որտեղ գրված՝

Թռնեմ բանձրիկ վեր ծառերուն,
Տանեմ հանեմ վեր սարերուն.

տողերի փոխարեն մշակման մեջ կա հետևյալ տողը միայն.

Թռնեմ բանձրիկ վեր սարերուն.

«Դարուն»-ը առաջին անգամ տպագրվել է 1925 թվին (ՀԺԵ, տետր Բ): Երգը նոր հրատարակության պատրաստելիս, բացի այդ տպագրություններ, խմբագրի տրամադրության տակ եղել է նաև Կոմիտասի երեք ձեռագիրը՝ № 433, 417 և 556: Այս երեք ձեռագրում երգի մշակումը միմյանցից տարբեր է թե՛ տոնայնությամբ, թե՛ ներդաշնակությամբ, և թե՛ նվագակցության ֆակտուրայի տեսակետից: № 433-ում երգը գրված է ֆա-դիեզ տոնայնության մեջ, բանալին մոռ գրված են ֆա, դո, սոլ, ռե դիեզները: Ռե-դիեզը, որ սակավ երևան է գալիս նվագակցության մեջ միայն, երգի հնչյունաշարին դորիական մինորի գունավորում է տալիս: Այդտեղ երգը գրված է խառը չափով $\left(\frac{9}{4}=\frac{3}{4}+\frac{2}{4}+\frac{4}{4}\right)$: Այդ օրինակից մի հատված բերված է հոդվածիս էջում:

№ 417-ում երգը սոլ տոնայնության մեջ է, բանալին մոռ կա սի և մի բեմոլ: Մի բեմոլը երբեմն երևան գալով նվագակցության մեջ, մշակման այդ վարիանտին բնական մինորի գունավորում է տալիս: Չափը 6/4 է, որ հատվածաբար փոխվում է 6/8-ի: Այս երկու ձեռագրերում երգը թերի է գրված. առաջինում կա մի մասը միայն, երկրորդում մելոդիան լրիվ է, նվագակցության մեջ կան բայց տակտեր: Երկուսն էլ խմբագրական տզրմամներ և վարիանտներ են պարունակում: № 417 ձեռագրում եղած մշակման մեջ տուրս են նվագակցության ֆակտուրայի բոլոր այն տարրերը, որոնք հետագայում մտել են մշակման վերջնական վարիանտի մեջ:

№ 526 ձեռագրի օրինակը ավարտված է, թանաքով մաքուր գրված: Համարվել է

վերջնական (չնայած երանգանիշները պակաս են դրված), բայց հետո Կոմիտասը դրված քի մեջ մատիտով որոշ փոփոխություններ է կատարել: Երգի սկզբում Կոմիտասի ձեռքով գրված է՝ «Նվեր օր. Մարգարիտ արայանին. 1907. Փարիզ»:



Այս երրորդ ձեռագրում երգը սի-բեմոլ տոնայնության մեջ է. բանալիում դրված են սի, մի, լյա, բե բեմոլները, ուստի նվագակցությունն այսուհետ դարձյալ դորիական հնչառնության ունի: Համեմատությունից երևում է, որ Փարիզի 1925 թ. հրատարակությունը կատարված է հենց այս ձեռագրից, ընդ որում այդ հրատարակության խմբագիրը կոմպ. Վ. Մարգսյանը երգը փոքր ինչ կրկնել է, համապատասխան № 414 ձեռագրի տոնայնությանը:

Ներկա հատորում պահպանված է 1925 թ. հրատարակության տոնայնությունը, որն անշուշտ ավելի հարմար է կատարման համար: № 556 ձեռագրի հիման վրա տղված են 1925 և 1939 թթ. տպագրությունների մեջ եղած վրիպակները (4, 18, 25, 33, վերջից՝ 4, 5 և այլ տակտերում):

Ձեռագրում «Գնաց գարուն, եկավ աշուն» ֆրազը վերջավորող ձայնանիշը, որ ընկնում է 6/8-րդ տակտի սկզբում և կարճ է (=1/8), Կոմիտասը փորձել է կես տակտ երկարացնել: Դրա համար նա տեղավրել է հաջորդ՝ «Կարավ ջրիկ աղբյուրներուն» ֆրազի տակտագծերը կեսական տակտ անդադրոխել, որի հետևանքով երաժշտական ֆրազի մետրը խախտվել է: 1925-ի հրատարակության խմբագիրը այդ ֆրազի մետրական բաժանումը վերականգնելու նպատակով, տակտագծերը պահպանելով իրենց նախկին տեղում, Կոմիտասի ավելացրած կես տակտը դարձրել է մեկ լրիվ տակտ=6/8, բայց դրանից մինչև հաջորդ տակտի սկիզբը ձգվող այդ նույն ձայնանիշի վրա անհատականալի պատճառով ֆերմատա է դրել: Քանի որ այդ երկակի երկարաձգված ձայնանիշը գրված է արագացրած տեմպում, ուստի ստացվում է մի անտրամաբանական պատկեր, որն, ի դեպ, կրկնված է երգի բոլոր համապատասխան տեղերում: Այդ փոփոխություններից բացի, «Կարավ ձենիկ կաքավներուն» ֆրազի վերջում դարձյալ երկարաձգված ձայնանիշով մի լրիվ տակտ է ավելացված: Կոմիտասի ձեռագրում այդ ֆրազի վերջին ձայնանիշն ևս

երկարացված է, բայց նախ՝ կես տակտ միայն, ապա դրա նպատակն է եղել լրացնել տակտագծերը տեղափոխելու հետևանքով կիսատ մնացող վերջին տակտը: Մինչդեռ տակտագծերը տեղում թողնելու դեպքում այդ հավելումն էս, որ երգում կրկնված է մի քանի անգամ, իր նշանակությունը կորցնում է:

Հաշվի առնելով «Գնաց գարուն» ֆրազի վերջում կոմիտասի կատարած հավելումը, և միաժամանակ անխոփոխ պահելու համար նրա հիմնական շարադրության մետրիկան, այս հրատարակության մեջ այդ հավելումը գրված է առանձին 3/4 տակտով: Չափի փոփոխությունը 6/8-րդի և սեմպի արագացումը ամեն անգամ ցույց են տրված նոր ֆրազի սկզբից, ինչպես կոմիտասի ձեռագրում է: Մյուս բոլոր տեղերում ավելացված տակտերը և ֆերմատաները հանված են:

Երգի սկզբնական տեմպը, որ 1925-ի հրատարակության մեջ գրված է Grave, ըստ ձեռագրի ուղղված է Andante sostenuto: Սակայն չափահարի ցուցիչը, որ ձեռագրում 80 է, իսկ տպագրվածում՝ 88, պահված է ըստ տպագրվածի: Պահպանված է նաև Andante 1/4=88 նշումը, որը ձեռագրում չկա: Ձեռագրի համաձայն լրացված է պեդալի նշումը, կոմիտասի նշանակած լիգատուրան որոշ չափով թևթևացված է, կատարված են նաև խմբագրական այլ մանր փոփոխություններ:

1925 թվի և հաջորդ հրատարակություններում կա նշում, որը ցույց է տալիս, որ երգի 28—55 տակտերն ըստ ցանկության կատարման ընթացքում կարելի է դուրս թողնել: Այդ նշումը վերցված է № 556 ձեռագրից, որտեղ այն դրված է եղել մեկ կոնկրետ կատարման առթիվ:

«Գարուն»-ը կոմիտասի մենակատարմամբ առանց նվագակցության գրի է առնված ձայնապնակի վրա (ԳԱ Գրականության և արվեստի թանգարան):

25. «Կռունկ». Հայկական ուշ միջնադարի լայն տարածում գտած երգերից է, իր մեղեդիական ոճով մոտիկ ու հարազատ տաղալին տիպի ստեղծագործություններին և ընդհանրապես հայ միջնադարյան պրոֆեսիոնալ երաժշտության նմուշներին (տաղեր, շարականներ): Կոմիտասի ժողովրդական երգերի ձայնագրությունների մեջ մենք այդ մելոդիայի ազգագրական մի այլ վարիանտ (ձեռ. № 314, էջ 17), որի ինտոնացիոն կառուցվածքը անհամեմատ ավելի պարզ է (բերվում է ստորև).



Հետաքրքրական է և այն, որ երաժշտությամբ լինելով «Կռունկ, ուստի կուգաս»-ի տարբերակը, իր խոսքերով կոմիտասի այս երկրորդ ձայնագրությունը վարիանտ է հանդիսանում «Կանչե կռունկ» երգի: Այս փաստը հիշված երկու երգերի առնչության մի արտահայտություն է (տե՛ս այդ մասին նաև՝ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 553):

Կոմիտասի մշակումն առաջին անգամ հրատարակվել է 1928 թվին (ՀԺԵ, տետր Դ): Այդ հրատարակության մեջ ծանոթագրության կա, որ «Կռունկը» քաղված է մի ձեռագիր հավաքածուից, որը պահպանվել է օր. Մ. Բարալյանի խնամքով, օրինակված 1911 թ., և որ այդ հավաքածուի մեջ «Կռունկ»-ը, ինչպես և «Ծիրանի ծառ»-ը և «Նազանքա»-ը գրված են եղել Կոմիտասի ձեռքով:

Կոմիտասի արխիվում կան «Կռունկ»-ի մշակման հետևյալ ձեռագրերը.

№ 432 և 439. առանձին թերթերի վրա, կիսատ գրված նախնական տրվագծեր են, տպագրվածից շատ տարբեր: Դրանցից երկրորդը լրիվ վիճակում կրկնակի արտագրված կա նաև վ. Սարգսյանի ձեռքով (ձեռ. № 428 և 563):

№ 568. Կոմիտասի տետրն է, որի 30, 31 և 32 թվակիր էջերում կա «Կռունկ»-ի մշակման երեք ինքնուրույն շարադրություն, ավարտված, բայց սևագիր վիճակում, բազմաթիվ խմբագրական ուղղումներով և տարբերակներով: Սրանցից առաջինը հետաքրքիր

է նրանով, որ երգը տպագրված վարիանտի տոնայնությանը մեջ գրված լինելով, ավարտվում է ոչ թե ռե-մաժոր, այլ լյա-մաժոր հարմոնիայով։ Վերջին շարադրությունը նման է տպագրվածին, այն տարբերությամբ, որ այստեղ մեղեդիի սկիզբը ոչ թե ֆորշլագ է, այլ տոնովեցերորդական ձայնանիշ։ Բացի դրանից երգի առաջին հատվածը կրկնվում է ոչ թե երկու նվագածական տակտերի հետ միասին, ինչպես տպագրվածում է, այլ առանց դրանց. այս կապակցությամբ մեղեդիի սկզբնական տակտը I և II անգամ միմյանցից տարբեր ներդաշնակում է տառնում։ Բանալիում դրված է՝ b, cis′, fis, f′,

Ձեռ. № 553. Մ. Բաբայանի տետրն է, որտեղ «Կռունկ»-ն ևս, ինչպես մյուս երգերը, գրված է ոչ կոմիտասի, այլ հենց իր՝ Մ. Բաբայանի ձեռքով։ Այս մեկը նույնն է, ինչ որ հրատարակված վարիանտը։

№ 553-ի և 568-ի համեմատությունը հիմք է տալիս կարծելու, թե եղել է ևս մի բնագիր, որն իրենից ներկայացրել է № 568-ի խմբագրված վարիանտը, որից և կատարվել է № 553-ում գտնվող ընդօրինակումը։ Թանի այդ հարցը պարզ չէ դեռ, ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել № 553 ձեռագրում եղած Մ. Բաբայանի ընդօրինակումը։

Թե՛ 1928 թ. հրատարակությունը և թե՛ դրա համար աղբյուր հանդիսացած Մ. Բաբայանի վերոհիշյալ ընդօրինակումը թերություններ ունեն, օրինակ, երանգանիշները և պեդալի նշումները պակասում են, նվագակցության շարադրությունը անթերի չէ նաև ձայնատարության տեսակետից։ Նկատի ունենալով երգի երկրորդ կեսում կրկնված «Մեր աշխարհն...» խոսքերի նվագակցության պոլիֆոնիկ բնույթը և մի-բեմոլ սոլ ու ռե-ֆա-դիեզ մոտիվների առկայությունը, ներկա տպագրության համար այդ տեղում ձայնատարությունը ուղղված է (1939 թ. հրատարակության մեջ անհասկանալի պատճառով նույն տեղում նվագակցությունից մեկ տակտ հանված ու տեղը պատռված է դրված)։ Պեդալի նշումը և երանգանիշները փոքր լրացումով ավելացված են Կոմիտասի ձեռագրից (№ 568), 1928 թ. հրատարակության համեմատությամբ կատարված են այլ, մանր վրիպակների ուղղումներ և տեխնիկական կարգի մի շարք բարեփոխումներ։

«Կռունկ»-ի վերը հիշված ձեռագրերում կան երգի տեմպը և կատարման բնույթը ցույց տվող հետևյալ նշումները.

Ձեռ. № 432՝ Largo melancolique

Ձեռ. № 428՝ Larghetto dolce.

Սույն հատորում նոտաների հետ բերված են երգի խոսքերի այն տները, որոնք սովորաբար կատարվում են։ Ստորև զետեղված է բանաստեղծության համեմատաբար լրիվ տեքստը։

Կ Ռ Ո Ւ Ն Կ

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհն խապրիկ մի չունի՞ս։
Մի՛ վազեր, երամիդ շուտով կուհասնիս,
Կռունկ, մեր աշխարհն խապրիկ մի չունի՞ս։

Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այգիս,
Քանի որ ահ կ'անեմ, կուքաղվի հոգիս,
Կռո՛ւնկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհն խապրիկ մի չունի՞ս։

Քեզ խոպար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգա քան գլբի տոլապ,
Կռունկ, Պաղտատ ինչնուս կամ Քե ի Հալապ,—
Կռունկ, մեր աշխարհն խապրիկ մի չունի՞ս։

Սրտերնիս կամեցավ, ելանք գընացանք,
Այս աուտ աստղնվորիս բաներն իմացանք.
Ագուհացիկեր մարդկանց կաբոտ մնացանք,
Կռո՛ւնկ, մեր աշխարհն խապրիկ մի չունի՞ս։

Ո՜չ կլուր օրն գիտեմ, ո՛չ դիվրակին,
Զարկած է դիս շամփուրն՝ բռնած կըրակին.
Այրիլըս չեմ հոգար, ձեղնե կարուտ եմ,
Կուտնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Գազատատու կուգաս, կերթաս ի Սեհրատ,
Թղթիկ մի գրեր եմ, տամ քեզ ամանաթ.
Ասոված Քող վըկա լինի քո վերադ,
Տարյալ հասուցես գայդ իմ սիրելյոց:

Գրեր եմ մեջ Քղքիս, Քև հոս մնացի,
Օրիկ մի օրերուն գաչերս չըրացի,
Սիրելիք, ձեզանե կարուտ մրնացի,
Կա՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մոտեցեր, գնալու ես Քեզիթիր,
Երամ ես ժողովեր հազարներ ու բյուր.
Ինձ պատասխան չըտվիր, ելար գնացիր.
Կա՛ւնկ, մեր աշխարհեն գնա, հետացի՛ր:

26. «Ամպել ա կամար-կամար». Ազգագրական ժողովածուում այդ վերնագիրը կրող երգը (հատոր I, էջ 37 № 124) այլ երգ է: Այս երգի ազգագրական բնագիրը գըտնում ենք № 302 ձեռագրում (նույն ժողովածուի լրացված մասում), էջ 73, № 364: Բանաստեղծական տեքստի առանձին հատվածների վարիանտներ կան ԺՒ, էջ 522:

Արխիվում կան մենևրգի մշակման տրվագծեր (ձեռ. № 479), որոնց մեջ նվագակցությունը մի քանի տարբեր շարադրություն ունի: Ամբողջած մենևրգը կա № 399 ձեռագրում («1911. 1/ը. Ուալտ կղզի՝ Շենքլինն») և Մ. Բաբայանի տետրում (№ 553); 1937 թ. տպագրությունը սրանց նման է:

Երգն արտատպվում է 1937 թվի հրատարակությունից (ՀԺԵ, տետր Է), որի 6-րդ և 7-րդ տակտում եղած վրիպակներն ուղղված են № 399 ձեռագրի հիման վրա: Պեդալի նշումը վերականգնված է նույնպես Կոմիտասի ձեռագրից: 1937 թվի հրատարակության մեջ արված խմբագրական մանր փոփոխություններն այստեղ պահպանված են, ուղղված են գրական տեքստում եղած վրիպակները, կատարված են տեխնիկական այլ, աննշան բարեփոխումներ:

27. «Ես աղջիկ եմ». Ազգագրական վարիանտը այլ խոսքերով կա № 325 ձեռագրում, էջ 32: Սրա համեմատությամբ, մշակված վարիանտում մելոդիան հարստացված է գլխավորապես մելիզմային բնույթի հնչյուններով: Այս երգի մելոդիան նման է Կոմիտասի ձայնագրած և մշակած (թերավարտ) «Հավար Զուլո» երգի մելոդիային (ձեռ. № 473, 525), թերևս դրանք նույն մելոդիայի վարիանտներն են:

Արխիվում կան մշակման մի քանի էսքիզներ (ձեռ. № 473 և 475), որոնց ներդաշնակումը սկզբունքով նույնն է, ինչ որ տպագրվածինը, էսքիզները միմյանցից և տպագրվածից ֆակտուրային տարբերություն ունեն միայն: Մշակումն ավարտված վիճակում գտնում ենք Կոմիտասի ձեռագիր տետրում (ձեռ. № 399), որտեղ նշում կա՝ «1911, 1/ը, Ուալտ կղզի՝ Շենքլինն», ինչպես նաև Մ. Բաբայանի ընդօրինակությամբ № 553 ձեռագրում: Այս վերջին երկուսը տպագրվածին նման են:

Ներկա հրատարակությունը նման է 1937-ի հրատարակությանը (ՀԺԵ, տետր Է), որի մեջ, ինչպես նաև Մ. Բաբայանի ընդօրինակության մեջ, 7-րդ տակտում եղած վրիպակն ուղղված է № 399 ձեռագրի հիման վրա: Խոսքերի մեջ ևս ուղղում է կատարված նույն ձեռագրի և «Հազար ու մի խաղ»-ի հիման վրա (II, էջ 29, № 12): 1937-ի տպագրության մեջ եղած semplice նշումը, որ այստեղ ևս պահպանված է, ձեռագրերում չկա: № 399 և 553-ում կատարման բնույթը նշված է «աղաչական» խոսքով: Հիշյալ ձեռագրերի համեմատությամբ այլ մանր փոփոխություններ են արված նաև երբերանգների մեջ:

28. «Էրվում եմ». Բանաստեղծական տեքստը ՀՄԺ-ում չկա, առանձին վարիանտներ կան ԺՒ, էջ 226—227: Մելոդիան կա Ազգագրական ժողովածուի բնագրում (ձեռ. № 302, էջ 73, № 362): Մշակված է նաև որպես խմբերգ (ՀԺԵ, տետր Ը, 1951):

Արխիվում կա «Էրվում եմ» մեներգի մշակման միայն մեկ օրինակ, դա Կոմիտասի 1911 թ. ձեռագիր հավաքածուում է (ձեռ. № 399, էջ 5)։ Երգի մոտ նշում կա՝ «1911, 1/ը, Ուալտ կղզի՝ Շենքլինն»։ Տպագրվածից որոշ տարբերություն ունի. տոնայնությունը սոլ-մաժոր է, նվագակցության ձախ ձեռքի առաջին ձայնանիշը քառորդ պաուզայից հետո է սկսվում, կատարողական նշում ունի՝ «լալագին», նրբերանգները նշանակված չեն։

Առաջին անգամ հրատարակվել է 1928 թ. (Հժե, տետր Դ), ապա այդ հրատարակությունից արտատպվում է ակնհայտ վրիպակների ուղղումով և տեխնիկական աննշան փոփոխություններով։

1928 թվի հրատարակության վերնագրի տակ փակագծերում գրված է «Փորձ»։ Իրոք «Էրվում եմ» մեներգը մի փորձ, մի ուրվագիծ է, որ իր ներդաշնակությամբ հիշեցնում է այս հատորում զետեղված «Ծուն արի», «Լուսնակը սարի տակին» և մյուս նման երգ-էսքիզները։

Կոմիտասի ձեռագրերից մեկում նշում կա, որից երևում է, որ նա մտադիր է եղել այս երգի խմբական վարիանտը կցել «Ախ, մարալ ջան» խմբերգին։

29. «Ծուն արի». *Կոմիտասի շատ երգերի նման, այս փոքր ու պարզ երգի մշակումն ևս ստեղծագործական աշխատանքի տևական ընթացք է ունեցել։ № 379, 403, 509, 399 և 553 ձեռագրերը, որոնցից վերջինը Մ. Բաբայանի ընդօրինակությունն է, հաջորդական կարգով ցույց են տալիս այդ աշխատանքի պրոցեսը։ Առաջին երեքը ներկայացնում են երգի մշակման առաջին վարիանտը, վերջին երկուսը՝ երկրորդ, նրանից տարբեր վարիանտը։ Սրանցից ձեռագիր № 399-ում եղածը, որ «1911 1/ը, Ուալտ կղզին՝ Շենքլինն» նշումն ունի, Մ. Բաբայանի ընդօրինակության և նրանից կատարված՝ երգի առաջին տպագրության (Հժե, տետր Է, 1937) հիմք է հանդիսացել, սակայն Կոմիտասի այս և մյուս բոլոր ձեռագրերում երգի տոնայնությունը դո է, Մ. Բաբայանի մոտ և տպագրվածում՝ սի-բեմոլ։ Նկատի ունենալով երգի հնչյունաշարի բարձր դիրքը, այդ իջեցումը միանգամայն հարմար է արված։*

Երգը մշակելիս, ֆակտուրային աննշան փոփոխություններից բացի, Կոմիտասը փորձել է առաջին մասի ներդաշնակման տարբեր վարիանտներ, այն է՝ ամբողջը դո-մաժոր, 1-ին նախադասությունը՝ լյա-մինոր, իսկ երկրորդը դո-մաժոր, և 1-ին նախադասությունը դո-մաժոր, 2-րդը լյա-մինոր։ Բոլոր ձեռագրերում, բացի Մ. Բաբայանի ընդօրինակությունից, կատարողական նրբերանգները բացակայում են։

Միաձայն մելոդիան «Դու անսիրտ լար» վերնագրով տպագրված է Աժ I, էջ 7 № 22 և ներկայացնում է մշակված երգի առաջին կեսը ու նրա վարիացիոն կրկնությունը։ Ավստեղ խոսքերն էլ փոքր ինչ այլ են։ Երգի երկրորդ կեսը («Կանչում եմ, լար, արի...») Ազգագրական ժողովածուի բնագրում (ձեռ. № 302, էջ 9, № 22) Կոմիտասը հետագայում, այլ թանաքով է ավելացրել։ ՀՄՖ-ում, սակայն, զետեղված է երգի լրիվ և արդեն վերջնական խմբագրված տեքստը (II, էջ 26, № 9)։

Երգը տպագրվում է 1937 թ. հրատարակությունից, պեդալի նշումը լրացված է Կոմիտասի (№ 399) ձեռագրից։ № 509 ձեռագրի վարիանտը մեկ տոն իջեցված վիճակում զետեղված է այս հատորի հավելվածում։

30. «Գութանը հաց եմ բերում». *Արխիվում այս երգի մշակման վեց օրինակ կա՝ ձեռագիր № 479, 509, 401, 399 և 553։ Բացի վերջինից, որը Մ. Բաբայանի ընդօրինակումն է, բոլոր ձեռագրերն էլ մատիտով կամ թանաքով ուղղումներ և փոփոխություններ են կրում, այնպես որ դրանցից ոչ մեկը երգի վերջնական մշակում չի կարող համարվել։*

№ 479, 509 և 399 ձեռագրերում երգի տոնայնությունը տպագրվածից մեկ տոն բարձր է. № 401-ում՝ մեկ տոն ցածր, Մ. Բաբայանի արտագրածում տպագրվածի տոնայնությունն է։ № 399 ձեռագրում թեև երգի մոտ թվական չկա գրված, բայց պարզ է, որ այս երգի ներդաշնակումն էլ (տվյալ օրինակը) կատարված է 1911 թ. օգոստոսին (այդ մասին նշում կա Մ. Բաբայանի օրինակում)։

Վերոհիշյալ ձեռագրերում առանձնանում են երգի մշակման տոնալային չորս տարբեր վարիանտ։ Քանի որ եղած տվյալներով հաստատապես չի պարզվում, թե որն է

ավելի ուշ կատարվածը, իսկ բոլոր վարիանտներից համեմատաբար ավարտված է № 509 ձեռագրի 6-րդ էջի վարիանտը, ուստի դա էլ դետեղված է այս հատորի հիմնական մասում (մեկ տող իջեցված վիճակում)։ Մ. Բարթևյանի ընդօրինակածը, որից և կատարված է 1937 թ. տպագրութիւնը (չժե, անար է), դետեղված է հատորի հավելվածում։

1937 թ. հրատարակութիւնի մեջ եղած Rustico անվանումը ոչ մի ձեռագրում չկա, ըստ երևույթին խմբագրի հավելումն է։ Գեղալի նշումն ևս խմբագրինն է։ Մ. Բարթևյանի արտագրած օրինակում երգի կատարման մասին, հավանաբար Կոմիտասի ցուցմունքով, նշված է՝ «մտածող, ինքնամփոփ, խաղաղ, գոհ սրտով»։

«Դութիանը հաց եմ բերում» երգի ազգագրական վարիանտները կան Ա.ժ I, էջ 38, և ձեռագիր № 325, էջ 204 և 205։ Սրանք, ինչպես և Կոմիտասի մշակումներում եղած վարիանտները, միմյանցից փոքր տարբերութիւն ունեն, որ գլխավորապես վերաբերում է մելիզմին։ Մասրև բերված է մյուսներից առավել զտնազանվող № 725 ձեռագրի 205 էջում եղած առաջին վարիանտից հատված։



Չնայած բազմաթիվ վարիանտներին, մեներգի մշակման բոլոր ձեռագրերում էլ ձայնի պարտիան կամ թերի է գրված, կամ խոպան բացակայում է։ Ներկա հատորի համար ձայնի պարտիան վերցված է № 509 ձեռագրում եղած նվագակցութիւնից (բոլոր վարիանտներում ձայնի պարտիան նուլնութիւնամբ կրկնվում է դաշնամուրային նվագակցութիւնի մեջ), դա Ազգագրական ժողովածուում եղած վարիանտից քիչ է տարբերվում։

Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 10, № 6։ Տեմպի ցուցիչը և կատարողական նշանները ձեռագրերում չկան, այստեղ ավելացված են։

31. «Ոդբերգ». Այս երգի ազգագրական վարիանտը դետեղված է Կոմիտասի հավաքած և 1901 թվին կազմած Հայ ժողովրդական երգերի ժողովածուի «Մահերգեր» բաժնում (ձեռ. № 311)։ Մշակման մեջ ազգագրական մելոդիան պարզեցված է գլխավորապես ի հաշիվ մելիզմային հնչյունների պակասեցման։

Մշակումը, գրված 1911. 8/ը. Շենքլինում, № 399 տետրում է (էջ 24), կա և Մ. Բարթևյանի տետրում (ձեռ. № 553)։ 1937 թ. կատարված առաջին հրատարակութիւնը (չժե, անար է) սրանցից տարբերութիւն չունի, բացի մի երկու վրիպակից (7-րդ և 8-րդ տակտերում), որոնք ներկա հրատարակութիւնն մեջ ձեռագրի հիման վրա ուղղված են։ Խոսքերը 1937-ի մեջ և ձեռագրում կիսատ են, այստեղ լրացված են ազգագրական վարիանտից։ Ձեռագրում երգը մեկ տոն բարձր է, այստեղ պահպանված է տպագրվածի տոնայնութիւնը, որ ավելի հարմար է կատարման համար։

Իր տետրերից մեկում, որտեղ գետեղված է այս երգի ազգագրական վարիանտի ձևագրութիւնը, Կոմիտասը մանրամասնորեն շարադրել է երգի ստեղծման պատմութիւնը և տեղեկութիւններ է բերել նրա հերոսների մասին։ Երգը ստեղծելու համար տոհմ է ծառայել խանդի հողի վրա կատարված մի սպանութիւն։ Այս երգի մասին տես նաև հատորի նախաբանը, էջ 8։

32. «Լուսնակը ասի տակից». Բանաստեղծական տեքստը կա ՀՄԺ I, էջ 25, № 22։ Մշակումը գետեղված է 1911 թ. տետրում (էջ 28, 1911· 8/ը. Շենքլին), նաև Մ. Բարթևյանի տետրում (ձեռ. № 553)։ Այդ երկուսը և 1937 թ. կատարված առաջին հրատարակութիւնը էական տարբերութիւն չունեն, միայն տպագրվածի մեջ եղած ֆորտեպիանոյի բնագրում (և Մ. Բարթևյանի մոտ) առանձնահատկութիւնները ձայնանիշներով են գրված։ Այս հատորում վերականգնված է բնագրի շարադրութիւնը, ինչպես նաև պակսող

վերաբերյալ Կոմիտասի նշումը՝ 1937 թ. տպագրության մեջ ավելորդ նշանակված լիգանները ձեռագրի հիման վրա այստեղ հանված են։

33. «Էս գիշեր լուսնակ գիշեր». Մի նախնական էսքիզը գտնվում է Կոմիտասի ծոցատետրում (ձեռ. № 403), ամբողջական մշակումը, բայց առանց երանգանիշերի և տեմպի ցուցիչի, գետեղված է Կոմիտասի տետրում (ձեռ. № 399, էջ 30) և ունի «1911. 8/ը. Շեն-քլինց» նշումը։ Կա նաև Մ. Բաբայանի ընդօրինակություններում (ձեռ. № 553)։

Ամբողջական մշակումը, մեծ տեսակետից պարզեցված և առանց վերջին հատվածի կրկնության, տպագրված է 1939 թվին, Հ-ժ, տետր Զ. Մեներգը տպագրվում է առաջին անգամ։ Բանաստեղծական տեքստը կա ՀՄԽ I, էջ 33, № 28։

34. «Ջուր կուգա վերից սարեն». Ամբողջական մշակումը հրատարակված է 1933 թվին (Հ-ժ, տետր Զ)։ Մեներգային մշակումը հրատարակվում է առաջին անգամ, վերցված արխիվի № 407 ձեռագիր-ծոցատետրից, որտեղ Կոմիտասի նշումը կա՝ «Հիշատակ օր. Մարգարիտ Բաբայանին. Կ. Պոլիս. 14/ծբ, 1912»։ Տեմպի և չափահարի ցուցիչը ձեռագրում բացակայում է, բերված է համբակային մշակման տպագրությունից։

«Ջուր կուգա վերին սարեն»-ը կատարվելիս կցվում է «Էհօր ուրբաթ է, պաս է» երգին։ Վերջինի մեներգային մշակումը դեռևս չի հայտնաբերվել։

35. «Լե, լե, յամաճ». Մշակման բնագիրը չի հայտնաբերված։ Այստեղ բերվում է Կ. Պոլսում 1935 թ. թուրքերեն լեզվով կատարված տպագրությունից, համբակային որոշ փոփոխություններով։ Խոսքերը բերված են ըստ Ա-ժ I հատորի 61-րդ էջում եղած գրանցման։

№ 325 ձեռագիր ժողովածուում կա այդ երգի ազգագրական մի պարզ վարիանտի գրանցում, առանց խոսքի (էջ 236)։ Ազգագրական ժողովածուում գտնվող մելոդիան (բերվում է ստորև) ավելի հարուստ է։



Գոյություն ունեն նույն երգի այլ հարուստ տարբերակներ ևս։

36. «Շախկըր-շախկըր». Ամբողջական մշակումը հրատարակված է 1951 թ. (Հ-ժ, տետր Ը), մեներգային մշակման բնագիրը չի հայտնաբերված։ Այստեղ բերվում է Կ. Պոլսում 1935 թ. թուրքերեն լեզվով կատարված տպագրությունից։ Խոսքերը բերված են ըստ խմբական մշակման (ձեռ. № 404, էջ 8)։ Ամբերգի և մեներգի ներդաշնակումը սկզբունքային տարբերություն չունի։

Ազգագրական ժողովածուի բնագրում գտնվող մելոդիան (ձեռ. № 302, էջ 72, № 361) ներկայացնում է երգի 1-ին նախադասությունը միայն։ Մշակված մելոդիայի երկրորդ կեսը հավանաբար մի այլ երգից է միացված։

37. «Ծիծեռնակ». Այս երգի մելոդիական ոճը հայկական գեղջկական երաժշտության հետ ոչ մի առնչություն չունի։ Գ. Դոդոխյանի (1830–1908) հանրածանոթ ուսանողի խոսքերով հնարված քաղաքային երգ է։

Առաջին անգամ տպագրվել է 1939 թ. (Կոմիտաս. Մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ), խոշոր թերություններով և աղավաղումներով (համեմատիր, օրինակ, վերջին չորս տակտը)։ Այս հատորում տպագրվում է արխիվում պահվող Կոմիտասի ձեռագրից (№ 518), որ գրված է թանաքով մաքուր վիճակում և կրում է «1898, 25/13 փետրվար, Բեռլին» թվականը։

«Ծիծեռնակ»-ը Կոմիտասի ուսանողական տարիների մշակումներից է։

38. «Սխ, մարալ ջան». Կոմիտասի գործունեության վաղ շրջանի մշակումներից է, կատարված 1899 թվին։ Ներդաշնակության տեսակետից շատ հետու է նրա ստեղծա-

գործական հասուն շրջանի ոճից։ Այլ պատկեր է ներկայացնում նույն երգի մշակումը որպես խմբերգ, որ հրատարակվել է 1910 թվին («Ամենուն տարեցույց» 1910 թ., Մաս Գ, էջ՝ 215)։

«Ախ, մարալ ջան» մենակերգը առաջին անգամ հրատարակվել է 1939 թ. Մոսկվայում։ Այժմ տպագրվում է արխիվում պահվող Կոմիտասի ձեռագրից (№ 520), որն ունի «Բեռլին, 1899 12/1» նշումը։ Պետալի վերաբերյալ ձեռագրում եղած նշումները դուրս են թողնված, որովհետև թերի են։

Այս երգի խմբական մշակման ձեռագրերից մեկում Կոմիտասը նշել է՝ «Էրվում համ»-ը կցել»։

Միաձայն մելոդիան կա Ազգագրական ժողովածուի բնագրում (ձեռ. № 302, էջ 70, № 342)։ № 725 ձեռագիր ժողովածուում այս երգի մելոդիան մեկ անգամ գրված է առանց մելիզմի, երկրորդ անգամ՝ մշակվածին նման՝ մելիզմով։ Տեքստը կա ՀՄԽ I, էջ 30, № 25։

39. (Oror). Կոմիտասի ձայնագրած Ակնա երգերի շարքից է (№ 1)։ Որպես ազգագրական նյութ հրատարակված է առաջին անգամ 1895 թվին Էջմիածնում՝ հայկական նոտագրությամբ և երկրորդ անգամ՝ Ազգագրական ժողովածուի մեջ (էջ 75)։ Մշակման մեջ մելոդիան գլխավորապես մելիզմի տեսակետից խոշոր փոփոխություններ է կրել։

Մշակված վիճակում մենակերգը առաջին անգամ հրատարակվել է 1925 թվին (Հժե, տետր Բ), այդ հրատարակության մեջ որպես երգի մշակման տարեթիվ ցույց է տրված 1907 թիվը։

Տեխնիկական կարգի մի քանի մանր փոփոխություններով երգն արտատպվում է 1925 թվի հրատարակությունից։

40. (Մոկաց Միրզա). Հայկական ժողովրդական էպիկա-հերոսական նշանավոր երգերից մեկն է, պահպանվել է նաև Կոմիտասի կատարումով առանց նվագակցության գրված ձայնապնակում (ԴԱ Գրականության և արվեստի թանգարան)։

Ստորև բերվում է «Մոկաց Միրզա»-ի բանաստեղծական լրիվ տեքստը, վերցված Հազար ու մի խաղ»-ից (I, էջ 62, № 50)։

ՄՈԿԱՑ ՄԻՐՋԱՆ

Օրն էր ուբբաթ
Լուս ի շաբաթ,
Գնաշտ էրիր ինք Մալաքյավեն.
Թղթիկ մ'եկավ Ջըղիրու քաղքեն,
Ասին, բերին Մալաքյավեն,
Տվին ի ձեռ Մոկաց Միրզեն.
— Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն։

Ասեց, կըրդաց, քաղցրիկ լեզվեն,
Էրավ մազդեն,
Շըլեց աչքեր, կախեց չանեն,
Քազվավ կարմիր գույն երեսեն.
— Հազա՛ր ափսոս, Մոկաց Միրզեն։

Կանչեց, ասաց յուր մըշակին,—
Դնու քաշի Բոզ-Ռեզավին,
Վըրա գրեք քամքը սազաֆին,
Սաֆար կերթամ չուր Ջըղիրեն։

— Հազա՛ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Դրնաց, հասավ չուր Ջամբարեն,
Ասթուններ թափան փանջարեն,
Թափան Մոկաց Միրզի քամուշեն,
Ջըկեր յուր նման բոլոր գունեկեն։

— Հազա՛ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Դրնաց, հասավ չուր Ջըղիրեն,
Եկան, ժողվան քաղաք գըմեն,
Մոկաց Միրզեն՝
Կարժեր քաղաք գըմեն,
— Հազա՛ր ափսոս, Մոկաց Միրզեն։

Ախր չըտեսներ Կոլոտ Փաշեն.
Բաժն էր կոլոտ. բըրչամ երկեն.
Կանչեց Մոկաց Միրզեն,
Տարավ յուր օդեն։
— Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։

Առեց փարեն,
Իջավ չուխեն,
Ետու, առեց մեկ բաշըլեն,
Առեց, բերավ,
Դանակ դեղեց մեկ երեսեն,
Կամեց՝ կաժ մ' ինք կերավ,
Մեկ ետու՝ Մոկաց Միրզեն։
— Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։

Հեծավ գձին Մոկաց Միրզեն,
Քամեց մաղզեն,
Շրջավ բալակ աչքեր, կախավ լամեն,
Թափավ մըրուսեն,
Թափավ մազեր կարմիր երեսեն,
Թափավ բեղեր նազիկ պըռկեն,
Թափավ դեղին ջուր սիպտակ լեշեն։
— Բեմուրաղ կեներ, Կոլոտ Փաշեն։

Եկանք, հասանք չուր Արնկու դարեն.—
Բարով հասանք չուր Արնկու դարեն.—
Տեսանք ժուռ-ժուռ նաշը ներքուց բերեն։
— Հազա՞ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։

Եկանք, հասանք չուր Բըռնաշեն.—
Բարով հասանք չուր Բըռնաշեն.—
Կուժն ու կըթեխեն կապած նաշեն՝
Պուռ-պուռ արյուն թափեր դեսեն։
— Հազա՞ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։

Խարար տարեք Մալաքյավեն.
Թող խաղա հանագեն,
Թող խաղա չանագեն։
— Հազա՞ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։

Խարար տարեք Մալաքյավեն,
Խարար տվեք Բերդի խաթունին.
Թող դա վար յուր թախեն,
Հանե թազեն, հագնե գհին,
Ինչի՞ բերդի խաթուն է էն։
— Հազա՞ր ափսոս, Մոկաց Միրզեն։
Բեմուրաղ կեներ Կոլոտ Փաշեն։
Եկանք, հասանք Մալաքյավեն.
Եկանք, մըտանք Մինաթաղ.
Մեկ հանագեն, մեկ չանագեն,
Երկուս կըխաղան էն մեկ խաղ,

Խարար տարեք ճերկաճ մերկաճ,
Թանկ Նազլուխան թող տաճ էրկաճ։

Եկան, ժողվան Մոկացիք,
Եկան մոտ Մոկաց Միրզեն.
Տարան ղըրին մեջ պողերուն,
Դուռն էլ բացին հարավ քամուն։

Կացե՛ք բարով,
Հազա՞ր տարով,
Թանկ Նազլուխան
Թող տա՛ճ էրկաճ։

Առաջին հրատարակության ծանոթագրության մեջ (ՀԺԵ, տեսր Է, 1937 թ.) ասվում է, որ այս երգը Կոմիտասն ինքն իր ձեռքով ավելացրել է Մ. Բարալյանի կատարած ընդօրինակություններին, որտեղից էլ կատարվել է երգի տպագրությունը։ Կոմիտասի արխիվային նյութերում «Մոկաց Միրզա»-ի նշած մեկ օրինակը Վ. Սարգսյանի ընդօրինակումն է, որի վրա Մ. Բարալյանի ձեռքով նշում կա՝ «Փարիզ, հուլիսի 6-ին, 1914, Մարգարիտ Բարալյանի մոտ գրված»։

«Մոկաց Միրզա»-ն, Կոմիտասի մի քանի այլ երգերի նման, չի կարելի համարել ավարտված գործ։ Աչառող նվագակցությունը երգի ներդաշնակությունն լոկ նախնական նշումներն է պարունակում։ Երգի առանձին աննրում գրական խոսքի տողերը տարբեր չափի են և հետևաբար տարբեր մելոդիաներ ունեն, մինչդեռ 1937 թ. հրատարակության վարիանտում, որը և այս հատորում է բերված, միայն առաջին տան մելոդիան է գրված։ Ադգագրական մի այլ վարիանտ, նույնպես միայն մեկ տան գրի առնված, կա № 314 ձեռագրի 66 էջում։ Կոմիտասի կատարմամբ ձայնագրությունը պարունակում է երկրի առաջին երեք տունը, այդ վարիանտը տպագրված է ԱԺ II, էջ 97։

Ռ. ԱԹԱՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկ. ՍՍՌ. ԳԱ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից 5
Խմբագրի կողմից 7

ՄԵՆԵՐԴԵՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՆՎԱԴԱԿՈՒԹՅԱՄԲ

1. Հով արեք 17
2. Հարբրբան 21
3. Երկինքն ամպել է 25
4. Անառունի 27
5. Թարուն ա 34
6. Մխրանի ծառ 37
7. Բևիկը, ցոլիկը 41
8. Բևիկ, քեկե 45
9. Սար, սար 48
10. Կանչի կառնիկ 50
11. Ես սարին կուզայի 54
12. Ջինչ ու դինչ 58
13. Ալագյազ (սարն ամպել է) 60
14. Ինկի ծառ 62
15. Ալ այլուզա 64
16. Կուժն առա 69
17. Կաքավի երգը 72
18. Չեմ կրնա խաղա 75
19. Շողիկը ջան 77
20. Ջինաբ ես 80
21. Ես առուն 83
22. Ալագյազ (բարձր սարին) 85
23. Հոյ, Նազան 88
24. Թարուն 93
25. Կառնիկ 101
26 Ամպել ա կամաց-կամաց 105
27. Ես աղջիկ եմ 107
28. Երվում եմ 110
29. Տուն արի 112
30. Գութանը հայ եմ բնբում 115
31. Ողբերդ 117
32. Լուսնակը սարի տակին 119
33. Ես դիշեր լուսնակ դիշեր 122
34. Ջուր կուգա վերին սարեն 125
35. Լե, լե, յաման 127
36. Շախկըը-շուխկըը 130
37. Միծեռնակ 132
38. Ախ, մարալ ջան 136
39. Օրօր 139
40. Մոկաց Մխրդա 141

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Կուժն առա (Ա, Բ.) 147
2. Չեմ կրնա խաղա 148
3. Շողիկը ջան 149
4. Ջինաբ ես 150
5. Ես առուն (Ա, Բ, Գ, Դ, Ե) 151
6. Տուն արի 152
7. Գութանը հայ եմ բնբում 153
Հատված «Հայ քնար»-ի առաջաբանից 161
«Հայ քնար միածայն գեղջուկ երգերի» Ա տասնյակի նախաբանը 161
Հատված «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի Ա հիսնյակի ծանոթությունից 162
Հատված «Հազար ու մի խաղ» Բ հիսնյակի ծանոթությունից 162
Ծանոթագրություններ 165

СОДЕРЖАНИЕ

От Института искусств АН Арм. ССР 6

От редактора 7

ПЕСНИ ДЛЯ ГОЛОСА С Ф-П.

1. Ов арек (Дайте прохлады) 17
2. Абрбан 21
3. Еркинкн ампел э (Небо покрылось тучами) . 25
4. Антуни (Песня бездомного) 27
5. Гарун а (Весна) 34
6. Цирани цар (Абрикосовое дерево) . . . 37
7. Келер, цолер (Ходил, блистал) 41
8. Келе, келе (Шествуй, шествуй!) 45
9. Сар, сар (Горы, горы...) 48
10. Канче крунк (Кричи, журавль!) 50
11. Ес сарен куган (Я с гор возвращался) . . 54
12. Зинч у зинч (Что и что...) 58
13. Алагяз [сарн ампел а] (Алагяз [скрылся в облаках]) 60
14. Хнки цар (Ладан-дерево) 62
15. Ал айлухс (Алый мой платочек) 64
16. Кужн ара (Взяла я кувшин) 69
17. Какави ерг (Песня куропатки) 72
18. Чем крна хага (Не могу плясать) 75
19. Шогер джан 77
20. Чинар ес (Ты—чинар) 80
21. Эс арун (В ручейке) 83
22. Алагяз [барцр сарин] ([На высокой горе] Алагяз) 85
23. Ой, Назан 88
24. Гарун (Весна) 93
25. Крунк (Журавль) 101
26. Ампел а камар-камар (Сгустились тучи) . . 105
27. Ес ахчик ем (Я девушка) 107
28. Эрвум ем (Сгораю я) 110
29. Тун ари (Приди домой) 112
30. Гутаны хац ем берум (В поле обед я несу) . 115
31. Вохберг (Песня-оплакивание) 117
32. Луснак сари такин (Луна под горой) . . . 119
33. Эс гишер, луснак гишер (В эту ночь, лунную ночь) 122
34. Джур куга верин сарен (с гор бежит вода) . 125
35. Ле, ле, яман 127
36. Шахкр-шухкр 130
37. Цицернак (Ласточка) 132
38. Ах, марал джан 136
39. Орор (Колыбельная) 139
40. Мокац Мирза 141

ПРИЛОЖЕНИЯ

1. Кужн ара (Взяла я кувшин) 147
2. Чем крна хага (Не могу плясать) 148
3. Шогер джан 149
4. Чинар ес (Ты—чинар) 150
5. Эс арун (В ручейке) 151
6. Тун ари (Приди домой) 152
7. Гутани хац ем берум (В поле обед я несу) . . 153

Отрывок из предисловия к сборчику „Ай кнар" (Армянская лира) . . . . . .

Предисловие к первому выпуску сборника одноголосных крестьянских песен „Ай кнар 161

Отрывок из комментария к первому выпуску народного песенника „Азар у ми хаг" (Тысяча одна песень) . 161

Отрывок из комментария ко второму выпуску „Азар у ми хаг" 162

Комментарий 165



Հրատ. խմբագիր՝ Լ. Աստվածատրյան
Գեղ. խմբագիր՝ Ի. Բեղրոսով
Տեխ. խմբագիր՝ Ա. Մարտիրոսյան
Վերատես դող սրբագրիչ՝ Է. Ավետյան

Վ/Ֆ 02826 Պատվեր 1909 Տիրաժ 2100

Հանձնված է արտադրության 1/IX 1959 թ.
Մատրագրված է տպագրության 5/VII 1960 թ.
Թուղթ 62×94¹/₈, տպ. 24,2 մամուլ, հրատ. 18,9 մամուլ
Գինը 22 կ.

Հայկ. ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան,
Երևան, Ալավերդյան փող. № 65։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.